

ԱՃԻԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Հ - ՅՈՒՆԱ, ԱՄԵՐԻԿԱ ԵՎ ԵՎՐՈՊԱ

ՀՐԱԳԵՐԱՐԴ ՏԱՐԻԱՅ ԴՊՈՅՆԹԱՅ

Պազմարիւ Շլյուշեաւ

ԶՈՐՅԱՆ ՅԳԴՎԱՅՐԻ

Wm q s h

ԵՐՍԵՐԵՒ ԱԲԵԼՈՆ

(Ըստ Խաչնիք, Կրողերի և ուր.)

卷之三

C. W. CHAPMAN

1918

77

ԱՃԻԱՐՀԱԳՐՈՒԹԵԼՈՎՆԵԼ

91(075)

Ձ-13

ԴԱՄԱԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ ՊՐԵ

ԱՐԱ, ԱՓՐԻԿԱ, ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԱԽՏԲԱԼԻԱ

ՀԻՆԿԵՐՈՐԴ ՏԱՐԻԱ ԴԱՍԸՆԹԱՅ

Բազմարիւ նկարնեով

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1004
14935

Կ Ա Զ Բ Ե Գ

ԱՐՑԱՇԵՍ ԱԲԵՎԵԱՆ

(Հայ-համապի, Կրտքերի և որ.)



Թ Ի Փ Լ Ի Ս

ԱՐԴ Ա

ԵՆԴԱԾԱՐՄ ՆԿԱՐԱԳՐԻԹԻՒՆ

ԱՍԻԱՑԻ ԴԻՐՔԸ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ.—Ասիան շատ մօտ է գտնւում մնացած աշխարհամասերին: Նա կտած է Եւրոպային, որն և կարծէք Ասիայի թերակղզին լինի: Այդ երկու աշխարհամասերի սահմաններն են համարւում: Ուրալեան լեռները, Ուրալ գետը և Կովկասեան լեռնաշղթան:

Ափրիկայի հետ Ասիան միացած է Սուէզի պարանոցով,
որի միջով փորած է Սուէզի ջրանցքը։ Աւստրալիայի հետ Ա-
սիան միացած է Մալայեան արշիպելագով։ Հիւսիսային Ամե-
րիկայից Ասիան բաժանված է Բերինգեան նեղուցով, որի լայ-
նութիւնն է հազիւ 100 վերստ։ Չմեռը, երբ այդ նեղուցը
ծածկւում է սառոյցով, Ասիան կարծէք սառցէ կամուրջով
միանում է Ամերիկայի հետ։

Ասիան ամենամեծ աշխարհամասն է: Նա $4\frac{1}{2}$ անգամ մեծ է Եւրոպայից: Ասիան բռնում է մօտաւորապէս 40 միլիոն քառակուրի վերստ տարածութիւն:

Ասիայի ամենահեռաւոր ծայրերն են. հիստորիամ - Զելիսկին հրւանդանը՝ 78⁰ հիսախային լայնութեան տակ. հարաւոր-թաւու հրւանդանը՝ 1⁰ հիսախային լայնութեան տակ. արևմտեան կողմում - Քարտ հրւանդանը՝ 25⁰ արևելեան երկայնութեան տակ (Գրինիչի միջօրէականից), իսկ արևելքում - Պեծին հրւանդանը՝ 190⁰ արևել. երսկայնութեան տակ: Ասիայի արևել. ծայրեց մինչև արևելեան ծայրը մօտ 11 հազար վերստ է, իսկ հիսախային ծայրից մինչև հարաւորը՝ 81⁰ հաստ է:

Այս միջոցին, եթե Դեմնե հրւանդ, վրայ կէսօք է, Բարս հը. վրայ զես արել ծագած չէ լինում (ի նչ մւ): Զեփուսկին և Բուրու հրւանդ առների վրայ կէսօքը ճամփորհա միաժամանակ է լինում (ի նչ մւ): Բայց այս ինչ եթե Բուրուն հը. վրայ աբել բարձր է կանգնած լինում

U. U_μ E_η k_ω n, U₂ f_μ, T_ω n. F. q. 4-_F q m_q



Q 4020-89

հորիզոնի վրայ, նոյն այդ միջոցին Զելիւսկին հր. վրայ նա ցածր է լինում (ի ն չ ու)

ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ:—Ասիայի ափերը շատ են կը-
տրբուած ծովերով և ծոցերով: Այդ կողմից նա յետ է միայն
Եւրոպայից:

Արևելեան կողմից Ասիայի ափերը ողողում է Մեծ կամ
Խաղաղ ովկիանոսը, գոյացնելով մի շարք ծովեր. ինչպէս են՝
Բերինգեան, Օխոտի, Եապոնական, Դեղին, Արևելեան-
Չինական և Հարաւային-Չինական ծովերը: Այդ ծովերն
ովկիանոսից բաժանուած են կղզիների շղթաներով:

Հարաւում Ասիայի ափերը ողողում է Հնդկական ովկի-
անոսը, գարձեալ գոյացնելով ծովեր և մեծ ծոցեր: Նշանա-
ւոր են՝ Բենգալեան, Արաբական, Պարսից ծոցերը և
Կարմիր ծովը:

Արևմտեան կողմից Ասիայի ափերը ողողում են Ասլան-
տեան ովկիանոսի մասեր կազմող Սև և Միջերկրական ծո-
վերը:

Ասիայից հիւսիս տարածում է Հիւսիսային Ասու-
ցեալ ովկիանոսը, որ գոյացնում է միայն մի ծով՝ Կարայի-
ծովը:

Ասիայի ափերի շատ կտրտւելուց է, որ գոյացել են բազ-
մաթիւ կղզիներ և թերակղզիներ. գրանք միասին կազմում
են Ասիայի մակերեսոյթի $\frac{1}{4}$ մասը: Ամենամեծ թերակղզիները
գտնուած են հարաւում. գրանք են՝ Արաբիա, Հնդկաստան,
Հնդկաչին: Դրանցից շատ աւելի փոքր են՝ Փոքր Ասիա,
Տայմիր, Կամչատկա և Կորէա թերակղզիները:

Ասիայի կղզիները մեծ մասով ցամաքային ծագում ու-
նեն և գտնուած են գլխաւորագէս հարաւարեւեան կողմում,
մայր ցամաքից ոչ-ճեռու։ Նշանաւոր են՝ Մալայեան արշի-
պելագը (Սումատրա, Կաւա, Բորնէօ, Ճելերէս), Սա-
խալին, Եապոնական և Յէլլոն կղզիները: Ասիայի կղզինե-
րը, բոլորը միասին վերցրած, ունեն մօտաւորագէս այնչափ
տարածութիւն, որչափ միայն Արաբիա թերակղզին:

ԱՄԻԱՅԻ ՀԵՑԱԶՈՑՈՒՄԸ:—Եւրոպային Ասիան աւելի մօտ է
գտնուած, քան մի ուրիշ աշխարհամաս: Փոքր Ասիան և Միջերկրական

ծովի մօտերքը տարածւող ասիական երկիրներն ամենահին ժամանակ-
ներից համար էլն եւրոպացիներին: Հնուց ծանօթ էին նրանց հան
Արաբիան և Հնդկաստանը, որոնց հետ աւետական յարաբերութիւն
ունէին: Սակայն Ասիայի մնացած տարածութեան մասին եւրոպացի-
ները ոչ մի զաղախար չունեին նոյնիսկ 12-րդ դարում Թրիստոսից
յետոյ:

13-րդ դարի վերջում Մարկօ Պոլօ անունով իտալացի (Վե-
նետիկ քաղաքից) յայտնի վաճառական ճանապարհորդն իր հօր և
հօրեղջոր հետ կատարեց մի ուղերութիւն Միջին Ասիայով գէպի Զի-
նաստան: Այդտեղ ապրեց նա 17 տարի և յստոյ ծավալ վերադարձաւ
Եւրոպա՝ Հնդկաչինի և Հնդկաստանի ափերի մօտով: Բայս ճանապար-
հուրդութիւնը, գնալ-գալու ժամանակամիջոցը, ահեց 7 տարի:

Մարկօ Պոլօն իր ճանապարհուրդութիւնը նկարագրեց այնպէս
կենդանի և հետաքրքիր լեզով, որ շատ եւրոպացիների մէջ ցանկու-
թիւն առաջ եկաւ աւելի մօտերից և լու ճանաչելու այն հարուստ, փար-
թօմ երկիրները, որ տեսել էր Մարկօ Պոլօն: Սակայն ամենքին էլ գտ-
իեցնում էին իէ ցամաքային և թէ ծովային ճանապարհների գժւա-
րութիւնները *): Գտնել ծովային ճանապարհ գէպի Հնդկաստան, —ահա
այն հարցը, որ սկսեց զղաղեցնել եւրոպացի ծովագնացներին:

15-րդ դարի վերջում Խոլումբոսը (գարձեալ իտալացի), համոզւած
մինելով որ երկիրը գունդի ձև ունի, ճանապարհ ընկաւ Եւրոպացից
Հնդկաստան՝ Ասլանտեան ովկիանոսով միշտ գէպի արևմուտք դիմելով:
Իր ճանապարհին Կոլումբոսը գտաւ Ամերիկան, Եայց Հնդկաստան
չհասաւ:

Համարեա Կոլումբոսի հետ միաժամանակ Աւանիօդի-Գումա տ-
նունով պրոտոգալացի ծովագնացը ճանապարհ ընկաւ գէպի Հնդկաս-
տան՝ Աֆրիկայի շուրջը պատելով: Այդ ճանապարհորդութիւնն անցաւ
յաջող, —գտնեց ծովային ճանապարհը գէպի Հնդկաստան:

Շուառվ իսպանացի Մագելանը գտաւ մի երկրորդ ճանապարհ
և գէպի Հնդկաստան՝ Աշխարհի շուրջը կատարելիք իր ճանապարհոր-
դութեան միջոցին Մագելանն անցաւ Ամերիկայի հարաւով և գտաւ
գէպի Ասիա տանող ճանապարհը՝ արևելքից: Այդ ճանապարհորդութիւնն անցաւ
միջոցին գտնեցին Ֆիլիպինեան կղզիները: Դրանցից յետոյ արդէն
եւրոպացիներն սկսեցին աւելի շուտ-շուտ ծովով ճանապարհորդել գէպի
Հարաւային և Արեւելեան Ասիայի ափերը: Պորտուգալացիները և իսպա-
նացիները բազմաթիւ գաղութեար սկսեցին հիմնել Հնդկաստանում և
Հնդկական արշիպելագի կղզիներուամ: 17-րդ դարում աւելի զօրացան,

*) Ա. է. զի ջամանցըն այն ժամանակ գեռ չկաց, իսկ Աֆրիկայի շուրջն էլ զեռ ոչ
ոք ծովով չէր անցել.

գերիշխող գարձան անգլիացիները և հոլլանդացիները, որոնք իսպանացիների և պորտուգալացիների ձեռքից շատ գաղթավայրեր խլեցին: Քանի աւելի էին շատանում երոպացիների կալւածներն Ասիայում քանի աւելի էր գարգանում առևտուրը, այնչափ էլ աւելի ու աւելի էին ծանօթանում երոպացիներն Ասիայի զանազան, գլխաւորապէս ծովափնեայ մասերի հետ:

16-րդ գարում ոռւս կողակն երն անցան Ռուբալեան լեռները և գտան Սիրիաը, որի մասին մինչեւ այն ժամանակ երոպացիները բան չգիտէին: Տիրելով սկզբում արևմտեան Սիրիաին՝ կողակներն աւելի ու աւելի շարժւեցին գէպի արեելք և հասան Մեծ Ովկիանոսի ափերին: 1648 թւականին կողակ Սեմեօն Գեծնելք գտաւ Ասիայի ամենաարեեան հրաւանդանը, որն և այժմ նրա անունով է կոչւում:

Սակայն Դեմնեի գիւտը երկար ժամանակ անծանօթ էր մնում երոպային: Խուսաց Պետրոս Մեծ կայսրը դեռ չդիտէր՝ Ասիան միացած է Ամերիկայի հետ, թէ բաժանում է նրանից նեղուցով: Ահա այդ հարցի լուծումը Պետրոս Մեծը յանձնաբարեց ոուսական նաւատորմի նաւապետ Բերինգին: Հարկաւոր պատրաստութիւնները տեսնելով Պետրոպալում, Թերթեգը ցամաքային ճանապարհով դէպի ուրեելք դիմեց: Մի քանի ատրուց յետոյ նա հասաւ կամչօտկա, այնտեղ նա մի նաւ շննեց, որով և ծով գուրս եկաւ, ուսումնասիրեց այն ծովն ու նեղուցը, որոնք և այժմ նրա անունով (Բերինգիան) են կոչւում:

Այդ ժամանակներում նաև յաջողւեց Զիլիսկին անունով մի ոռւս ճանապարհորդի՝ ցամաքային ճանապարհով ճասանլ մինչեւ Ասիայի ամենաիսխային հրաւանդանը, որն և այժմ նրա անունով է կոչւում:

Այսպէս ուրեմն՝ երոպացիներին ամենից առաջ յայտնի գարձաւ Մրեմտեան Ասիան, ապա՝ Հարաւային, Արեելեան և Հիւսիսային Ասիան: Դեռ անծանօթ էր մնում Կինտրոնական Ասիան: Մարկօ Պոլո-ից յետոյ երկար ժամանակ երոպացիներից ոչ ոք չէր ճանապարհորդել այն կողմերը: Միայն 19-րդ դարի կէսերին ոռւս ճանապարհորդները հիւսիսից, իսկ անգլիացի ճանապարհորդները հարաւեց սկսեցին մուտք դործել կենտրոնական Ասիա և ուսումնասիրել այն: Մեծ ծառայութիւններ է մատուցել այդ բանում ոռւս ճանապարհորդ Պոթեւալսկին, որ չորս անդամ ճանապարհորդել է կենտրոնական Ասիա (1870—1888թ.): Նա ձեռնարկեց նաև 5-րդ ճանապարհորդութեան. սակայն նրա ոյժերը սպասուել էին արդէն, նա մեռաւ Տեան-Շան սՓրի ստորոտում:

Ներկայում էլ կան Ասիայում այնպիսի վայրեր, որտեղ դեռ ևս չեն եղել երոպացի ճանապարհորդներ,— Արաբիայի և իրանի բարձրաւանդակների խորքերը, Տիրետի, Հնդկաշինի մի քանի մասերը, նաև մեծ կղզիների խորքերը:

ՄԱԿԵՐԵՒՈՅՑԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ:— Ասիան մակերեսոյթի կազմութեամբ ամենաբարձրն է հինգ աշխարհամասերի մէջ: Ասիայում են գտնուում երկրագնդի ամենաբարձր՝ լեռները և բարձրաւանդակները: Այնտեղ են գտնուում նաև ամենաընդարձակ գաշտավայրերը: Դաշտավայրերը կազմուում են Ասիայի մակերեսոյթի ընդամենը $\frac{1}{4}$ մասը, իսկ բարձրութիւնները՝ $\frac{3}{4}$ մասը: Բարձրութիւնները տարածուում են մայր ցամսքի միջին մասում և ներկայացնուում են մի շարք բարձրաւանդակներ, որոնք ծայրերում եզերերում եղերեւում են լեռնաշղթաներով: Լեռնաշղթաների մէջ նկատելի է որոշ կանոնաւորութիւն: ամեն մի շղթայ աղեղի նմանութիւն ունի, որի դուրս ցցւած մասը նայում է կամ դէպի Մեծ, կամ դէպի Հնդկական ովկիանոսը:

Դէպի Մեծ ովկիանոսն են նայում՝ Բայկալեան, Եաբլոնովեան, Ստանովեան, Խինդան, Չինական լեռնաշղթաներն և այն:

Դուրս ցցւած մասով դէպի հարաւ (Հնդկական ովկիանոս) են նայում՝ Սայանեան, Ալտայեան, Տեան-Շան, Կուէն-Լուն, Կարակորում, Հիմալայեան, Հինդուկուշ, Հարաւային-Իրանական (Պարսկական) լեռնաշղթաները, և այլն: Ասիայի ու Երոպայի միջն է ընկնում Կովկասեան լեռնաշղթան:

Ամենից բարձր են (ոչ միայն Ասիայում, այլ և ամբողջ երկրագնդի վրայ) Հիմալայեան և Կարակորում լեռնաշղթաները: Հիմալայեան լեռնաշղթայի ամենաբարձր գագաթն է Էւերեստ, որ ովկիանոսի մակերեսոյթից համարեած $\frac{81}{2}$ վերստ բարձրութիւն ունի. Կարակորումի գագաթը՝ Գոդաբին-Օստէն՝ 8 վերստից բարձր է:

Հիմալայեան և Կարակորում լեռները ծածկւած են յաւերժական ձիւնով և սառցադաշտերով*): Այնտեղ ձեռն սահմանը գտնուում է $4\frac{1}{2}$ վերստ բարձրութեան վրայ: Շատ բարձր են նմանապէս Կուէն-Լուն, Հինդուկուշ, Տեան-Շան լեռնաշղթաները, վերջինի ամենաբարձր գագաթը՝ Խան-Տենդրի

*) Պրանից է առաջ եկել և Հիմալայյա անունը, որ նշանակում է օձեան

ունի շ վերստ բարձրութիւն։ Ալտայեան և Սայանեան լեռները համեմատաբար ցածր են, սակայն նրանց գագաթներն ևս յաւերժական ձիւնով են ծածկւած։

Այստեղ, ուր Ասիայի լեռնաշղթաները շատ են մօտենում իրար, ներկայացնում են մի շարք բարձրաւանդակներ—լեռնաշխարհներ։ Իրեկ օրինակ կարող էր ծառայել Պամիր լեռնաշխարհն (3—4 զ.) Ասիայի համարեա կենտրոնում, ուր իրար են կպչում Կարակորում, Կուէն-Լուն, Տեսմ-Շան և Հինդուկուշ լեռները։ Այդ հոյակապ լեռնաշղթաներն այնպէս են իրար մօտենում Պամիրում, որ նրանց հիմքերը միաձուլեւավ կազմում են մի հսկայական լեռնային գանդւած։

Ասիայի մի ուրիշ՝ աւելի ընդարձակ լեռնաշխարհն է Տիբետ բարձրաւանդակը։ Նա հարաւից եզերում է Հիմալայեան լեռնաշղթայով, իսկ հիւսիսից՝ Կուէն-Լուն լեռնաշղթայով։ Միջին մասում էլ Տիբետը կարաւած է բաղմաթիւ լեռնաշղթաներով, որոնք ձգւում են Հիմալայեան լեռնաշղթային զուգահեռ։ Տիբետն ամենաբարձր սարահարթն է երկրագնդի վրայ, նրա միջին բարձրութիւնը 4 վերստից աւելի է։

Տիբետը կազմում է կենտրոնական-Ասիական լեռնաշխարհի մի մասը, որ տարածում է Հիմալայեան լեռներից մինչև Սայանեան լեռները և Պամիրից մինչև Խինգան։ Կուէն-Լունից հիւսիս այդ լեռնաշխարհը շատ աւելի ցածր է, քան Տիբետում, և լեռնաշղթաներն էլ այստեղ այնչափ չեն մօտենում իրար։

Արևմաեան Ասիայում նշանաւոր են՝ Իրանի, Հայաստանի և Փոքր Ասիայի բարձրաւանդակները։ Դրանք իրենց կազմութեամբ նման են միւս լեռնաշխարհներին, միայն թէ աւելի ցածր են։ Հայկական լեռնաշխարհից ևս, ինչպէս Պամիրից, ձգւում են լեռնաշղթաներ, դէպի արեւելք—Ելլուրս, հարաւ-արևելք—Պարսկական, հար.-արևմ.-Տաւրոս, հիւս.-արևմ.-Պոնտական լեռնաշղթաները, իսկ հիւսիսում Հայկական բարձրաւանդակին շատ մօտ է Կովկասեան լեռնաշղթան։

Ասիայի բարձրաւանդակների թւում նշանաւոր են նաև Դեկանը (Հնդկաստանում) և Արարիայի սարահարթը. դրանք

իրենց կազմութեամբ բոլորովին տարբերում են վերոցիշեալ սարահարթերից և նման են Աֆրիկայի սարահարթերին։

Ասիայի դաշտավայրերը տարածում են մայր ցամաքի ծայրերում։ Ամենամեծ գաշտավայրը գտնուում է հիւսիս-արևմուտքում։ Նրա հիւսիսային մասը կոչում է Սիրիոսի գաշտավայր և թեքւած է դէպի Հիւս։ Սասուցեալ ովկիանոսը։ Հարաւային մասը կոչում է Արալո-Կասպիական կամ Թուրանի գաշտավայր և թեքւած է դէպի Կասպից ծովը։ Այդ գաշտավայրը ծովի մօտերքը տեղ-տեղ ովկիանոսի մակերևոյթից էլ ցածր է։

Արալո-Կասպիական գաշտավայրի տեղն առաջ ծովի եղել տարածուած Ասիայի ու Եւրոպայի միջև։ Այդ ծովի մնացորդներն են Կասպից և Արալեան լճերը։ Կասպից լիճը կամ ծովը ժամանակի ընթացքում չափազանց նստել է. այսպէս որ նա այժմ ովկիանոսի մակերևոյթից նոյն իսկ 10 սաժեն ցածր է։

Ասիայի մնացած գաշտավայրերը մեծ չեն։ Նրանց տեղն առաջ ծովածոցեր են եղած։ Մեծ գետերը ըրջակայ սարերից դարերի ընթացքում հող, աւազ, տիղմ են քշել-բերել և լցըրել ծովածոցերն ու նրանցից այդպիսով գաշտավայրեր գոյացրել ։ Այդպէս են օրինակ՝ Միջագետքի գաշտավայրը, որ գոյացրել են Տիգրիս և Եփրատ գետերը, Հնդկաստանի գաշտավայրը, որ գոյացրել են Խաղոս, Փանգէս և Բրահմապուրա գետերը, և Զինական գաշտավայրը, որ գոյացրել է Դեկին գետը։

Կամչատկա թերակղզու և Մեծ ովկիանոսը ցամաքամերձ ծովերից բաժանող կղզիների վրայ կան բազմաթիւ հրաբխային լեռներ—գործող և հանգած։ Նրանք ձգւում են կամչատկայից մինչև Նոր-Գւինէա։

ԿԼԻՍԱՆ—Ասիան, չհաշւած նրա ամենաշարաւային կղզիները, ամբողջապէս գտնուում է հիւսիսային կիսագնդում։

Նա շատ մեծ է, մակերևոյթի կազմութիւնն էլ բազմազան։ այդ պատճառով ահա Ասիայի կլիման ևս բազմազան է, տարբեր մասեր միանգամայն տարբեր կլիմայ ունեն։

Նայելով կլիմային և բնութեանը՝ Ասիան բաժանուում է


5 շրջանի. 1) Հիւսիսային Ասիա, — 2) Կենտրոնական Ասիա, 3) Հարաւային Ասիա, 4) Արևելեան Ասիա և 5) Արևմտեան Ասիա:

Հիւսիսային Ասիան բռնում է ամբողջ Սիբիրը: Այդ շրջանի կլիման ցորտ է: Արեգակը շատ թոյլ է տաքացնում այդ շրջանը: Բևեռային շրջանակից հիւսիս՝ ձմեռ ժամանակ լինում է բևեռային գիշեր կամ խաւար, որի միջոցին արեգակը երկար ժամանակ չէ երևում, և երկիրը լուսաւորւում է միայն լուսնով, աստղերով և հիւսիսափայլով: Զելիւսկին հրւանդանի վրայ բևեռային գիշերը տեսում է ամբողջ 4 ամիս շարունակ: Այդ պատճառով էլ ձմեռը Հիւս. Ասիայում սոսկակի ցրտեր են լինում, սառնամանիքները յաճախ հասնում են $40-50$, իսկ Լենայի գետաբերանի մօտ՝ նոյն իոկ 70°: Հրդու սառչում է այնչափ խորը, որ ամառը միայն երեսից է հաջում: Այսպէս է ոչ միայն հեռաւոր հիւսիսում (տունդրաներում), այլ մինչև իսկ Բայկալ լճի մօտ, որտեղ արդէն անտառներ կտն: Թէպէտ ամառը Հիւսիսային Ասիայում տաք է լինում, բայց տարօայ ջերմութեան միջին աստիճանն այնուամենային շատ ցածր է, — Սիբիրի մեծագոյն մասում՝ 0° ից էլ ցածր: Հիւսիսային Ասիայի ափերը ողողում է Սառուցեալ ովկիանոսը, որտեղից շտո քիչ խոնաւութիւն է բերում: Մեծ և հնդկական ովկիանոսներից Հիւսիսային Ասիան անջատուած է լեռնաշղթաներով: Արհմուտքում Ատլանտեան ովկիանոսից նա բաժանւած է Ուրալեան լեռնաշղթայով ու Եւրոպայի մայր ցամաքով. զրա համար էլ այդ ովկիանոսից քամիների բերած մթնոլորտային տեղումները մինչեւ տեղ հասնելը զգալի չափով նւազում են: Այդ է պատճառը, որ Հիւսիսային Ասիայի կլիման ցուրտ լինելով՝ նաև չոր է:

Կենտրոնական Ասիան (այսինքն կենտրոնական-Ասիական լեռնաշխարհը) բարձր մակերեւոյթ ունի. նա հեռու է դանում ովկիանոսներից և ամեն կողմից շրջապատշաճ է բարձր լեռնաշղթաներով. զրանք չեն թողնում, որ ծովային քամիները խոնաւութիւն բերեն գէպի երկրի ներսերը: Այդ պատճառով էլ կենտրոնական Ասիայի կլիման շատ չոր է, ա-

ւելի չոր, քան Հիւս. Ասիայի կլիման: Շատ սակաւ է պատճառում, որ երկնակամարի վրայ ամպեր երևան: Այդ պատճառով էլ ամառ ժամանակ սարահարթերն անարդել է երպով տաքանում են բարձր երկնակամարում գտնուող արեգակով, բայց գիշերներն էլ նոյն արագութեամբ ցրտում են: Ցերեկները յաճախ անտառելի շոգ է լինում, իսկ գիշերները՝ սառնումանիք: Ձմեռն էլ, երբ արեգակը ցածր է թեքւած լինում, դաժան ցրտեր են անում: Այսպիսով՝ կենտրոնական Ասիայի կլիման խիստ ցամաքային է, — ձմեռները սաստիկ սանամանիքներ են լինում, իսկ ամառները՝ սաստիկ շոգեր:

Հարաւային Ասիան (այսինքն՝ Հնդկաստանը, Հընդկացինը և Մալայեան արշիպելագը), որ գտնում է մերձարևադայային շրջանում, ունի տաք կլիմայ: Ամառ ժամանակ արեգակը լինում է մարդու ուղիղ գլխավերելը և շատ սաստիկ այրում է: Նոյնիսկ ձմեռն ամիսներին արեգակը բաւական բարձրանում է երկնակամարի վրայ: Այնպիսի ձմեռները, ինչ պէս մեր երկում են, այն ամենակին չեն լինում. Երկիրը երբէք չէ ծածկւում ձիւնով: Ձմեռաւայ և ամառայ ամիսների մէջ համարեա տար-



Նկ. 2. Մթնոլորտային տեղումների բաշխութեան պատճեան: Մթնոլորտային տեղումները ցոյց են տալիս այն քամիները, որոնք ամենաշատ մթնոլորտային տեղումներ են բերում:

տեղ ամենակին չեն լինում. Երկիրը երբէք չէ ծածկւում ձիւնով: Ձմեռաւայ և ամառայ ամիսների մէջ համարեա տար-

բերութիւն չկայ*). տարւայ տաքութեան միջին աստիճանն ամեն տեղ 20 ից բարձր է:

Հարաւային Ասիայի ափերը ողողում են Հնդկական տաք ովկանոսով, որից շատ զոլորշի է բարձրանում: Այդ պատճառով էլ Ասիայի այդ մասի կլիման խոնաւ է: Մթնոլորտային տեղումներ են բերում գլխաւորապէս հարաւ - արեւմտեան մոհասոնները, որոնք ամսուային ամիսներին, երբ մայր ցամաքն աւելի շատ է տաքացած լինում քան ովկիանոսը, փըշում են ովկիանոսից գէպի մայր ցամաք: Զմեռը մուսսոնները փչում են հակառակ ուզդութեամբ — մայր ցամաքից գէպի ովկիանոս:

Արեւելեան Ասիան լու է ոռոգում. պատճառը Մեծ Ովկիանոսի մօտ լինելն է, մանաւանդ՝ այդ ովկիանոսի կուրօսիւս կոչւած տաք հոսանքը: Հարաւ-արեւմտեան մոհասոնները փչում-անցնում են յիշած տաք հոսանքի վրայով և առատութեամբ մայր ցամաք են բերում մթնոլորտային տեղումներ: Զմեռը մուսսոնները փչում են հակառակ ուզդութեամբ, այսինքն մայր ցամաքից գէպի ովկիանոս, ուստի և բերում են չորութիւն: ու ցրտութիւն:

Արեւելեան Ասիայի հիւսիսային մասում ձմեռը բաւական խիստ է լինում և երկար տեղում. սառնամանիքն այնաեղ երբեմն 20°-ի հասնում: Հարաւային մասում ձմեռը շատ աւելի մեղմ է լինում: Ամառն ամեն տեղ շոգ է լինում: Դարնանը և աշնանը, երբ մուսսոնները փոխարինում են իրար, Արեւելեան Ասիայի ափերի մօտ յաճախ տեղի են ունենում փոթորիկներ (տայֆոն), որոնք ցամաքի և ծովի վրայ մեծամեծ աւերումներ են անում: Նման փոթորիկներ միաժամանակ լինում են նաև Ասիայի հարաւային ափերի մօտ, առանձնապէս Բենգալեան ծոցում:

Արեւելեան Ասիայի և Արեւելեան Ասիայի կլիմաների մէջ ևս տարբերութիւն կայ. բայց այդ տարբերութիւնն

*) Այսպէս Սումատրայի հարաւային մասում ամենաշոգ ամաւայ տաքութեան բեղին աստիճանն է 27, իսկ ամենացուրա ամսւանը՝ 29:

այնչափ աչքի ընկնող չէ, ինչպէս Հիւսիսի և Հարաւի մէջ Սրեգակը թէ արեւելքում և թէ Սրեմուաքում հաւասարապէս է բարձրանում հորիզոնի վրայ. միայն թէ՝ Որեւելքը ողողում է հնկայական ովկիանոսով, մինչդեռ Սրեմուաքը՝ միայն Արարական, Կարմիր և Միջերկրական ծովերով: Սյն ևս կայ, որ Արևմտեան Ասիան հարևան է Ասքրիկայի չոր մասին: Բացի այդ, Արևմ. Ասիայի բարձրաւանդակները եղերւում են լեռնաշղթաներով, որոնք և յետ են պահում մթնոլորտային տեղումները: Անա այս պատճառներով էլ Արեւմտեան Ասիայի (այսինքն Իրանի, Արաբիայի և Փոքր Ասիայի) կլիման չող է: Ամառն այնտեղ սաստիկ չողեր և երաշտներ են լինում, յաճախ 50° տաք է անում: Զմեռը յաճախ անձրեներ են գալիս, և սարերի լանջերը ծածկում են ձիւնով:

ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ:— Ասիայի բոլոր մեծ զեաերն իրենց սկզբն առնում են ովկիանոսներից հեռու, կենտրոնական Ասիայի բարձրութիւններից և հոսում են զանազան ուղղութեամբ: Ասիայի գետերը մեծ մասով շատ երկայն են և ջրառատ:

Ասիայի հիւսիսային թեքւածքով գէպի Սառուցեալ ովկիանոս են հոսում հետեւեալ հշանաւոր գետերը.—Օք (Իրափշ վտակով), Ենիսէյ և Լինա: Օք գետն Իրափշ վտակի հետ միասին ամենաերկայն գետն է Ասիայում*). Նրա ջրաբաշխն էլ (այսինքն այն տարածութիւնը, որ ջուր է մատակարում գետին) ամենալընդարձակն է:

Թէպէտ Հիւսիսային Ասիայում սակաւ մթնոլորտային տեղումներ են թափւում, բայց և այնպէս նրա գետերը ջրառատ են, պատճառն այն է, որ նրանց աւագաններն ընդարձակ են, գետերի ջուրն էլ սակաւ է դոլորշիանում ցուրտ կլիմայի շնորհիւ: Այդ գետերն իրենց ընթացքի մեծ մասում հոսում են հանդարտ (ինչ ու) և յարմար են նաւարկութեան համար:

*) Եթէ Իրափշը համարենք Օքի գլխաւոր վտակը, այդ գէպքում նրա երկայնութիւնը կանէ ծ,000 վերսակցաւելի: Աւելի երկայն են երկրագնդի վրայ միայն հետեւեալ գետերը.—Միսոսիսիպի՝ Միսոսուրիի հետ (Հիւս. Ամերիկայում), նեղոս (Ափրիլյում), և Ամաղոն (Հար. Ամերիկյում):

Միայն թէ Սառուցեալ ովկիանոսը, ուր թափւում են այդ գետերը, միշտ լիքն է լինում սասցակոշաերով։ Հենց իրենք գետերն էլ տարւայ մէջ եքի բ ժամանակ սառած են լինում, իսկ զարնանը դուրս են զալիս ափերից,—երբ ձմեռւայ ընթացքում կուտակւած ձիւնը հալչում է,

Մեծ են նմանապէս այն գետերը, որնք հոսում են գէպի Մեծ կամ Խաղաղ ովկիանոս։ Դրանք են՝ Ամուր, Դեղին (կամ Հօանդ-հօ), Կապոյտ (կամ Եան-ցէ-կիանդ) գետերը։

Ամենից աւելի ջրառատ են լինում այդ գետերն ամառ ժամանակ, երբ անձրեներ շատ են զալիս. Գարնանը գետերը ջրառատ չեն լինում, որովհետև նրանց ջրաբաշխներում քիչ է ձիւն զալիս։ Այդ գետերից նաւարկութեան համար ամենայարմարն է Կապոյտ գետը. Նրա հոսանքով նոյնիսկ ովկիանոսի նաւեր կարող են բարձրանալ գետաբերանից մինչև 1,000 վերստ վեր։ Դեղին գետը, ընդհակառակը, շատ էլ նաւարկելի չէ։ Նրա պղտոր ջուրը շարունակ ահազին քանակութեամբ գեղին տիղմ է բերում և նստեցնում հունի վրայ, որից գետի ստորին հոսանքում շարունակ նորանոր ծանծաղուաներ են գոյանում։ Ժամանակ առ ժամանակ այդ գետը նոյնիսկ բոլորովին փոխում է իր հոնը. մեզնից 50 տարի առաջ Դեղին գետը չէր թափւում Պեչիլիի (Տեան-ջղինի) ծոցը, ինչպէս այժմ է, այլ Դեղին ծովը,—Կապոյտ գետի գետաբերանից ոչ հեռու*):

Հնդկական ովկիանոս թափւող գետերից ամենանշանաւորներն են՝ Բրահմապուտրա, Գանգէս, Խնդոս, Տիգրիս և Եփրատ. Դրանք բոլորը լեւներից ահազին քանակութեամբ աւագ ու տիզմ են բերում, որոնք և գետերի ստորին հոսանքում նստում են ու գոյացնում ծանծաղուաներ։ Այդ պատճառով էլ յիշած գետերը համարեա ամենին նաւարկելի չեն։ Ծովի մօտերքը նրանք գոյացնում են դելտաներ, բաժանելով մանր բազուկների, որոնք և մատչելի չեն ծովային

*) Հունը փոխելով Դեղին գետը հեղեղում է զաշտեր, գիշեր և նոյնիսկ ամբողջ քաղաքներ։ Այդ միջացին ոչնչանում են հաղթաւուր մարդիկ։

նաւերի համար։ Յատկապէս շատ բազուկներ ունի Գանգէսի և Բրահմապուտրայի գելտան։ Եյդ գելտան բանում է այնչափ տարածութիւն, որչափ՝ Թիֆլիսի, Երևանի և Կարսի նահանգները միասին։

Կենարոնական Ասիայում, նմանապէս Թուրքանի գաշտավայրում, Իրանում և Արարիայում, մինոլորաային տեղումներ քիչ են թափւում, իսկ ջուրն էլ այնչափ շատ է գոլորշիանում, որ այնտեղ հնումը եղած ծովերն այժմ ցամաքել են և գոյացել աղի լճեր։ Յիշած տեղերում ըիչ զետեր կան. եղածներն էլ մեծ մասով անապատային են, այսինքն չեն հասնում ովկիանոս, այլ կորչում են աւազուաներում և կամ թափւում են չհոսող լճեր։ Այդ գետերից ամենանշանաւորներն են՝ Սիր-Դարիա և Ամու-Դարիա, որոնք թափւում են Արալ


լճը։ Լճեր Ասիայում շատ կան։ Նրանցից ամենամեծերն են՝ Կասպից և Արալ լճերը, որոնց ջուրն աղի է. Ենուշ ջուր ունեցող լճերն Ասիայում իրենց մեծաւթեամբ յետ են մնում։ Ամերիկայի և Աֆրիկայի նոյնատեսակ լճերից՝ Դրանցից ամենամեծն է Ասիայում՝ Բայկալ լիճը ($1\frac{1}{2}$ վերատից աւելի խորութեամբ. աշխարհի ամենախոր լիճը). Արալ-օ-Կասպիական հարթութեան վրայ գտնող լճերը, մեծ մասով, հնումն այդտեղ եղած ծովի մնացորդներն են, այդ պատճառով է նրանց ջուրն աղի է.

ԲՈՒԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Ասիայի բուսականութիւնն էլ բազմազան է, ինչպէս մակերեսոյթի կազմութիւնը և կլիման։ Այդտեղ կարելի է հանդիպել բոլոր գոտիների բուսականութեան, — սկսած տունդրաներից մինչև արևադարձային անտառները։

Ասիայի հիւսիսային յուրտ մասը ծածկում են տունդրաները։ Տունդրաները տարածում են Սառուցեալ ովկիանոսի ափերին, որտեղ ձմեռը լինում է գաժան, իսկ ամառը՝ բաւական զով ու մասախրապատ. Աելի հարաւ, ուր սաստիկ ձմեռւանից յետոյ գնէ ամառը տաք է լինում, տարածում են Սիրիյի անտառները, որոնք տայզա են կոչում։ Այդ

տայգաներն ընդարձակ տարածութիւն են բանում — սկսած Ուրալեան լեռնաշղթայից մինչև Մեծ ովկիանոսի ափերը: Մարդկային ձեռքը զեռ քիչ է կպել այդ անտառներին: մի փոքր կարտած են նրանք միայն Սիբիրի երկաթուղու երկայնութեան վրայ:

Կենտրոնական Ասիան, Թուրանի դաշտավայրը և Արևմտեան Ասիան չոր կլիմայ ունեն, ուստի և ծածկւած են միապաղադ անտառներով ու տափաստաններով: Անտառներից նշանաւոր են՝ արևելքում — Գորի (Շամօ), իսկ արևմուտքում — Արարական անտառատր: Ասիական տափաստանների ու անտառների ընդարձակ գոտին տարածում է Խինդանի ստորսահից մինչև Կարմիր Ծովի ափերը և շարունակում է աւելի հեռու՝ Աֆրիկայում: Այդ գոտում անտառներ կան միայն լեռնալանջերին, նաև զետափերին գտնուող ովագիսներում:



Նկ. 3. Բուսականութեան տարածումն Ասիայում:

Հարաւաշին Ասիայում, որտեղ կլիման տաք է և ոռոգումը լաւ, աճում են արեւադարձային անտառներ: Դրանք ծածկում են Հնդկաստանի և Հնդկաշխինի ամենախոնաւ տեղերը և Մալայեան ամբողջ արշակելագոր:

Հարաւաշին Ասիայի աւելի չոր մասերում

տարածում են արևադարձային տափաստաններ, որոնք ամանն են կոչւում:

Արեւելի ան Ասիայում, այսինքն Չինական դաշտավայրի և Եալոնական կղզիների վրայ, տարածում են կանաչ և արգաւանդ դաշտեր ու փարթամ այգիներ. իսկ չինական և Եալոնական լեռների լանջերին աճում են մերձարեւադարձային անտառներ՝ մշտադաշտ ծառերով (օր. կամելիա և դափնի):

Օգտակար բոյսերով Ասիան աւելի հարուստ է, քան միւս աշխարհամասերը: Ասիայում են առաջին անգամ մարդու ձեռքով գտնւել, վայրի զրութեան մէջ, բազմաթիւ կարենոր բոյսեր, որոնք այժմ մշակում են մեծ քանակութեամբ: Այսպէս օրինակ՝ Արևմտեան Ասիայից են ծագում ցորենը, վուշը, սոխը, չարաւաշին Ասիան բրնձի, շաքարեղէզնի, բանանի, վարունդի հայրենիքն է: Արևելեան Ասիան թէյի հայրենիքն է:


ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ: - Ասիայի կենդանական աշխարհը շատ հարուստ է: Կենդանիների բազմաթեսակութեամբ Ասիան առաջին տեղն է բոնում բոլոր աշխարհամասերի մէջ: Այստեղ պատահում են Եւրոպական-Ասիական, Հնդկական, Աֆրիկական և նոյնիսկ Աւստրալիական շրջանների կենդանիներ:

Տունդրան երսում իսկ ամառ ժամանակ հաւաքւում են շատ տեսակ կենդանիներ, յատկապէս թռչուններ, որոնք անգին երամներով չարաւաշին Ասիայից չւում են գէպի Սառուցեալ Ովկիանոսի ստիերը: Այդտեղ նրանք գտնում են առատ մնունդ՝ ամեն տեսակ ձկներ ու հատապտուղներ: Կատարեալ աղատութեան մէջ և անվտանգ նրանք բազմանում են այդտեղ և աշնանը կրկին չւում են գէպի տաք երկիրներ: Զմեոր տունդրաներում սակաւաթիւ կենդանիներ են մնում՝ սպիտակ կաքաւներ, բնեռային աղէսներ, հիւսիսային եղջերուներ: Դրանք էլ մեծ մասով ձմեռը գէպի տայգա են քաշում, որտեղ ծառերը նրանց պաշտպանում են ցուրտ քամիներից:

Տայգան հարուստ է արամնազ գազաններով: Այստեղ կան բազմաթիւ սկիւններ, աղը լիններ գոյացիք, արջեր և այլն:

Արևելեան Սիբիրում են լինում աղւամաղ գազաններից ամենաթանգագինները—սամոյըներ և սպիտակ կղաքիններ։ Տայգայում շատ են լինում նաև անտառային թոչոններ—մայրի հաւեր, փայտմորիկներ և այլն։

Տափաստաններում ապրում են բազմաթիւ կրծող և սմբակատր կենդանիներ, որոնք սնուում են խոտով։ Չմեռ ժամանակ կրծողները թագնուում են որջերում ու քուն մըտնում, իսկ սմբակաւորները խոտ են ճարում ձեան տակից, որ միայն բարակ շերտով է ծածկում ասիական տափաստանները։ Առանձնապէս հարուստ է Տիբետի կենդանական աշխարհը։



Նկ. 4. Տապեր։

Նիմն աֆրիկական ծագում ունեն, օրինակ՝ բորենին, չնազայլը. Արաբիայում և տեղ-տեղ Իրանում պատահում է նոյն իսկ առիւծ։

Հարաւային Ասիայի արևադարձային անտառները և սաւանները հարուստ են բազմաթիւ և բազմազան կենդանիներով։ Այդ կենդանիներից շատերը խոտակեր են, իսկ շատերն էլ՝ գիշատիչ։ Կան այնպիսինները, որ ապրել կարող են միայն արևադարձային գոտում և անկարող են դիմանալ բա-

բեխառն, երկիրների ցըտին։ Այդպէս են, օրինակ, մարդանման կապիկները (օքանգուտանգ), հնդկական փիղը, ոնզեղ-Ջիւրը և տապիրը (հաստակաշիններ) *։



Նկ. 5. Օքանգուտանգ։

տափաստաններից են ծագում ձին և ուղարկ կենտրոնական Ասիայի տափաստաններում նրանք մինչև օրս էլ թափառում են վայրի վիճակի մէջ։

Ասիայից են ծագում նաև եղջրադար խոշոր կենդանիները, ոչխարը, այծը և խոզը։ Տիբետում և մօտակայ երկիրներում մարդուն ծառայում է նաև ընտանի կենդանիներից ամենաուժեղը—հնդկական փիղը։

*) Հար. Ասիայի գիշատիչ կենդանիներից ամենաուժեղն է բնագալեան գագուլը, կան բազմաթիւ թունաւոր օձեր, կոկորդիլոսներ և այլն. Չնայած կենդանիների բազմազանութեան՝ Հար. Ասիայում ամենեւին չկան գայլ աղւէս, շորչ արչ։



Նկ. 6. Բննդալեան վազը՝ եղեգնութեամբ:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ: — Ասիայի բնակիչների թիւն է մոտ 840 միլիոն, այսինքն ամբողջ մարդկութեան կեսից աւելին: Եւ որովհետեւ Ասիայի տարածութիւնը մօտաւորապէս 40 միլիոն քառակուսի վերստ է, կնշանակէ՝ 1 քառ. վերստի վրայ Ասիայում ապրում են միջին հաշւով 20 հոգի:

Ամենից աւելի սակաւարնակ են տունդրաները, որտեղ մարդ շատ դժւարութեամբ է կարողանում ապրուստի միջոցներ գտնել: Երկրագործութեամբ պարապել այնուեղ անհնար է: Բնաւոնի կենդանիներից ծառայում են մարդուն միայն հիւմանային եղջերուները և լծկան շները: Սակաւարնակ է նաև Սիրիի տայզան: Այդ անտառների խորքերում տեղաեղ կարելի է տեսնել թափառաշը ջիկ որսորդներ (օրինակ տունդրուներ): Միայն մեծ գետերի հոսանքի վրայ և Սիրիի երկաթուղու երկայնութեամբ ձգւած են ռուս գաղթականների գիւղեր: Մեծ աշխատանք թա-


փելով նրանք հաղիւակտրում են իսկոտ անտառները, մաքրում հողը ծառերի արմատներից և վարում այն: Սիրիի հիւմանային կէսում մէանդամայն անկարելի բան է երկրագործութեամբ պարապելը:

Ասիայի տափաստանները շատ չոք են. երկրագործութեան համար նրանք անյարմար են մեծ մասով: Այդ պատճառով էլ այնուեղ ապրում են գլխաւորապէս վաչկատուն խաշնարածներ, օրինակ՝ մոնղոլներ, կիրգիզներ,—որոնք արօտաեղեր վնարելով՝ անդադար մի վայրից ուրիշ վայր են թափառում: Իրենց հօտերն արածացնելու համար նրանց անհրաժեշտ են ընդարձակ տարածութիւններ. ուստի և յիշած տափաստանները շատ սակաւամարդ բնակութիւն ունեն:

Տափաստաններից էլ աւելի պակաս բնակութիւն կայ հաստատւած անապատներում: Այդտեղ մարդ ապրել կարող է միմիայն ո վ ա զ ի ս ն ե ր ո ւ մ:

Բոլորովին այլ բան ենք տեսնում մենք Ասիայի հարաւային եւ արեւելիան մասերում, որտեղ Ասիայի ազգաքնակութեան $\frac{5}{6}$ -ը եւ ամբողջ մարդկութեան կէսն է ապրում, և որտեղ ազգաքնակութիւնը վերին աստիճանի իսկոտ է: Հնդկաստանի Չինաստանի գաշտավայրերում ազգաքնակութեան խտութիւնը հասնում է մինչև 200 (և նոյնիսկ աւելի) մարդու՝ 1 քառ. վերստի վրայ: Այդպիսի խիտ ազգաքնակութեան պատճառը երկրի տաք, խոնաւ և արգաւանդ լինեն է, որ առատօրէն վարձատրում է մարդու ախտանքը: Անյիշատակ ժամանակներից սկսած այդտեղ ապրում են հաստատաքը և ակ երկրագործ ժողովուրդ գներ—հնդիկներ, չինացիներ և այլն:

Ասիայի ժողովուրդների մեծ մասը (500 միլ.) պատկանում է ղեղին ցեղին: Այդ ժողովուրդները կազմում են Ասիայի ամբողջ ազգաքնակութեան կէսից աւելին և գրաւում են նրա տարածութեան $\frac{3}{4}$ -ը: Դեղին ցեղին պատկանող զըլիաւոր ժողովուրդներն են—չինացիները, մոնղոլները և եավոնացիները:



Նկ. 7. Ազգաբնակութեան խտութիւնն Ասիայում:
Բնակչութիւնը թիւը 1 քառ. գերատի վրայ,

Սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդներն իրենց լեզուն նայելով բաժանուում են եկու խմբի—արհացիներ և սեմիտներ: Արիացիների թիւն են պատկանում հնդիկները, պարսկները, հայերը, ուուները և մնացած համարեա բոլոր եւրոպական ժողովուրդները: Սեմիտների թիւն են պատկանում արաբները, հրեաները (և մի քանի աֆրիկական ժողովուրդներ):

Որ և ոռաները:

Սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդներն իրենց լեզուն նայելով բաժանուում են եկու խմբի—արհացիներ և սեմիտներ: Արիացիների թիւն են պատկանում հնդիկները, պարսկները, հայերը, ուուները և մնացած համարեա բոլոր եւրոպական ժողովուրդները: Սեմիտների թիւն են պատկանում արաբները, հրեաները (և մի քանի աֆրիկական ժողովուրդներ):


Մեր ցեղն Ասիայում (40 միլ.) շատ փոքր տարածութիւն է միայն գրաւում—Հնդկաստանի հարաւում և Ցեյլոնի կղզում, որտեղ ասլրում են որաիդները:

Վերջիշել այստեղ դեղին, սպիտակ եւ սեր ցեղերի առանձնայատկութիւնները:

Զանազան ցեղերի պատկանող մի քանի ազգութիւններ Ասիայի որոշ մասերում սաստիկ խառնւել են իրար հետ: Այսպէս՝ Դեկանում և Ցեյլոնում որաիդները խառնւել են հնդիկների հետ: Փոքր Ասիայում Ցիլքերը կամ տաճիկները

(որոնք գեղին ցեղին են պատկանում) խառնւել են սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդների հետ:

Թէպէտ եւրոպացիները շատ վաղուց չեն, որ ծանօթացել են ամրող Ասիային, բայց էլի կարողացել են տիրել նրա տարածութեան մեծ մասին: Ասիայի $\frac{1}{3}$ -ից աւելին հենց Ռուսաստանին է պատկանում: Հընդկաստանն ու Հնդկաչինի մի



Նկ. 8. Ցեղերի տարածումն Ասիայում:

մասը պատկանում է Անգլիային: Հնդկաչինի մի մասը պատկանում է Ֆրանսիային, և այլն:

Եւրոպացիների կալւածները Ասիայում (նաև Աֆրիկայում, Ամերիկայում և Աւստրալիայում) կոչում են եւրոպական գաղութներ (կոլոնիա): Սիբիրն էլ կարելի է կոչել ուսական գաղութ Ասիայում: Բայց որովհետեւ նա սերտ միացած է բուն Ռուսաստանին, ուստի աւելի ճիշտ է համարել նրան ուսական կայսրութեան մի մասը:

Ասիայի անկախ պետութիւնները բռնում են այդ մայր ցամաքի տարածութեան կեսից պակասը: Նրանցից ամենաշահաւորներն են՝ Չինաստանը, Կապոնիան և Պարսկաստանը: Բացի այդ պետութիւններից՝ Թիւրքիան կամ Տաճկաստանն ևս ներկայումս սուսկ ասիական պետութիւն պիտի համարել:

ԱՐԵՒՄՏԵՇԱԿՈՒՄ

Այն բոլոր երկիրները, որոնք ընկած են Ասիայի արևմուտքում, շատ ընդհանուր կողմեր ունեն իրաբ հետ: Համարեա այդ բոլոր երկիրներն էլ բարձրաւալուակներ են, լեռնաշղթաներով եղերւած. ունեն տաք և չոր կիմայ: Բարձրաւանդակների խորքերը մեծ մասով ներկայացնում են անապատներ՝ չորս կողմը տափաստաններով: Ընդհակառակը, ծովափնեայ երկիրներում և սարերի լանջերին ձմեռ ժամանակ խոնաւութիւն շատ է լինում, ուստի և այդ շրջաններն արգաւանդ են: Պաղաքեր են նաև այն երկիրները, որը հոսում են գետեր, և որոնց շնորհիւ կարելի է լինում երկիրն արևեստական կերպով ոռոգել: Այս ըանը պահանջում է ի հարկէ շատ աշխատանք և հոգատարութիւն. զբա համար պէտք էր շինել մեծ ջրանցքներ: Հասկանալի է, որ երկրի մասին այսպէս հոգալ կարելի է միայն խաղաղ ժամանակ: Աւերիչ պատերազմները, որոնք յաճախ էին մղում հին ժամանակներն Սրեմտեան Ասիայում, կործան, և ոչնչացնում էին յիշած ջրանցքները և նման ձեռնարկները: Ներկայումս էլ շնորհիւ մշտական քայլքայիչ պայմանների, այդ երկիրներն աւերւած և ամայի են: Այդ է պատճառը, որ Արևմտեան Ասիայում մենք հանդիպում ենք այսպիսի երկիրների, որոնք ննում եղել են ծաղկած, կերպելի և միլիոնաւոր մարդկանց, — այն ինչ ներկայումս կարողանում են սնունդ տալ միայն սահմանափակ թուվ թափառաշրջիկ ցեղերի: Այսպէս է զրութիւնը մանաւանդ Միջազգետում, իսկ աւելի պահառ չափով՝ նաև ամբողջ Արևմտեան Ասիայում—Փոքր Ասիայում, Հայաստանում, Ասորիաւմ (Սիրիա), Պաղեստինում և Պարսկաստանում:

ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ:— Փոքր Ասիա թերակղին յիշեցնում է ամբողջ Ասիա մայր ցամաքը՝ փոքրացրած չափով: Այդ երկիրը բարձրաւանդակ է, շրջապատւած լեռնաշղթաներով: Հիւսիսային սահմանում ընկնում են Պոնտոսի լեռները, իսկ հարաւում Տաւրոսի լեռները:

Փոքր Ասիայի արևելեան կողմում է տարածւում Հայաստանը, որ ներկայացնում է մի լեռնաշխարհ, և որտեղ հանդած հրաբխային լեռներ շատ կան: Այդ լեռներից ամենաբարձրն է Արարատը կամ Մասիսը—ծովի մակերևոյթից 5 վերստ բարձրութեամբ: Մասիսի զագաթը ծածկւած է յաւերժական ձիւնով:

Հայաստանի նշանաւոր դետերն են՝ Տիգրիս, Եփրատ և Երասխ: Լճերից նշանաւոր է Վանայ լիճը:

Փոքր Ասիայի և Հայաստանի կլիման համեմատաբար չոր չէ: Յյդ երկիրներում բաւտիկան շատ մթնոլորտային տեղումներ են թափւում, որովհետև այնտեղ հասնում են Ստղանտեան ովկիանոսից փչող քամիները: Միայն Փոքր Ասիայի ներսերում է կլիման չոր, բայց էլի յարմար է լանջնարածութեան համար: Հայաստանի կլիման աւելի խստ է:

Գարնանը, ձիւնը հալչելուց յետոյ, Փոքր Ասիայի և Հայաստանի հողը շատ խոնաւութիւն է ծծում. այդ պատճառով էլ սարերի ստորոտներից բազմաթիւ աղբիւրներ են բղխում, հովիտներով գետակներ են հոսում: Սարերի լանջերը զարնանը ծածկւում է կանաչ խոտով, որ սակայն ամառայ սկզբում արդէն չորանում է: Անտառները քիչ կան. միայն Պոնտոս լեռների հիւսիսային լանջերը ծածկւած են կադնու և աճարի ստւերախիտ անտառներով: Աւելի հեռուն՝ հարաւում՝ տարածւում են տափաստաններ և աղուտ անապատներ: Տաւրոսի լանջերին և թէրակղու արևմտեան ծայրերում պատճառում են մշտական մրաւենիների և դափնիների ցածրիկ թփուտներ:

Հնումը Փոքր Ասիան և Հայաստանն աւելի մեծ ազգաքնար կու թիւն են ունեցել, քան այժմ: Մինչև այժմ էլ այդ երկիրներում պահել են հնութեան շատ յիշատակարաններ—տաճարների, ջրանցքների, թագաւորական գերեզմանների մնացորդներ և հին ամբողջների ու ամբողջ քաղաքների աւերակներ:

Փոքր Ասիայի ազգաբնակութեան տիբող տարր կազմում են Թիգրերը կամ տաճիկները, որոնց թիւն այլուեղ և Հայաստանում մօտ 9 միլիոնի է հասնում:

Տաճիկները նւաճեցին Փոքր Ասիան զեռ 11-րդ դարում Ք. յ., իսկ 15-րդ դարում նըանք իրենց իշխանութիւնը տարածեցին նաև Արևմտեան Ասիայի հարեան երկիրների, հէւսիս-արեկելեան Աֆրիկայի և հարաւարեկելեան Եւրոպայի վրայ: Փամանակի ընթացքում Թիգրեբան կորցրել է իր տիբագետած երկիրների մի մասը, իսկ Ասիայում այժմ բաւական երկիրների վրայ գեռ իշխում է նա: Թիւրքիային են

Խառնում հետևեալ երկիրները—Փաք Ս. Ափա, Հայտսատ (մի մասը), Միջազնոր, Ասորի (Պաղետնի հետ) և Արաբիայի մի մասը:

Տաճիկները հետևում են մահմեղական կրօնի սիննի դաւանութեան: Նրանք թէև մոնղոլական ծագում ունեն, բայց դարերի ընթացքում այնչափ խառնւել են սպիտակ ցեղին պատկանող զանազան ժողովուրդների հետ, որ ներկայումս մոնղոլական գծեր շատ քիչ կան նրանց մէջ: Տաճիկները պարապում են զլխաւորապէս երկրագործութեամբ և այզեզործութեամբ: Արտերում ցանում են ամենից շատ՝ ցորեն և գարի: Բացի հացաբոյսերից նրանք մշակում են նաև ծխախոտ և խաչխաչ: Այգեգործութեան մէջ յատկապէս խաղողի, մշակութիւնը կարեոր տեղ է բոնում: Արևմտեան մասում զարգացած է նաև թթենիների մշակութիւնը, որի հետ և կապւած է որոշ չափով տարածւած մետաքսագործութիւնը: Թերակղզու ներսերում թիւրքերը զբաղում են նաև անասնաբուծութեամբ: Յայտնի են մանաւանդ Անգորայի այծերը *), որոնք տալիս են թանգարժէք, մետաքսանման բուրդ:

Փոքր Ասիայի ծովափնեայ վայրերում և Եգիեան ծովի կղիների վրայ ապրում են յոյներ: Յոյները շատ ընդունակ են առևտրական գործերում: Նրանց ձեռքին է գտնուում Փոքր Ասիայի առևտրի մեծ մասը: Յոյները պարապում են նաև այգեգործութեամբ և սպունդ որսալով Եգիեան ծովում:

Արդիւնագործութիւնը չէ զարգացած երկրում: Ապրանքների աեղափոխութիւնը կատարեւում է մեծ մասամբ կարաւաններով: Արտահանում են զլխաւորապէս ցորեն, միրզ, ծխախոտ և բուրդ: Իսկ ներմուծում են եւրոպական գործարանային ապրանքներ:

Փոքր Ասիայի նաւահանգիստներից ամենանշանաւորն է Զմիւռնիան. գտնուում է Միջերկրական ծովի ափին. բնակիչները մեծ մասով յոյներ են, կան նաև շատ հայեր: Փոքր Ասիայի ներքին շրջանների հետ կապւած է երկաթուղու

*) Այդ այծերն ամենից շատ պահւում են Անգորա քաղաքի լըջուայքում. ուստի և կոչում են «Անգորայի այծեր»:

գծերով: Տըրապիզոն—գտնուում է Սև ծովի ափին: Սկուտարի բուֆորի ափին, Կոստանդնուպոլիսի դիմացը՝ փոքրասիական հողի վրայ:

Հայաստանում ազգաբնակութեան գլխաւոր տարրը կազմում են հայերը, որոնց թիւն այդտեղ ու Փոքր Ասիայում համարում է մօտ 2 միլիոնի: Մեծ մասը հայ լուսաւորչական դաւանութեան է հետեւում. կան նաև կաթոլիկ ու բողոքական հայեր: Հայերի մեծ մասը պարապում է երկրագործութեամբ և անասնապահութեամբ, շատերն էլ պարապում են արհեստներով և առևտրով: Հայաստանի ազգաբնակութեան զլխաւոր տարրերից են նաև տաճիկներն ու քրդերը: Քրդերը մեծ մասով թափառաշրջիկ կեանք են վարում ու պարապում են անասնապահութեամբ: շատերը զբաղմունք են դարձրել իրենց համար աւազակութիւնը: Կառավարութիւնն էլ մշտապէս հովանաւորել է դրանց:

Հայաստանի քաղաքներից նշանաւոր են Կարինը կամ Էրզրումը և Վանը:

ՄԻՋԱԳԵՏՔ:—Տիգրիս և Եփրատ գետերը գուրս գալով Հայկական Բարձրաւանդակից՝ հոսում են դէպի հարաւ մի գաշտավայրի միջով, որ գոյացել է յիշած գետերի բերած հողից և տիղմից, նրանց լիցքից: Արդ գետերի միջև ընկած գաշտավայրը, ուր նրանք աւելի ու աւելի են մօտենում և վերջը միանում իրար հետ, կոչում է Միջագետք:

Հնումը Միջագետքը, մանաւանդ նրա հարաւային մասը, խիտ ազգաբնակութիւն է ունեցել: Քրիստոսից համարեա 2000 ապրի առաջ այդտեղ գտնուում էին աշխարհի ամենազօրեղ պետութիւններից երկուսը—Ասորեստանը (Ասսիրիա) և Բարելոնիան: Վերջինիս մայրաքաղաքը, Բարելոնը, մօտ մէկ միլիոն բնակիչ է ունեցել:

Միջագետքը ծաղկած ժամանակ կտրտուած է եղել բազմաթիւ չսանցքներով, որոնցով արևեստական կերպով ջրել են գաշտերը. չնորհիւ գրա՞ արգաւանդ, բարեբեր հողը կերակրել է մեծաթիւ աղցարնակութիւն:

Սակայն հնումը ծաղկած և բարեբեր այդ երկիրն այժմ անապատ է հերկայացնում: Այստեղ առաջ ջրանցքներով ուսուզող հողի վրայ

մշակում էին փարթամ այդինքը ու արտեր. այժմ ոչնչացած են ջլրանցքները. հողն աւազոտ է ու ճահճոտ, վատառողջ և անյարմար՝ բընակութեան համար. Առաջւայ մեծ և ծաղկած քաղաքներից այժմ աւերակներ են միայն մնացել: Ճանապարհրդներին և գլուխականներին գրաւում են մանաւանդ Բաբելոնի աւերակները:

Միջազետքն այժմ շատ սակաւ բնակութիւն ունի: Բնակիչները նստակեաց արարներ են, որոնք ապրում են զետերի ափերին և ովազիսներում: Նրանք պարապում են փիւնիկեան արմաւենիների մշակութեամբ, նաև անասնապահութեամբ: Կան ընդուններ ևս, որոնք աւազակութեամբ են պարապում:

Միջազետքը ցամաքային ամենակարծ ճանապարհն է Հընդկաստանից և հարաւային Պարսկաստանից դէպի Եւրոպա. այդ պատճառով էլ մեծ է Միջազետքի առետրական նշանակութիւնը, որ աւելի ևս կմեծանոյ, երբ պատրաստ կլինի արգէն կառուցւող երկաթուղին դէպի երկրի զլիաւոր քաղաքը՝ Բաղրադ: Նշանաւոր է Միջազետքում նաև Մոսուլ քաղաքը: Երկուսն էլ գտնուում են Տիգրիսի վրայ:

ԱՐԱԲԻԱ:—Արաբիան երկրագնդի ամենամեծ թերակղզին է (միայն 2 անգամ է վոքք Եւրոպական Ռուսաստանից): Արաբիան ներկայացնում է մի լնդարձակ բարձրաւանդակ, բաղկացած քարակոշտերից: Իր բնութեամբ և մակերեսոյթի կազմութեամբ Արաբիան աւելի նման է Հիւսիսային Աֆրիկայի, քան ևս այ բարձրաւանդակներին: Արաբիայի մեծագոյն մասը գտնուում է տաք գօտում և ներկայացնուում է աւազոտ անապատ, մանաւանդ հարաւային մասը: Գետեր համարեաթէ չկան այնտեղ: Անձրև զալիս է սակաւ, այն էլ միայն բարձր փայլերում: Եղած ովազիսներն ևս շատ քիչ են:

Միայն ծովափնեայ մասերումն է բաւարար չափով անձրև գալիս. այդ սեղերում էլ միայն կարելի է մշակել հողը,—ի հարկէ արեստական կերպով ջրելուց յետոյ: Այսպիսով Արաբիայի ամենալաւ երկրամասերն են կազմում Հեջաս և Եմեն (կամ Երջանիկ Արաբիա), — և արմիք ծովի ափին:

Այդտեղ, սարերի լանջերին, տարածւում են լաւ արօտ առ եղ եղ երը. մշակութիւն են նաև փիւնիկեան արմաւենիներ, ակացիսներ (որոնք տալիս են խէժ—գումմի արաբիկ) և սուրճի թփեր: Սարերից հոսող գետակների հովիտներում մշակում են նաև այդ ին եր ու արտ եր:

Արաբիայի բնակիչների՝ արաբների (մօտ $3^{1/2}$ միլ.) միմասը նստակեաց է, իսկ ուրա մասը՝ վաչկատուն: Վերջինները կոչւում են ըեղովիննեղ, որոնք պարապում են անասնապահութեամբ: Նրանք պահում են ծիերի, ուղտերի և ոչխարների ամենալավացիր տեսակները: Ցայտանի է ամեն տեղ արաբական ծիան՝ միան: Բեղուինները յաճախ յարձակւում են անապատով անցնող կարաւանների վրայ և ասպատակում նստա-




Նկ. 9. Բեղուիններ. Արանց բնակատանը և տորազու ձևաբար մօտենաւ են անձանօթձիւններ (գարձեալ բնակութներ):

կեաց արաբների դիւզեր: Նստակեաց արարներն ապրում են գետակների ափերին կամ ովազիսներում: Նրանք պարապում

են փիւնիկեան արմաւենիներ և սուրճի թուփ մշակելով. մշակում են նաև բըինձ և ուրիշ հացաբոյսեր,—ի հարկէ արւետական կերպով հողը ջրելով. Արաբիայում այնչափ շատ սուրճ է արտադրւում, որ արտահանւում է նոյն խիլ Եւրոպա:

Արաբները պատերազմասէր և քաջ ժողովուրդ են: Դ-րդ դարում Ք. յ. նրանց մէջ դուրս եկաւ Մահմեդ մարգարէն և հիմք դրեց մահմեդական կրօնին: Այդ կրօնն արաբները զէնքի ոչ ժողով տարածեցին Արևմտեան Ասիայում և Հիւս. Աֆրիկայում: Սակայն արաբների զօրութիւնը տեսական չեղաւ. Նրանք ընկան քիւրերի իշխանութեան տակ, որոնք տիրեցին նոյնիսկ Արաբիայի ամենալաւ մասներին՝ ձեզասին և Նմէնին: Թիւրքերի ձեռքում են այժմ նաև մահմեդականութեան հե-



Նկ. 10. Մեկկա: Քառանկիւնի ու շէնքն Է՝ Քամբա (նրա արաքեն անկիւններից մէկում գտնուում է մահմեդականութեան սրբութիւնը—«սկ քարը»):

տևեալ երկու սրբազն քաղաքները—Մեկկա, Մահմեդի ծննդավայրը, և Մեդինա, որտեղ գտնուում է նրա գերեզմանը:

Արաբներն ընդունակ ժողովուրդ են: Նրանք միջին դարերում հիմնեցին խոշոր պետութիւններ Արևմ. Ասիայում և Հիւս. Աֆրիկայում ու ամենաառաջադէմ ժողովուրդներից մէկն էին. ունէին հարուստ գրականութիւն, ընտիր բանաստեղծութիւն և նշանաւոր հաստատութիւններ:

Մահմեդական կրօնը, որ Արաբիայից դուրս եկաւ, ներկայումս մօտ 200 միլիոն հետևողներ ունի: Նա բաժանուում է երկու դաւանութեան—պիւնին և օբա: Առաջին դաւանութեան հետեւողները բա-

ցի դուրանից ընդունում են նաև զանազան կանոններ ու աւանդութիւններ, որոնք հաւաքալել և պահել են Մահմեդի մահմանից յետոյ: Եփա դաւանութեան հետեւողներն ընդունում են միմիայն Ղուրանը: Արևմտեան Ասիայի մահմեդականներից շիային են հետեւում զարսիկները և Ատրպատականի թուրքերի (թաթարների) մեծ մասը: Մնացած մահմեդականները սիւննի են:

Աշխարհի բոլոր կողմերում ապրող մահմեդականներն ամեն օր աղօթելիս իրենց երեսը գարձնում են դէպի Մեկկա, Մահմեդի ծննդավայրը: Տարեկան 100 հազար հոգուց աւելի մարդիկ ուխտ են գնում Մեկկա, աղօթում Քամբա սրբավայրում և ծունը զնելով ու քարին՝ հաջի դառնում: Աև քարը մահմեդականների գլխաւոր սրբութիւնն է համարում, որ, նրանց հաւատով, երկնքից է բերեած Գաբրիէլ հրեշտակապետի ձեռքով: Քրիստոնեաններին արգելում է, մահման երկիւրով, Մեկկա մտնել: Մինչև այժմ ոյնտեղ եղել են միայն սակաւաթիւնուպացի ճանապարհորդներ: Մեկկայի նաւահանգիստն է՝ Զիգդա:

Արաբիայի խորքերը շատ բիչ են ուսումնասիրաւած: Նրա հարաւ-արևմտեան անկիւնը գրաւել են անպիացիները: Արանք այդ մասում շինել են և լաւ ամրացրել Աղէնը, որ նշանաւոր նաւահանգիստ է Եւրոպայի և Հնդկաստանի միջև երթեւեկող նաւերի համար:

Արաբիայի հարաւ-արևմտեան ծայրում ընկնում է մի արաբական փոքր պետութիւն, որ Օման է կոչւում. Նրա նաւահանգիստն է Մասկատ: Այդ պետութիւնը գտնուում է անզիգական հովանաւորութեան տակ:

Արաբիայի մասցած մասերում ապրում են արաբական մանը ցեղեր, որոնք կառավարուում են իրենց շէյխերի ձեռքով: Այդ ցեղերը յաճախ կոիւներ են մղում իրար դէմ:

ԱՍՈՐԻՔ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆ:—Ասորիքը*) և Պաղեստինը բռնուում են Միջերկրական ծովի արևելեան ափը և ներկայացնում են մի տեսակ շարունակութիւն Արաբիայի բարձրաւանդակի, բաղկացած են քարակոշերից: Միջերկրական ծովի ափով սակայն, հիւսիսից դէպի հարաւ, ընկած է Լիբանան լեռնաշղթան (3 վեր.), որ մի լինգարձակ և երկայնաձիգ հովտով բաժանւած է արևելեան կողմն ընկած Անտիլիբանան լեռնաշղթայից:

*) Ասորիքը (Սորիա) չպէտք է շփոթել Ասորեստանի հետ (Ասսիրիա), որ հին աշխարհի ամենազօրեղ պետութիւններից մէկն էր (Միջազերութում):

Լիբանանի և Անտիլիբանանի միջև ընկած ընդարձակ հովտով է հոսում Յորդանան գետը, որ թափւում է Մեռեալ ծովը*) (որ 190 սաժեն ցածր է ովկիանոսի մակերեսյթից):


Ասորիքի և Պա-

ղեստինի բնակիչները մեծ մասով արարներ և ցեղակից ասորիներն են. հրեաներն իրենց հայրենիք Պաղեստինից ցըրւել են աշխարհի բոլոր կողմերը. այժմ քիչ հրեաներ են ապրում իրենց բուն հայրենիքում: Արարների և ասորիների գլխաւոր զբաղմունքն այսօրոք ուժին է:

Այդիներում շատ լաւ աճում են՝ խաղողի որթ, արմաւենի, ձիթենի, նարնջենի: Ասորիքում, Անտիլիբանանի վեշերի վրայ, ծաղկում է և մետարսագործութիւնը: Արարները պարագում են նաև երկրագործութեամբ: Բայց որովհետ ամուն Ասորիքում և Պաղեստինում անձրեներ չեն գալիք, ուստի և ցանքը անում են աշնանը, որ արտերը ջրւեն աշնանային և ձմեռային անձրեներով: Հունածր լինում է գարնան սկզբին:

Սրհետները և առեւուրը կենտրոնացած են քաղաքներում: Ասորիքի ամենանշանաւոր քաղաքն է Դամասկոս, որ երկաթուղով միացած է Բեյրութ նաւահանգստի հետ:

*) Մեռեալ ծովը մի լեռ է, որի ջուրը շատ աւելի հացուստ է աղով, քան սովորական ծովային ջուրը. այսպէս որ այդ ջրում չեն կարսդ ապրել ոչ կենդանիներ, ոչ էլ բոյսեր, զբանամար էլ կոչւում է «Մեռեալ ծով»:



Նկ. 11. Յորդանան (ամառ):

Պաղեստինի գլխաւոր քաղաքն է Երուսաղէմ (մօտ 50 հազար բնակիչ), որ երկաթուղով միացած է Եաֆֆա (Յոպպէ) նաւահանգստի հետ:



Նկ. 12. Երուսաղէմ:

Հին ժամանակներում Ասորիքը, ինչպէս և Փոքր Ասիան, ամենահարուստ և ամենաբերրի երկիրներից մէկն էր, ունէր շատ առևտրական քաղաքներ: Այժմ էլ այնտեղ ամեն մի քայլափոխի վրայ կարելի է հանգիպիկ հին քաղաքակրթութեամբ մնացորդների,—հոսմէական, արաբական և քրիստոնէական հնութիւնների աւերակների: Ներկայումս նաւահանգիստները խանգարւած են, երկրի մեծ մասն էլ ներկայացնում է անապատ, որիտեղ թափառաշրջիկ կեանք են վարում արաբ-բերդուինները: Միայն Միջերկրականի ծովաքը և Անտիլիբանանի արևելեան լանջերը, որտեղ կան շատ ովազիներ, յարմար են նաև ակեանաց բնակութեան համար:

Հնումը Պաղեստինն ունեցել է մինչև 4 միլիոն բնակիչ, իսկ ներկայումս՝ 400 հազարից էլ պակաս: Յորդանանի արևելեան կողմն ընկած երկրամասը կատարեալ անապատ է, որտեղ թափառում են սակաւաթիւ բեկուիններ:

Երուսաղէմը քրիստոնեաների, հրեաների և մահմեդականների համար սրբազն քաղաք է: Ամեն տարի տասնեակ հազարաւոր քրիստոնեաններ ուխտ են զնում Երուսաղէմ: Երուսաղէմի գլխաւոր սրբու-

թիւնը Յիսուսի գերեզմանն է, որի վրայ կառուցւած է մի եկեղեցի և պատկանում է բոլոր քրիստոնէական գաւանութիւններին. այդտեղ անդադար ժամապաշտութիւն է լինում զանազան լեզուներով: Երուսաղէմում է գտնւում նաև հայկական Ս. Յակոբի վանքը, որ ունի միարանութիւն Երուսաղէմի արևելեան մասում, Սիօնի բլրի վրայ, ուր առաջ Սողոմոնի տաճարն էր գտնւում, այժմ բարձրանում է մահմեդականների սրբավայրը— Օմարի մզկիթը: Նրա մօտ է գտնւում նաև հրեաների սրբութիւնը—մի հին պատմէշ (Սողոմոնի տաճարի բեկրտը):



Նկ. 13. Յաճար Յիսուսի գերեզմանի վրայ:

Եկեղեցի և մզկիթ: Մովսիսի սարի գաղաթից հրաշտիր տեսարան է բացւում դէպի Կարմիր ծովը և Աֆրիկայի ափերը:

ԻՐԱՆ:—Հայաստանից գէպի հարաւարեկը գտնւում է Իրանի քարձրաւանդակը: Իրանը շատ աւելի մեծ է Փոքր Ասիայից և շրջապատւած է աւելի քարձր լեռնաշղթաներով: Ամենաքարձրները գտնւում են հիւսիսում—Հինդուկուշ և Էլբուրս: Էլբուրսի ամենաքարձր գաղաթն է Դեմաւենդ, որ մօտ $5\frac{1}{2}$ վերստ քարձրութիւն ունի. Նա հանգած հրաբուխ է: Իրանի արևելեան կողմում ձգւում են Սոլիմաննեան լեռները, իսկ Հնդկական ովկիսնոսի և Պարսից ծոցի ափերով— Հարաւային-Իրանական (Պարսկական) լեռները:

Իրանի կլիման չոր է (ինչո՞ւ): Ամառն այնտեղ սասարկ շոգեր են անում, լինում են երկարատև երաշտներ. երկնքում հազւադէպ են երևում ամպեր, և օգը լցւած է լինում փոշով: Զմեռ եղանակը խոնաւ ու ցուրտ է լինում, սարերի լանջերը ծածկւում են ձիւնով: Գարնանը՝ ձիւնը հալչում է, և ձեան տակից բննում է խոտ, որ սակայն շուտ է չորանում:

Անտառներ Իրանում աճում են միայն էլքուրսի հիւսիսային լանջերին, որտեղ մթնոլորտային տեղումներ շատ են թափւում. անտառներ կան նաև Հինդուկուշի հովիաններում: Իսկ Իրանի ամենալազարձակ մասն անապատ է, ծածկւած գեղին աւազով կամ աղի շերտով, որ արևի տակ փայլում է՝ ինչպէս ձիւն:

Մարդկային բնակութեան համար Իրանում ամենից յարմար են գետակների և գետերի ափերը: Սակայն այդ գետերը ջրառատ չեն, համարեա բոլորն էլ կորչում են աւագուտների և աղի ճահճուտների մէջ, ինչպէս օրինակ Հիլմենդ գետը: Բայց և այնպէս այդ գետերի ափերին կարելի է պարապել երկրագործութեամբ եւ այզեգործութեամբ, շնորհիւ գետերից՝ Ջրանցքների միջոցով բերւող ջրի, որով և արաերն արւեստական կերպով ոսովելում են: Որպէսզի ջուրը դուր տեղը չկուլուցինանայ Ջրանցքներում, Իրանի ժողովուրդները՝ պարսիկները և աֆղաններն այդ Ջրանցքները յանախ գետնի տակ են շինում, երբեմն շատ խորը, մինչև 50 սաժէն և աւելի: Այդպիսի սաորերկեայ Ջրանցքներն Իրանում կոչւում են «կանանառներ» և յաճախ ձգւում են մի քանի տասնեակ վերստ երկայնութեան վրայ:

Իրանի գաշտերում ցանում են սրինծ, ցորեն և զարի: Վերջին ժամանակներս սկսել են մշակել նուև բամբակ ու խաշիաշ: Այզիներում աճում են զեղձի և ծիրանի ծառեր, փիւնիկեան արմաւենիներ, նշենի, խաղողի որթ, և այլն: Միրգ շատ է ստացւում Իրանի այգիներից. յայտնի են Իրանի չորացրած մրգերը:

Սարերի լանջերին, որտեղ խոտ է բննում, ապրում են վաշկատուն խաշնար ծններ. զրանք լուսնում են՝ ձի:

ուղտ, ոչխար և այծ: Խոշոր եղջիւրաւոր անասունների համար իրանի արօտատեղերը յարմար չեն:

Իրանի բարձրաւանդակի վրայ գտնւում են երեք պետութիւններ—Պարսկաստան, Աֆղանիստան և Բելուջիստան:

Իրանի բարձրաւանդակի արևմտեան՝ ամենամեծ մասը բոնում է ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ, որ միայն 3 անգամ փոքր է Եւրոպական Ռուսաստանից. ունի մօտ 9 միլիոն բնակիչ: Ազգաբնակութեան մեծ մասը պարսիկներ են, որոնք սպիտակ ցեղին են պատկանում, ցեղակից են հնդիկներին և հայերին: Հիւսիսային Պարսկաստանի կամ Ասրալատականի ազգաբնակութեան գլխաւոր տարրը կազմում են թուրքերը կամ թաթարները, որոնք մոնղոլական ծագում ունեն: Տիրող կրօնը մահմեդականութիւնն է (շիա դաւանութիւն): Երկիրը կառավարում է շահը, որ համարւում է Մահմեդի խսանորդ:

Հնում Պարսկաստանն ամենազօրեղ թագաւորութիւններից մէկն է եղել, իսկ այժմ ամենայետամացներից է: Փողովուրդը ծանրաբեռնաւծ է մեծամեծ հարկերով: Շահի նշանակած պաշտօնեանները հաւաքում են ժողովրդից տուրքեր և զատում նրանց իրենց քմահաճոյքի համաձայն ձիշտ է, Պարսկաստանը մեր օրերում ձեռք բերեց սահմանադրութիւն, և այժմ թեհրանում կայ պարլամենտ (մեջիս), ուկայն երկիրը շարունակում է մնալ անբարեկարգ վիճակի մէջ: Փողովուրդը շատ աղքատ է, ապրում է թշւառ: Մշակւող հողը համարւում է սեփականութիւն շահի կամ զանազան կալւածատէրերի, որոնք իրենք են վերցնում հնձի մեծ մասը: Փողովուրդական կը թութիւն ասած բանը չկայ. եղած ուսումնարաններում էլ սովորեցնում են միայն դուր ան կարգալ Երկրում չկան նաև հաստատուն օրէնքներ: Փողովուրդը ենթակայ է պաշտօնեանների քմահաճոյքին:



Ակ. 14. Պարսկկ կեն:

Երկաթուղու միայն մէկ գիծ կայ Պարսկաստանում*: Ապրանքների տեղափոխութիւնը կատարւում է ուղարկելի և ձիերի կարաւաններով: Արտաքին առևտուրը գտնւում է օտարերկրացիների ձեռքում: Հիւսիսում զերիշխում են ուղարկերը, իսկ հարաւում՝ անգլիացիները: Ռուսները Պարսկաստանիցարտահանում են՝ բամբակ, բրինձ, չորմիբու, գորդ: Ներմուծում են՝ ճոթեղին, շաքար և գործարանային ուրիշ ապրանքներ:


Պարսկաստանի մայրաքաղաքը և ամենանշանաւոր առևտուրական կենտրոնն է՝ Թեհրան: Գտնւում է ելլուրսի փեշերի մօտ: Մարի



Ակ. 15. Պարսկական կառք:

լանջերից բաղաբը ստորերկերեայ ջրանցքների միջոցով ջուր է ստանում:

Թեհրանը հընչական է իր շուկաներով, մզկիթներով ու շահի հոյակապ ապարանքներով:



Ակ. 16. Փողոց Թեհրանում:

*.) Այս է Զուլֆա—Թաւրիդ երկաթ. ճանապարհը, որ վերջելու շինցին ուղարկելը:

Միւս քաղաքներից նշանաւոր են՝ Թաշտը, Բուշիրը, Թաւրիզը և Մեշեղը։ Թաշտի վրայով է կատարւում առևտուրը Ռուսաստանին հետ, Բուշիրի վրայով Անդլիայի հետ, Թաւրիզի վրայով՝ Տաճկաստանի հետ։ Թաւրիզն Ատրպատականի գլխաւոր ըաղաքն է, այդտեղ է նստում պարսից թագաժառանգը։ Այդտեղ կան մոտ 800 տուն հայեր, ունեն իրենց բարոցները, բարեգործական ընկերութիւնները։ Այդտեղ է նստում նաև Ատրպատականի հայոց առաջնորդը։ Մեշեղը պարսիկների սրբազն քաղաքն է, ուր ամեն տարի բազմաթիւ ուխտաւորներ են գնում Պարսկաստանի բոլոր ծազրերից և հարեան երկիրներից։ Մնացած քաղաքներից յիշատակութեան արժանի է Սպահանը—երկրի հին մայրաքաղաքը։ Այդ քաղաքի մօտ է գտնվում հայտքնակ Նոր-Ջուղան, որի բնակիչները գաղթել են Հին-Ջուղայից Շահ Աբասի օրով։ Նոր-Ջուղայում հայերն ունեն բարոցներ, բարեգործական ընկերութիւններ։ Այնտեղ է նստում Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց առաջնորդը։

— Իրանի հիւսիս-արևելեան մասը—(Հինդուկուշեռները և Պամիրի արևմտեան մասը) բոնում Աֆղանիստան տէրութիւնը, Բնակիչները կազմում են պարսիկներին ցեղակից ափառները և տաջիկները։ Աֆղանները սպիտակ ցեղին են պատկանում, բայց խասնւած են ուրիշ ժողովուրդների հետ։ Նըրանք մահմեդական են, պատերազմաէր։ Ազրում են գիւղերում և պարապում են երկրագործութեամբ ու առասնապահութեամբ։ Քաղաքներում ապրում են տեղական տաջիկները, դրանք պարսիկների և մոնղոլական ժողովուրդների խառնուրդներ։ Պարապում են արհեստներով ու առեւտրով։

Աֆղանիստանը համարեա 1 $\frac{1}{2}$ անգամ մեծ է Կովկասից, բայց բնակիչների թիւը շատ չէ (4 միլիոն)։ Երկիրը կառավարող է միին է, որ ապրում է Կարուլ մայրաքաղաքում, հնդկական սահմանին մօտ։ Միւս նշանաւոր քաղաքն է Հերատ, որ գտնվում է ռուսական սահմանին մօտ։

Իրանի բարձրաւանդակի հարաւարեկելեան մասը կոչվում է Բելուջիստան, որ պատկանում է անդիացիներին։ Բելու-

ջիստանն իրանի բարձրաւանդակի ամենաամայի, սակաւարնակ մասն է։ Բնակիչները մահմեդական են, կիսավայրենի, թափառական կեանք են վարում։ Նրանց կառավարում են իրենց խաները, որոնք այժմ ոռծիկ են ստանում Անդլիայից և ենթարկում են Հնդկաստանի անդիական փոխարքային։ Անդլիացիները երկաթուղային գծեր են անցկացրել երկրով և շինել են կւետառու ամրոցը։

ԽիւԱ ԵՒ ԲՈՒԽԱՐԱՅ։—Ամու-Դարիա գետի երկայնութեամբ ընկնում են Ռուսաստանի գերիշխանութեան տակ գտնվող երկու երկիրներ—Խիւա և Բուխարա։ Իրենց բնութեամբ նրանք յիշեցնում են Հիւսիսային իրանը։ Այդ երկիրների կլիման չոր է, ամառը շոգ է լինում, իսկ ձմեռը՝ բաւական ցուրտ։ Անտառներ քիչ կան։ Դաշտերն ու այգիներն արւետական կերպով են ոռոգում, ջրանցքներով ջուր բերում է Ամու-Դարիայից կամ ուրիշ գետերից, որոնք հոսում են Պամիրի և

Տեան-Շան սարերից։ Դաշտերում ցանում են՝ բրինձ, ցորեն, բամբակ, Այդիներում աճում են դեղձի և ծիրանի ծառեր։ Տեան-Շանի լանջերում կան լաւ արօտատեղեր, որոնք կերպարում են վաչկատուն խաշնարածների հօտերը։

Խիւայում և Բուխարայում ապրում են թուրք-թաթարական ժողովուրդներ, ինչպէս օրինակ ուզբէկներ, սարթեր, նաև տեղական տաջիկներ։ Ուզբէկները տիրող ժողովուրդ են։ Խիւայի գլխաւոր քաղաքն է Խիւա, իսկ Բուխարա՝



Ակ. 17. Բելուջիստանի խան։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻՄ

Կենտրոնական Ասիման տարածում Հիմալայեան լեռներից մինչև Սայանեան լեռները և Պամիրից մինչև Խինդան: Չորս կողմից եղերւում է լեռնաշղթաներով, ուստի և չոր է ու անտպատային, — մանաւանդ միջին մասում: Այդտեղ տարածում է Խանիսայ ցածրութիւնը, որ չինարէն է և նշանակում է «ցամաքած ծով»: Հին ժամանակներում յիրաւի այդ ցածրութիւնը ծածկւած է եղել ջրով, իսկ այժմ տնապատ է: Արեմտեան մասն աւազու, իսկ արենեան մասը քարքարոտ տնապատ է և կոչում է Թօրի կամ Շամօ: Թօրի անապատից դէպի հիւսիս ընկնում է Մանղոլական տափաստանը, ցածրիկ և նօսր խոտով ծածկւած: Գարնան այդ տափաստանը կանաչում է և ծածկւում գոյնզգոյն ծաղկներով, որ սակայն երկար չէ տեռում, ամառն սկսելուն պէս տափաստանը խանձուում է ու ծածկւում փոշով: Հողագործութեան համար Մոնղոլական տափաստանն անյարմար է, որովհետեւ չափազանց չոր է:

Մարգկային բնակութեան համար անյարմար է նմանապէս Ցիրեսը, որ ամենաքարձր լեռնաշխարհն է երկրագնդի վրայ: Ցիրետի լեռների գագաթները ծածկւած են մշտական ձիւնով, իսկ լանջերը — խղճուկ խոտով: Անտառ համարեա թէ չկայ ոչ մի տեղ: Հովհաններում կան աղի լճեր, օրինակ՝ Կուկունոր, Տենգրինոր: Կլիման էլ խիստ ցամաքային է: Զմենները սաստիկ սառնամանիքներ են լինում, մինչև 40° ցրտութիւն, ամառներն էլ սաստիկ չոգիք են անում: Կենտրոնական Ասիման բնում է ամբողջ Ասիմյի $\frac{1}{6}$ մասը, սակայն շատ նօսր բնակութիւն ունի, ընդամենը հազիւ 6 միլիոն բնակիչ: Կենտրոնական Ասիմյի մասերն են կաղմում — Ցիրես, Արևելիան Թուրքիստան և Մոնղոլիա:

ՏԻԲԵՏ: — Ցիրետի բնակիչներն են՝ մոնղոլական ծագում ունեցող տանգուաները և արիբետցիները: Տանգուանը վաշկատուն խաշնարածներ են: Բացի ոչխարից և ձիուց նորունք պահում են նաև եակ (լեռնային ցուլ): Այդ կենդանին դործ է ածւում հեծներու և բեռնակրութեան համար: Նա հեշտութեամբ կարող է սար բարձրանալ նոյն իսկ այն ժամանակ, երբ շատ ծանր բեռ ունի վրան: Տանգուաներն ապրում են ոն վրաններում, պատրաստած եակ կենդանու բըրդից:

Ցիրետցիները մեծ մասով նստակեաց կեանք են վարում: Լեռնահովաներում նրանք մշակում են զարի եւ ցորեն: ապ-

րում են քարաշէն տներում: Ցիրետցիները խառնուրդ ժողովուրդ են, մասամբ նման են մոնղոլներին, մասամբ էլ չինացիներին: Չինացիներից են փոխ առել նրանք իրենց քաղաքակրթութիւնը — տներ շինելու եղանակը, հող մշակելու ձեր, նոյն իսկ զգեստները: Իրենց միւս հարեաններից՝ հընդիկներից փոխ են առել նրանց կրօնը՝ բուդդայականութիւնը:



Նկ. 18. Լամա: Վանք Լհասայում, որտեղ ապրում է Դալայ Լաման:

Մ թւով մարգիկ, քան որնէ ուրիշ կրօնի:

Բուդդայականութիւնն առանձին և մեծ ազգեցութիւն է ունեցել Ցիրետի ազգաբնակութեան վրայ: Համարեա ամեն մի ընտանիքի միջից գուրս է կալիս մի հոգիորական: Հոգեորականները Ցիրետում կոչում են լամաներ: Ցիրետում կան բազմաթիւ վանքեր, այդ վանքերում է ապրում երկրի ամբողջ ազգաբնակութեան համարեա $\frac{1}{6}$ մասը:

Ցիրետի բնակիչների և ընդհանրապէս բուդդայա-

բուդդայական կրօնը ծագիլ է 7-րդ դարում Բիհուսուսից առաջ: Այդ կրօնի հիմնադիրն էր հնդկական մի իշխանագն՝ Մակիա-

Մունի կամ Բուդդիա անունով: Բուդդայի հետևողները հայտնացեցին Հընդկականանից և տարածուցին Կենտրոնական և Արևելեան Ասիայի ամբողջ տարածութեան վրայ: Այժմ այդ կրօնին երկրագնդի վրայ հետեւում են աւե-

կաների կրօնապետը կոչւում է Դալայ-Լամա, որ համարւում է Բուդդիայի մարմնացումը և փոխանորդն այս աշխարհի վրայ: Դալայ-Լաման և նրան շրջապատողներն են կառավարում Տիբեթը, որ սակայն գտնուում է Զինաստանի գերիշխանութեան տակ: Դալայ-Լաման ապրում է երկրի մայրքաղաքում, որ կոչւում է Լհասա:

Դալայ-Լամային երկրպագելու համար ամեն տարի հազարաւոր ուխտաւորներ են զնում Լհասա ոչ միայն Կենարոնական Ասխայից, այլ և Արևելեան ու Հարաւային Ասխայից: Բայց եւրոպացիների մոտաքը Լհասա արգելուծ է: Այդ քաղաքի մշտական բնակիչների մեծ մասը կրօնաւորներից է բաղկացած:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՈՒՐՔԵՍՏԱՆ:—Արևելեան Թուրքեստանն իր մեծութեամբ հաւասար է Եւրոպական Թուսաստանի $\frac{1}{3}$ -ին, սակայն հազիւ մէկ միլլոնից աւելի բնակիչ ունի: Բնակիչների մեծ մասը նստակեաց կեանք է վարում, ապրում է սվագիսներում, սարերի ստորոտներում, Թարիմ և ուրիշ գետերի ափերին: Բնակիչները գլխաւորապէս թուրք-թաթարներ են: Դրանք փորել են անհամար ջրանցքներ, որոնցով և գետերից ջուր են հանում՝ իրենց դաշտերը և այգիները ուսուգելու համար: Մշակում են ընտիր ցորեն, ձմեռուկ, սեխ և զանազան մրգեր—ծիրան, դեղձ և այլն: Բայց որտեղ ջուր չէ հասնում, այնտեղ երկիրն աւազու անապատի է փոխում:


Արևելեան Թուրքեստանի ամենանշանաւոր քաղաքներն են՝ Եարկենդ և Կաշգար:

Արևելեան Թուրքեստանն ևս պատկանում է չինացիներին և կառավարում է նրանց պաշտօնեաներով:

ՄՈՆՂՈԼԻԱ:—Մոնղոլիան Արևելեան Թուրքեստանից երկու անգամ աւելի մեծ է, բայց նրանից էլ աւելի նօսր բնակութիւն ունի. բնակիչների թիւը 2 միլիոնից պակաս է: Աւագու անապատներ գտնուում են Մոնղոլիայի արևելեան մասում միայն, իսկ երկրի մեծ մասը կամ տափաստան է, շատ խղճուկ բուսականութեամբ, կամ թէ չէ ներկայացնում է քարքարոտ անապատներ:

Մոնղոլները վաչկատուն կեանք են վարում և պարա-

պում են անառնապահութեամբ—պահում են ոչխար, ձի և երկսապատ ուղար: Երբ նրանց անասուններն արածում վերեացնում են մի տեղի խոտը, նրանք քոչում են մի ուրիշ խոտաւէտ վայր: Ամառը, երբ դաշտերում չորանում է խոտը, նրանք բարձրնառում են Սայանեան, Ալտայեան և Տեան-Շան սարերի լանջերը, որտեղ ամբողջ ամառն արօտատեղերը մնում են հիւթառատ ու կանաչ:




Նկ. 19. Մոնղոլներ:

Մշտական և հաստատուն բնակավայրեր Մոնղոլիայում շատ քիչ կան: Դրանք կամ վանքեր են, որտեղ ապրում են լամաներ (բուդդայական կրօնաւորներ) և կամ փոքրիկ քաղաքներ: Երկրի գլխաւոր քաղաքն է՝ Ուրգա: Այդաեղ բուդդայական շատ վանքեր և տաճարներ կան, ուր ապրում են հազարաւոր լամաներ և նրանց կրօնապետը Մոնղոլիայում որ կոչում է որդո: Ուրգայով են անցնում թէյ փոխադրող կարաւաններ: Մոնղոլները թէյ են փոխադրում Զինաստանից Մոնղոլական սահմանակից կեախտա քաղաքի վրայով: Մինչև

վերջին տարիներս Մոնղոլիան գտնւում էր Զինաստանի գերիշխանութեան տակ, մոնղոլական իշխանները հարկ էին զնարում Զինաստանին և ձիաւոր զօրք տալիս: Ներկայումս, Թուստանի միջամտութեամբ, Մոնղոլիայում հիմնել է առանձին տէրութիւն, որ կառավարում է Յողոն՝ իշխանների աջակցութեամբ:

Մոնղոլները, որ այժմ սակաւաթիւ են, հնում եղել են մեծ և շատ պատերազմանէր աղք: Գինուրոնական Ասիայից նրանք (Իրափի գետի հովտով) մեծ հորդաներով (Խմբերով) գուրս եկան, իսուժեցին հարաւ արևելեան Եւրոպա և հարաւ արևմտեան Ասիա ու աւերեցին շատ երկիրներ, նրանք տիրեցին թուրանական և հնդկական շատ երկիրների և նոյն իսկ Ռուսաստանին: Մոնղոլները յաճախակի արշաք ւանքներ է գործում չինացիների վրայ, որոնցից և պաշտամնելու համար զրաշինեցին չինական մեծ պարիսպը, որ 2,000 վերստից ամեւի երկայնական Հատէսի^{*)}) լանջերին: Անձրեներ շատ են գալիս նաև թիւն ունի: Մոնղոլները յետոյ բռնգու այս կանութիւն ընդունիմալայեան լեռների ստորոտննրում Բենդալիայում: Այդ ցին, որ անդորրութիւն և անդործութիւն է քարոզում:



Նկ. 20 Չինական մեծ պարիսպը

Մոնղոլները յաճախակի արշաք ւանքներ է գործում չինացիների վրայ, որոնցից և պաշտամնելու համար զրաշինեցին չինական մեծ պարիսպը, որ 2,000 վերստից ամեւի երկայնական Հատէսի^{*)}) լանջերին: Անձրեներ շատ են գալիս նաև թիւն ունի: Մոնղոլները յետոյ բռնգու այս կանութիւն ընդունիմալայեան լեռների ստորոտննրում Բենդալիայում: Այդ ցին, որ անդորրութիւն և անդործութիւն է քարոզում:

Մոնղոլները ցածրահասակ են, — սկ, բիզ և զոշտ մաղերով: Նրանք իւսուսա-արևմտեան մասում ինդուսի 2 նրա վտակ Սետէջի գլուխ մեծ է: Երեսը՝ լայն, աչքերը՝ թեք:¹ Մոնղոլների դէմքի զգութեան մէջ այնչափ աչքի են ընկնոց զեղին ցեղի բոլոր առանձիւթիւնները, որ յաճախ գետեն ցեղ ասելու փոխարէն առաջատար անդամնութեան մոնղոլական ցեղ:

ՀԱՐՍԻՑՅԻ ԱՍԻՍ

Հարաւային Ասիայի մասերն են կազմում — Ճնդկաստան, Ճնդկա- և Մալայան արեփելագի կղղիները: Այդ բոլոր երկիրներն էլ մարեա ամբողջովին տաք գոտում են գտնւում: Այն մասերն են, որք արևադարձից հիւսիս են ընկած, նմանապէս ունեն արևադարձին, տաք և մեծ մասով խոնաւ կլիմայ: Ջմեռ, ինչպէս մեղնում է, յնտեղ չէ լինում: Տարւայ ամենազով եղանակն իսկ աւելի շոգ է, քան եղնում ամառը, իսկ տարւայ եղանակները որոշում են այն բանով՝ նձրեւ գալիս է, թէ ոչ:

Հարաւային Ասիան իր բնութեամբ այդ ամբողջ մայր ցամաքի մինահարուստ մասն է, ունի փարթամ, արևադարձային բուսականութիւն և շատ խիտ բնակութիւն: Այդտեղ շատ հին ժամանակներում որէն ազգաբնակութիւնը նստակեաց կեանք էր վարում, հասել էր որձր զարգացման և հիմնել մեծ պետութիւններ, որոնք յետոյ եւրոպիների իշխանութեան տակ ընկան:

ՀՆԴԿԱՍՏԱՆ: — Հնդկաստան կոչչում է այն ընդարձակ եծութեամբ համարեա հաւասար Եւրոպական Ռուսաստան: Երկիրը, որ արևելեան կողմից ողողում է Բենդալիան կով, արևմուտքից Արաբական ծովով, իսկ հիւսիսային կողման նրա սահմանն են կազմում Հիմալայեան և Սովորմանեան բնները:

Հնդկաստանը շատ հարուստ բնութիւն ունի: Ամառը համար և աւար և մատեն մուսսոնն երբ յորդ անձրեներ են երում այդտեղ: Շատ անձրեներ են գալիս մանաւանդ արևշինեցին չինական Հատէսի^{*)}) լանջերին: Անձրեներ շատ են գալիս նաև թիւն ունի: Մոնղոլները յետոյ բռնգու այս կանութիւն ընդունիմալայեան լեռների ստորոտննրում Բենդալիայում: Այդ ցին, որ անդորրութիւն և անդործութիւն է քարոզում:

Կուտրայի և նրանց վտակների լիցքից: Այդ գաշտավայրի գլուխը մեծ է: Երեսը՝ լայն, աչքերը՝ թեք:¹ Մոնղոլների դէմքի զգութեան մէջ այնչափ աչքի են ընկնոց զեղին ցեղի բոլոր առանձիւթիւնները, որ յաճախ գետեն ցեղ ասելու փոխարէն առաջատար անդամնութեան մոնղոլական ցեղ:

^{*)} Այդպէս կոչչում են Ֆեկան բարձր սարահարթի արևմ, կողմում բարձրացող հոները, Սրեւել, կողմում բարձրացող լեռները կոչչում են Արևելեան Հատէս:

Իր լաւ ոռոգման, տաք կլիմայի և արգաւանդ հողի շնորհիւ Հնդկաստանը երկրագնդի ամենասրբելրի երկիրներից մէջ է: Նրա աւելի խոնաւ վայրերում, մանաւանդ Բենգալիայուառատօրէն աճում է բրինձ. համեմատաբար պակաս խոնավայրերում աճում են՝ ցորեն, բամբակ, կորեկ, բանան և շառիչ մշակովի բոյսեր



Նկ. 21. Հիմալայեան լեռներ:

Շատ հնուց Հնդկաստանում ընդարձակ տարածութիւն ներ, մանաւանդ խոնաւ շրջաններում, ծածկւած են եղել որ և այս այս անտառներով: Այդպիսի անտառներ այժմ էլ կան Հիմալայեան լեռների լանջերին և Արևմտեան Հատէսի վրայ: Դեկանում եղած ստուաններն էլ համարեա բոլորը մշակւած գաշտեր են այժմ:

Հարուստ է Հնդկաստանի նահանգանական աշխարհը: Հնդկաստանի արօտառեղերը կերտերում են մի լիոնաւոր անասուններ, մանաւանդ սապատաւոր եղներ (զերու և գոմէշներ). Դեռ հին ժամանակներում Հնդկաստանը յայտնէր ալմաստ և մարգարիտ թանգարին քարերով: այժմ

էլ ալմաստ գտնուում է Գեկանում, իսկ մարգարիտ՝ ծովում, Յէլոնի եզերքի մօտ: Սակայն, համեմատած բուսական աշխարհի հետ, Հնդկաստանի մնացած բոլոր հարսառութիւնները երկրորդական նշանակութիւն ունեն:

Թէպէտ իր տարածութեամբ Հնդկաստանը Եւրոպական Ռուսաստանից մի քիչ էլ փոքր է, բայց այնտեղ ապրում են 300 միլիոն ընակիչներ, այսինքն՝ երկու անգամից էլ աւելի շատ, քան ամբողջ Ռուսաստանում:

Հնդկաստանի ազգաբնակութեան գլխաւոր տարրը կազմում են հնդիկները (200 միլ.), բաժանւած շատ ցեղերի:

Հնդիկները պարապում են գլխաւորապէս երկրագրծութեամբ: Խոնաւ վայրերում նրանք մշակում են մեծ քանակութեամբ ըրինձ: Դրա մշակութեան համար բաւական չեն նոյն իսկ այն յաճախակի անձրեները, որ տեղում են Բենգալիայում: Եւ այդ պատճառով էլ հնդիկները Գանգէս և ուրիշ գետերից անցկացրած ջրանցքներով ջուր են բերում և դաշտերը ոռոգում: Շնորհիւ այդ բանի էլ այնտեղ տարեկան երկու անգամ է բրնձի հունձ լինում: Աւելի արևմուտք, որտեղ պակաս անձրեն է գալիս, բրնձի բերքը տալիս է տարեկան միայն մէկ հունձ. Ինպոս գետի և նրա վատակների միջև ընկած տարածութեան վրայ հընդիկները գերազանցում են ցանել ցորեն, իսկ Դեկանի բարձրաւանդակի վրայ՝ կորեկ:

Բացի հացարոյսերից՝ Հնդիկներն իրենց գաշտերում մշակում են նաև շատ ուրիշ բոյսեր: Նրանցից ամենանշանաւորներն են՝ բամբակ, ջուտկամ և նդիկական կանեփ, որի թելերից պարան են գործում, խաշխաշ, որից պատրաստում են ափիսն:

Այգիներում տնկում են բանան և զանազան տեսակի արմատենիներ (կոկոսեան և փիւնիկեան արմաւենիներ): Հիմա-



Նկ. 22. Դրաւիդ:

լայեան և Հատէս լեռների լանջերին վերջերս սկսել են մշակել նաև թէյի տնկարաններ (պլանտացիաններ): Յէլլոն կղզին համարեա ամբողջովին ծածկւած է թէյի, սուրճի, կինամոնի (դարչին) տնկարաններով:



Նկ. 23. Հնդկուհի:

Արդիւնագործովթիմը շատ քիչ է զարգացած Հնդկաստանում: Միայն վերջերս անգլիացիներն սկսել են այնտեղ ևս գործարաններ հիմնել: Ապրանքների մեծ մասը բերում է Անգլիայից: Առևտութը մեծ է: Ամենից շատ արտահանում են՝ բամբակ—անմշակ դրութեան մէջ,—բրինձ, ցորեն, ջուտ: Այդ բոլորը արտահանում է դէպի Զինաստան:

Հնդիկները շատ աղքատ են ապրում, որ երկու գլխաւոր պատճառունի, 1) Հնդիկները թուլակազմ են, չեն կարողանում այնպէս աշխատել, ինչպէս եւրոպացիները. 2) Հնդկաստանն այնչափ շատ բնակիչների, որ ամեն մէկին հացի և պտղի հնձի մի չնչին մասն է ընկնում: Եւ երբ հունձը վատ է լինում,—իսկ այդ լինում է ամեն անգամ, երբ մուսսոններն ուշանում կամ քիչ անձրի են բերում,—այն ժամանակ արդէն Հնդկաստանում սովոր է լինում, միլիոնաւոր մարդիկ մեռնում են քաղցից:

Հնդիկների մեծ մասը հեթանոս է, հետեւմ է զլիաւորապէս բըահմայական կրօնին: Նրանց զլիաւոր աստւածն է՝ Թահմանդականդապէս պատեղագործող աստւածն է և տիեզերքի հոգին: Հնդիկները պաշտում են նաև ծառերի, սարերի, զետերի ողիների և այլն: Առանձին յարգանքի առարկայ է Գանգէս գետը, որ սըբազան է համարում, Նրա մէջ լողանալը կրօնական ծէս է: Հնդիկները սրբազան են

համարում նաև որոշ կենդանիներ, որովհետեւ հաւատում են, թէ մեռած մարդկանց հոգիները նրանց մէջ են բնակութիւն հաստատում: Հնդիկների մէջ քիչ չեն նաև մահմեղական կա և կան ներ, մանաւանդ հիւսիսարևմուտքում, իրանի սահմանի մօտ:

Հնդիկներն ընդունակ ժողովուրդ են: Հին ժամանակներում, երբ այժմեան եւրոպական ժողովուրդների նախնիքները զեռ վայրենի էին, Հնդկաստանում ծաղկում էին գիտութիւնն ու գեղարվածութեան համար: Ըստանի կանդ առաւ նրանց մտաւոր զարգացուցը. դրա գըլխաւոր պատճառը ժողովրդի կաստաների բաժանաւած լինեն էր՝ այդ կաստաները (նեղ, քարացած դասակարգերը) մինչև օրս էլ կան հընդիկների մէջ: Ամեն մի կաստա թշնամաբար է վերաբերում ուրիշ կաստայի: Բարձր կաստաներին պատկանողները, օրինակ քըրմերը (հոգկորականները) և զինւորականները և զինւորականները, առինակ երկրը, ատում են և իրենց հեռու պահում ցածր կաստաներին պատկանողներից, օրինակ երկրի առողջներից և արհեստաւորներից: Կաստաներից դուրս, ամենից ցածր, համարւում են պարիաները, որոնց մերձենալն իսկ սրբապղծութիւն է համարւում:

Հնդկաստանի հնագոյն (աւելի հին, քան հնդիկները, (ժողովրդի մնացորդներն են զրավիլները (40 միլ.), որոնք պատկանում են սկզբանին: Ապրում են թերակղու հարապարագանում: Յէլլոն կղզու բնակիչներն են՝ սինգալէզներ (ապցեղ), զրաւիդներ և սակաւ թւով վեղզաներ. սրանք կղզու նախնական բնակիչներն են, վայրենի և անձաւաբնակ:

Ներկայումս Հնդկաստանն անգլիացիների իշխանութեան տակ է գտնւում: Անգլիացիների թիւն այնտեղ 200 հազարից աւելի չէ. զրանք գլխաւորապէս պաշտօնեաներ են, վաճառականներ, զինւորականներ և այլն: Անգլիացիները կառուցում են Հնդկաստանում երկաթուղիներ, փորում են ջրանցքներ, ծաղկեցնում են առևտուրը, հիմնում են գպրոցներ, թուլացնում են կաստաների մէջ եղած հակառակութիւնը, և այլն:

Մինչև այժմ սակայն յաջող չէ անցնում նրանց կոփուր խուերայի, ժանտախտի, ճահճային տենդի (մալեարիա) դէմ: Այդ հիւանդութիւնների բոյնը Հնդկաստանն է, որտեղ ամեն տարի մի քանի միլիոն հնդիկ է մեռնում: Խոլերան շատ զոհեր է տանում զլիաւորապէս ամառը, խոնաւ ժա-


մանակ. ժանտախտը՝ ձմեռը—չոր ժամանակ, իսկ տեսդը՝ ամբողջ տարին անընդհատ:

Կառավարչական տեսակէտից Հնդկաստանը բաժանւում է նահանգների—որոնք կառավարւում են անզլիական նահանգապետներով—և առանձին պետութիւնների, ուր գեռ բոլորովին չեն կորցրել իրենց իշխանութիւնը տեղական հնդիկ իշխանները, որոնք ու աջա են կոչւում: Դրանք էլ առանց անզլիացիների ոչինչ անել չեն կարող, նրանցից են ոսճիկ ստանում: Ամբողջ Հնդկաստանի կառավարութեան գլուխ է կանգնած անզլիական փոխարքան^{*}):

Հնդկաստանի գլխաւոր քաղաքը և փոխարքայի աթոռանի նիստն է Կալկաթան: Երկու հարիւր տարի առաջ Կալկաթայի տեղը ձկնորսների մի փոքրիկ գիւղ էր, իսկ այժմ՝ ամենանշանաւոր նաւահանգիստը և ամենամեծ քաղաքն է (1,300,000 բնակիչներով) Հնդկաստանում: Անզլիացիների շնորհիւ դարձեալ՝ արագորէն մեծացաւ Բոմբեյ (800 հազար բն.):

Անզ. և Հնդկ. համեմատակ. մեծութ.: Այդ երկու նաւահանգիստների վրայով է կատարւում Հնդկաստանի համարեա ամբողջ արտաքին առևտուրը: Բաւական նշանաւոր են նաև հետեւալ նաւահանգիստները: Մադրաս, Կարաչի (ինդուս գետաբերանի մօտ) և Կոլոմբո (Ցեյլոնում): Հնդկաստանի ներսում եղած քաղաքներից շատ նշանաւոր է Բնենարէսը՝

*) Հնդկաստանը և ստհմանակից անզլիական երկիրները (Հնդկաշխինի կիւս-արեմ, և Բելուջիստանի արիել, մաս.) միտքն կոչում են Բը ի տան ակա Հ ն դ կ տ ս տ ա ն:



Նկ. 25. Բնենարէս քաղաքը:

(Պանդէսի վրայ) իբրև հնդիկների սրբազնն քաղաք: Ամեն տարի հազարաւոր ուխտաւորներ են գիմում այնաեղ[†]):

ՀՆԴԿԱԶԻՒՆ: — Հնդկաչինը լեռնու թերակղզի է. մի կողմէց ողողւում է Բենզալեան ծոցով և Մալակկայի նեղուցով, իսկ միւս կողմից՝ Հարաւային-Չինական ծովով (Սիամի և Տոնկինի ծոցեր): Թերակղզու հիւսիսային ամբողջ մասը ծածկը ած է բարձր՝ (3—4 վերստ), գժւարամատչելի լիններով, որոնք կազմում են Տիրետի լեռների շարունակութիւնը: Քանի հարաւ են գնում լեռները, այնքան էլ ցածրանում են: Լեռնաշղթաներից մէկը ձգւելով դէպէ հետու հարաւ, կազմում է Մալակկա թերակղզին:

*) Տաճարների թիւը Բնենարէսում հաշտրից անց է: Աւխտաւորները լսունութեան որբազն գետում (Պանդէսում) ասաւուեան շատ վազ: Առևան բազմութեամբ հնդկիները մանում են զղար գետը, աղօթելսդ և ծազիկները ցանելսդ զետի վրայ: Առաջ չար են տանում զետից, լսունում օւսելը, զլութը, կուրծը և թիկունը: Հիւանդներին, այժմիսկ մանամերձներին, ազգականները բերում են ոյզուեղ, օրպէսզի զետը բազէ նրանց կամ բարի վախճան առայ: Դետի տիրին բացատրում են խորոշիները, որոնց վրայ այցում են մեռմների զբանները: Այրուածների տելինը դասւմ են Պանչես, որ գետը առաջ ունի ովկիանոս:

Հարաւարեմտեան մուսսոնները ոռոգում են Հնդկաշինը աւելի լաւ, քան Հնդկաստանը։ Այդ է պատճառը, որ Հնդկաշինի լեռները բոլորն էլ ծածկւած են արևագարձարին խիտ անտառներով։ Այդ անտառներում ասպրում են վայրի փղեր, ոնդեղիւրներ, տապիրներ։ բազմաթիւ կապիկներ։ Այդ անտառները մարդկային բնակութեան համար անշարժ են, որովհետեւ շատ դժւար է մաքրել նրանց՝ հողագործութեան յարմարացնելու համար։

Լեռնաշղթաների միջև ընկած հովիտներով հոսում են հետեւալ գետերը։ Մեկնոնդ, Իրաւադի և ուրիշներ։ Այդ գետերի հովիտները շատ նեղ են, այդ պատճառով դրանք ևս անյարմար են մարդկային բնակութեան համար։ Միայն գետաբերաններից ոչ հեռու այդ հովիտները լայն են, ծածկւած արգաւանդ հողով։

Հենց այդ մասերում էլ կենտրոնացած է Հնդկաշինի ազգաբնակութեան մեծագոյն մասը։ Այդ ազգաբնակութիւնն ևս խառն է։ Արևմուտքում գերակոռում են հնդիկները, արևելքում չինացիները, իսկ հարաւում՝ մալայցիները։ Նրանք զբաղում են երկրագործութեամբ, գլխաւորապէս ըրնձի մշակութեամբ։ Շնորհիւ առատ անձեռների և բացի դրանից նաև արևեստական ռուգման, բրնձի հունձը միշտ առատ է լինում, այնպէս որ Հնդկաշինից շատ բրինձ է արտահանում ուրիշ երկրներ։

Լեռնալանջերին, արևադարձային անտառների մէջ, շատ դժւար է մշակել հողը։ այդ պատճառով էլ այդ վայրերում զիմաւոր զբաղմունքներն են անտառագործութիւնը և հանքագործութիւնը։

Համարեա ամբողջ Հնդկաշինը ելքովացիների իշխանութեան տակ է։ Նրա հիւսուարեմտեան մասը կոչւում է ԲիրՄԱ, որ պատկանում է անգլիացիներին. կառավարում է Հընդկաստանի փոխարքան։

Բիրմանի զիմաւոր նաւահանգիստը և ամենամեծ քաղաքն է Ռանգուն։ Ինչպէս միւս նշանաւոր նաւահանգիստները Հնդկաշինում, այնպէս նաև այդ նաւահանգիստը նշանաւոր է



Ակ. 26. Պեղոս:

բրնձի և արժէքաւոր փայտեղէնի արտահանութեամբ։ Անդիացիներին է պատկանում նաև Մալակայի հարաւային մասը, որի ծայրում, փոքրիկ կղզու վրայ, գտնվում է անդիական նշանաւոր Սինգապուր նաւահանգիստը, գա կայան է բոլոր այն նաւերի համար, որոնք երթեւեկում են Հնդկական և Մեծ սվկանուների միջև։

Հնդկաշինի արևելեան մասը պատկանում է Ֆրանսիային. գլխաւոր նաւահանգիստն է Սայգոն։

Հնդկաշինի կենտրոնում, Անդիայի և Ֆրանսիայի կալւածների միջև, գտնվում է ՄԻԱՄ անկալի պետութիւնը։ Նրա մայրաքաղաքը և ամենանշանաւոր նաւահանգիստն է Բանգկոկ (600 հազ. բն.)։

ՄԱԼԱՅԵԱՆ ԱՐՃԻԹԵԼԱԳԻ:— Մալայեան արշիպելագը գտնվում է Ասիայի և Աւստրալիայի միջև, կարծես մի կամուրջ լինի՝ ովկիանոսի վրայ զցած։ Նա բաղկացած է հետեւալ կղղիներից։ Մեծ-Զոնդեան խումբ (Սումատրա, Կալա, Բորնէօ, Ցելեբէս), Փոքր-Զոնդեան, Մոլուկկեան և Ֆիլիպպինեան կղղիների։ Արշիպելագի վրայ շատ կան հրաբուխներ*։

Մալայեան արշիպելագը կլիման արդ է արևագարձային է և միապաղպաղ։ Այնտեղ հաւասարապէս տաք է լինում թէ ձմեռւայ և թէ ամառւայ ամիսներին։ Մթնոլորտային տեղումներ շատ են թափում և երաշտ երբէք չէ լինում։ Այդ պատճառով էլ կղղիները ծածկւած են արևադարձային փարթամ անտառներով։

*) Սումատրայի և եւալյի միջև, Զոնդեան նեղուցում, գտնվում է կը ակատա և հրաբուխը, որ երկար ժամանակ համարւում էր հանգած։ 1883 թւականին այդ հրաբուխը ուժգին կերպով սկսեց զործել և ժայթքել։ Հրաբսի եկեանից գուրս ժայթքեց 30 փետրա բարձրութիւն ունեցող փոշու մի սիւն։ Ովկիանոսի ալիքները Սումատրա և Կալա կղղիների շատ գիւղեր ու քաղաքներ ծովի տակն արին, 40,000 մալ և Հնչացան գրանից։ Հրաբսի սաստիկ ժայթքոցը լսելի եղաւ Ցէյլոն և Ֆիլիպպինեան կղղիների վրայ։



Կ. 27. Մալացու տուն՝ ծառի վրայ:

Առ մալայցիները, որոնց անունով է Արշակելազը կոչ-

Մալայցիների մեծ մասը պրադ-
ւում է երկրագործավթեամբ, պլիա-
ւրապէս բրնձի մշակութեամբ:

Նրանք զբաղվում են նաև արմա-
ւենիների, բանանի և արքայախըն-
ձորի (անտնաս) մշակութեամբ:
Յայտնի են նաև իբրև ճարպիկ ձրկ-
ուրսներ ու ծովագնացներ:

Կղզիների ծայրերին՝ ծովափի մօտ
ապրող մալայցիները մեծ սասով մահ-
մեղական են. իսկ կղզիների խորքե-
րում ապրող կիսավայրենիները՝ կուտ-



Կ. 28. Մալայցի

Այդ անտառներն այնչափ են ի տ են, որ կապիկները կա-
րող են մեծ ճանապարհորդու-
թիւններ անել՝ մի ծառից միւս
ծառը թռչելով ու ոտքը գետ-
նին չդնելով, Ծառերն այնքան
բարձր են, որ մեր երկրի
դարաւոր կաղնիներից և մայ-
րիներից բաղկացած անտառ-
ները նրանց հետ համեմատած
կարծէք թփուտներ կամ ման-
րածառ անտառներ լինեն:
Կ են դան ի ն ե ր այդ ան-
տառներում շատ կան, մանա-
ւանդ մայր ցամաքին մօտ
գտնւող կղզիներում: Այստեղ
կան թէ վայրի փղեր, թէ
ոնդեղջիւքներ և վագրեր, և
թէ մարդանման կապիկներ:


Արշակելազի բնիկ ազ-
գաբնակութիւնը կազմում
են զեղին ցեղին պատկա-
նում է Արշակելազը կոչ-

ներ չկան Մալայեան արշիպելազի վրայ: Արշակելազի ամենամեծ
և ամենալաւ մասը պատկանում հոլլանդացիներին—Սումա-
տրա, Եւաւա, Ջելերէս, Փոքր-Զոնդեան, Մոլուկկեան
կղզիները, Բորնէօի ճարաւարելեան մասը: Հոլլանդական
այդ գաղութները 46 անգամ մեծ են բուն Հոլլանդիայից, իսկ
բնակիչների թւով՝ 7 անգամ:

Այդ բոլոր կղզ-
իների թւում ա-
մենանշանաւորն
է Եաւան: Դա
երկրագնդի ամե-
նախիտ բնակու-
թիւն ունեցող և
ամենաքերբի եր-
կիրներից մէկն է:

Գլխաւոր քաղաքը
և հոլլանդական ընդհանուր նահանգապետի աթոռանիստն է
Բատաւիա:

Բորնէօ կղզու հիւսիս—արևմտեան մասը պատկանում է
անգլիացիներին, իսկ Ֆիլիպպինեան կղզիները՝ Հիւսիսային
Ամերիկայի Միացեալ-Նահանգներին: Գլխաւոր քաղաքն է
Մանիլա:



Կ. 29. Հոլլանդայի և նրա Մալայեան կալանակների
համեմատական մեծութիւնը:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԸՍԻԾ

Արեւելեան Ասիան բնաւում է Մեծ ովկիանոսի ամբողջ ծովափը
Հնդկաշխից դէպի հիւսիս, մինչև Ստանովեան լեռները և Օխոտի ծո-
վը, նմանապէս այդ ծովափի երկայնութեամբ ձգուղ կղզիները:

Արեւելեան Ասիայում է ապրում մայր ցամաքի (Ասիայի) ամբողջ
ազգաբնակութեան կէսից աւելին, որ ամբողջապէս դեղին ցեղին է
սլատկանում: Իւնց քաղաքակրթութեամբ Արեւելեան Ասիայի ժո-
ղովուրդներն ամենահներից են, երկրագործութիւնը նրանք հասցրել
են ամենաքարձր կատարելազործութեան:

Արեւելեան Ասիայի պետութիւններից Զինասանը և Խաղաղիան
պահպաններ են իրենց ան կախութիւնը:

ԶԻՆԱՍՏԱՆ: — Զինաստան կամ «Բուն Զինաստան» կոչում
է զլիսաւոր մասը Զինական ընդարձակ պետութեան, որ տա-
րածում է Պամիրից մինչև Մեծ Ովկիանոս և Ամուրից մին-
չև Հնդկաշխն: «Բուն Զինաստանն» իր մեծութեամբ հաւասար
է Եւրոպական Ռուսաստանին, իսկ բոլոր կալւածների (Ման-
ջուրիա, Կենտրոնական Ասիա) հետ միասին առած՝ ամբողջ
Ռուսաստանի կէսին*): Զինաստանի ընակիչները 2 անգամ
աւելի են, քան Ռուսաստանի բնակիչները. — Ռուսաստանում
ապրում են ընդամենը մօտ 175 միլիոն հոգի, իսկ Զինաս-
տանում՝ մօտ 350 միլիոն, այսինքն ոչ շատ պակաս, քան
ամբողջ Եւրոպայում:

Իր բնութեամբ Զինաստանը բաժանում է երկու մասի —
հիւսիսային և հարաւային:

Հիւսիսային Զինաստանում է դաշնուում Զինական գաշտա-
վայրը, որ ծածկւած է զորշ-գեղաւուն կաւահողով (լիոսս).
շատ արդաւանդ է այդ հողը: Իսկ Հարաւային Զինաստանում
հարթութիւններ համարեա չկան. — ամեն տեղ լեռներ են,
թէպէտ ոչ բարձր: Այդ լեռների լանջերին աճում են մշտա-
դալար ծառեր: Հարաւային Զինաստանի գետինը կարմրանող
է, բաղկացած գլխաւորապէս կարմրաւուն կաւից. Զնայած
այդ հողն այնպէս արդաւանդ չէ, ինչպէս Հիւսիսային Զի-
նաստանի հողը, բայց և այնպէս այդտեղ էլ հունձը լինում է
առատ, որովհեաև կլիման աւելի խոնաւ է ու տաք, քան
հիւսիսում: Հիւսիսային Զինաստանում ձմեռը սառնամանիք-
ներ են լինում, ձիւն է գալիս, — թէպէտ կարճաւաև. իսկ
հարաւում գետինը երբեք ձիւնով չէ ծածկւում: Հիւսիսում
բերքը տալիս է տարեկան մէկ կամ երկու հունձ, իսկ հարա-
ւում՝ երկու կամ երեք:

Զինաստանի բնիկ ազգութիւնը՝ չինացիները պատկանում
են լեղին ցեղին: Շատ հնում նրանք ապրում էին Կենտրոնա-
կան Ասիայում. բայց վաղուց արդէն, 2,000 տարի թ. ծն.

*) Ռուս-չինական սահմանի երկայնութիւնը 4000 վերստից աւելի է: Զինաս-
տանն իր տարածութեամբ 3-րդ պետութիւնն է Երկրագնդի վրայ, իսկ բնակչութեամբ՝ երկրորդը:

առաջ, նրանք գաղթեցին այժմեան Զինաստան, հիմնեցին այդ
մեծ պետութիւնը և զօրեղ ազգեցութիւն ունեցան հարեան
ժողովուրդների վրայ:

Զինացիներն աչքի են ընկնում իրենց աշխատափու-
թեամբ: Նրանց զլիսաւոր զբաղմունքն է երկրագործութիւնը:
Հիւսիսային Զինաստանի արտերը ծածկւած են ցորենի և



Նկ. 30. Զինացիներ:

բակլայի ցանքսերով. իսկ Հարաւային Զինաստանի լեռնահո-
վիաներում տարածում են բննձի արտեր, շաքարեղեգնի տրն-
կարաններ և բամբուկի թփուտներ: Բամբակ և խաշխաշ (ո-
չից պատրաստում են ափիոն) մշակում են Զինաստանում
ամեն տեղ:

Զինացիներն իրենց գաշտերը մշակում են աւելի խնամ-
քով, քան մեր գիւղացիներն իրենց բանջարանոցները: Նրանք
պարարտացնում են հողն աղբով ու ջրում արտերը ջրանցք-
ների միջոցով, որ անց են կացնում նրանք ամեն տեղ՝ գե-
տերից և գետակներից ջուր բերելու համար: Հացաբոյսերը
նրանք ձեռքով են տնկում արտերում. — կանոնաւոր շարքերով:
որոներն էլ անդադար քաղհանում են: Ահա այդ պատճառով
էլ հունձն այնտեղ լինում է միշտ շատ առատ: Մի կտոր հո-
ւած էլ հունձն այնտեղ լինում է միշտ շատ առատ:

դից անգամ շինական զիւղացին սոտանում է բաւականաչափ հայ՝ իր ընտանիքը կերակրելու համար:

Երկրագործութիւնը չինացիների մէջ համարւում է ոչ միայն զիխաւոր, այլ նաև ամենայարդի զբաղմունքը: Նրանք ունեն երկրագործութեան առնը. ինքը Զինասատանի կայսրը, որ կոչւում էր «երակնքի որդի», վարում էր մի կտոր հող:

Զինացիները մեծ հոգատարութեամբ զբաղւում են նաև այզեզործութեամբ, —մանաւանդ հարաւային Զինասատանում, ուր մշակում են թթենիներ և թէյի ծառեր: Թէյի ծառի տերմներից չինացիները պատրաստում են թէյ, իսկ թթենու տերեներով կերակրում են շերամի որդը: Այսպիսով չինացիների զբաղմունքների մէջ կարենք տեղ են բռնում մետաքսագործութիւնը և թէյի մշակութիւնը. Զինասատանից եւրոպա են արտահանում մեծ քանակութեամբ թէյ և մետաքս:



Նկ. 31. Թէյ ժողովելը, չորացնելը և բովելը:

Մեծ նշանակութիւն ունի չինացիների համար նաև օղկնորութիւնը: Զինական ծովերը, գետերը ջրանցքները և լճակները հարուստ են ձկներով:

Բրինձը, բակլան և ձուկը կազմում են չինացիների սննդի գլխ-

խաւոր առարկաները: Յաճախ գործ են ածում նրանք նաև խոզի, շան և կատէի միտ: Զինացը սիրած ուտելիքների թւին են պատկանում մի քանի տեսակ ծովային որդեր ու ծովային ծիծենակի բոյնը: Ոգեւթից խմբչքներ չինացիները համարեա չեն գործածում, բայց դրա փոխարէն գործ են ածում ավիտն, որ առողջութեան վլայ աւելի վատ է ազգում, քան սպիրտը:


Ան առնապահութիւնը Զինասատանում զարգացած չէ, ուրովհետեւ բոլոր պէտքական հողերը մշակւած են, չկան արօտատեղեր: Կաթի և իւղի մասին չինացիները համարեա ոչինչ չկիտեն, կաթնասնահոսութեան մասին զարգափար անգամ չունեն Անասուն քիչ թիւնեւ պատճառով Զինասատանում բհով կրում են մշակներ (կոււլի): Հարաւային Զինասատանում նոյն իսկ կոռքի ճանաւալքներ չկան, այլ միայն շաւի դներ՝ ոտքով ման եկողների համար: Դրա փոխարէն՝ Զինասատանը հարուստ է գետային ճանաւալքներով ու արւեստական ջրանցքներով, որոնց վրայ երթենեկում են բազմաթիւ նաւերը: Ամենամեծ՝ «Կայսերական» ջանցքը 1,000 վերստից տևելի երկայնութիւն ունի:

Առեւտուրի Զինասատանում շատ եռուն է. չինացիները շատ ընդունակ են առեւտի մէջ: Նրանց ձեռքում է զանուում ներքին տոնտուրը ոչ միայն Բուն Զինասատանում, այլ նաև նրա բոլոր կալւածներում: Արդիւնագործութիւնը Զինասատանում չէ զարգացած, չեն մշակւում հանքերը:

Չինացիները շնորհքով են նմանապէս արհեստների մէջ: Միլիոնաւոր չինացիներ զբաղւում են պատրաստելով սմենտեսակ առարկաներ անային գործածութեան համար, նաև արդուզարդի առարկաներ: Առանձնապէս շնորհքով պատրաստում են նրանք յախճապակէ («չինի») ամաններ (ափսէներ և այլն), մետաքսոէ գործւածքներ, փայտի և փղոսկրի քանդակներ:

Կրթութիւնը շատ յարգի է եղած չինացիների մէջ ամենահին ժամանակներից: Փողովրդական զպրոցներ հիմնել ըսկեցին նրանք եւրոպացիներից առաջ: Եւրոպացիներից աւելի առաջ են գտել նրանք նաև տպագրութիւնը, կողմնացոյցը և վառողը: Բայց ինչպէս եղել են հնումը, չինացիներն այնպէս ել մնացել են մինչև մեր օրերը, առանձին յառաջազիմութիւն չեն ցոյց տւել: Բուն ժողովուրդը խարխափում է տղի-

տութեան մէջ: Ամեն բանում նրանք նապաշտ են. նոյն իսկ մեղք են համարում փոխել այն կարգերը, որ դժել են իրենց նախնիքները:



Նկ. 32. Զինական տաճար:

Որոնք հնում ծառայում էին թափառաշրջիկների յարձակումներից ժողովուրդը պաշտպանելու համար: Թէպէտ բազմամարդ էն չինական քաղաքները, բայց բարեհն չեն: Ընդհանրապէս չին ժողովուրդը իրավունք է առաջարկում: Առաջին կարգութիւնը կամաց է առաջարկում: Միայն վերջին ժամանակներս են սկսել չինացիները հոգ տանի բարեկարգելու իրենց դպրոցները:

Չինացիներ պարում են գլխաւորապէս զինական տաճար:

*) Չինացիները կրօնամոլ ժողովուրդ չեն, այլ համբերտար. յաճախ երկ տաճեր կը ննիրի հնուկողներ մինոյն տաճարում են կատարում իրենց ծէսերը:

Տիրապետող կրօն չկայ Չինաստանում. բայց համարեա բոլոշինացիները երկրպագութիւն են տալիս երկնքին, երկրին և ըստ թեան ոյժերին: Շատերը հետեւում են բուղջայական կրօնին մանաւանդ հասարակ ժողովուրդը: Աւելի բարձր խաւերը հետեւում են Քրիստոնից 5 դար առաջ ապրած չինացի իմաստուն կոնֆուցիոնի վարդապետութեան Բոլոր չինացիներն էլ զոհ են մատուցանում իրենց նախնիքների ողիներին*): Սրեմա. Չինաստանու կան ՅՇ միլիոն մաներականներ:

Չինացիներն ապրում են գլխաւորապէս զինական տաճարում, մասամբ նաև քաղաքներում: Հողի պահասութեան պատճառով նրանք տնիրը շինում են իրաշատութեան մասում առաջ իրենց նախնիքների բնակարանները, ինչպէս և հենց իրենք, շատ կեզ տուտ են: Չինական բաղաբները շը շապատած են հաստ պարիսպներով:

Չինացիները պարագաներու զովուրդը պաշտպանելու համար: Թէպէտ բազմամարդ էն չինական քաղաքները, բայց բարեհն չեն: Ընդհանրապէս չին ժողովուրդը ինեղա, սակաւապէտ կեանք է վարում: Աւեն տարի բազմաթիւ կուլի ներ դիմում են օտար երկիրներ պանդխտութեան, դոհանալով շար խղճուկ աշխատավարձով:

Իրենց երեխաներին չինացիները գլխաւորապէս սովորեցնում են

յարդել ծնողներին և նախնիներին, որոնց մտքերը նրանց համար սուրբ են: Գիտութիւնները չինացիների մէջ ամենակին չեն զարդացած, բայցի թւաբանութիւնից, որ նրանց հարկաւոր է տուետը համար: Չինարէն լեզուն, մանաւանդ գրութիւնը, շատ դժւար է. բոլոր բաները միավանկ են: Դրութիւնն էլ ոչ թէ այբուբենից է բաղկացած, այլ բազմաթիւ նշաններից, որոնք ամբողջ բառեր են ցոյց տալիս: Սովորել բոլոր նշանները՝ դաքէրին է յաջողւռում: Մեծամասնութիւնը սովորում է կարդալ միայն սակաւաթիւ գրքեր, որոնք պարունակում են չինական իմաստունների մտքերը: Միայն վերջին ժամանակներս են սկսել չինացիները հոգ տանի բարեկարգելու իրենց դպրոցները:



Նկ. 34. Մանդարին (չինակ. պաշտօնեայ):

生仁十士大於中人孔已化三才並立習字呈人作七

Նկ. 33. Չինական նշանագրեր:

հանրապէս բոլոր օտարերկրացիներին. նոյն իսկ եւրոպացիների վրայ մինչև վերջին ժամանակներս նրանք արհամարհանքով էին նայում, անպատւաբեր էին համարում իրենց համար որևէ բան փոխ առնել նրանցից: Միայն վերջերս, մի քանի անգամ պարտութիւն կրելով եւրոպացիներից, նրանք սկսեցին իրենց զօրքը վարժեցնել եւրոպական ձևով, թոյլ տւին եւրոպացիներին Չինաստանում անցկացնել մի քանի

Կ Ե Կ Ա Թ Ո Ւ Պ Ա Յ Ի Ն գ ծ ե ր և մի քանի քաղաքներում էլ դործարան-
ներ հիմնել:

Դարեր շաբունակ, մինչև վերջին տարիներս, երկիրը
կառավարում էր կայսրը կամ Բողդիխանը, որ նշանակում է
«Երկնքի» (այսինքն Աստուծոյ) «րդի»։ Նրա իշխանութիւնը
համարւում էր անտահման, սակայն իրավէս կառավարութիւնը
գտնւում էր պալատական մեծամեծների, փոխարքաների և զա-
նազան պաշտօնեաների (մանդարիների) ձեռքում։

Սակայն վերջին ժամանակներս Զինաստանում տեղի
ունեցած շարժումների հետևանքով կայսը ճրաժարւեց իշխա-
նութիւնից. այժմ Զինաստանում յայտարարւած է հասարա-
կապնութիւն, երկիրը կառավարում է նախագահը։ Թա-
կայն կառավարութեան նոր եղանակը դեռ բոլորովին չէ ամ-
րապնդւել երկրում, ներքին յուղումներ բռնկում են մերթ-
մերթ։

Զինաստանի մայրաքաղաքն է Պեկին, 1 միլ. աւելի քնա-
կիչներով, նշանաւոր նաւահանգիստներն են։ Տեսն-ցզին
(որ Պեկինի հետ երկաթուղարք է միացած), Շանգհայ և Կան-
տոն։ Այդ նաւահանգիստների վրայով են եւրոպայից և եա-
պոնիայից Զինաստան ներմուծում գործարանային ապրանք-
ներ. Հնդկաստանից՝ ափիոն. իսկ Հնդկաչինից էլ բըինձ (թէ-
պէտ չինացիները շատ բըինձ են ցանում, բայց եղածը չ
բաւականացնում չինական ամբողջ ժողովրդին կերակրելու
համար)։

Միւս քաղաքներից նշանաւոր է Հանկոու՝ կապոյտ գե-
տի ափին։ Այդ քաղաքը յայտնի է իրեկ թէյի առևտրի մեծ
շուկայ, որտեղից ծովային նաւերով շատ թէյ է արտահան-
ում եւրոպաու Ամերիկա։ Թէյը և մետաքաը Զինաստանի ար-
տահանութեան գլխաւոր առարկաներն են։ Նաև կին կապոյտ
գետի վրայ. նշանաւոր է բամբակի առևտրով։

Եւրոպացինեղն օգտւելով իրենց ոյթից, սկսել են խառ-
նըել չինական գործերի մէջ։ Նրանք արդէն զրաւել են մի
քանի նաւահանգիստներ չինական ծովափում։ Առապէս՝ անգին
ացիները վերցրել են Հոնգկոնգ կղզին, ուր գտնում է Վիկ-
տորիա նաւահանգիստը։ Հոնգկոնգի մօտ են կանգ առնում
եւրոպայից ու Հնդկաստանից դէպի Զինաստան ու Ասպնիտ
երթնեկող համարեա բոլոր նաւերը։

ՄԱՆՉՈՒՐԻԱ.—Մանջուրիան ընկնում է Զինաստանից հիւ-
սիս։ Այդ երկիրն իր մեծութեամբ հաւասար է Կովկասին, Լե-
հաստանին և Ֆինլանդիային, —միասին վերցրած։ Մանջուրիան
մեծ մասով լեռնոտ, բայց հարուստ երկիր է։ Հարաւային
մասում, Լեաօ-խէ գետի հովտում, տարածւում են բերրի
զաշտեր, իսկ հիւսիսում՝ հիւթառատ ռափաստանները։ Ման-
ջուրիան շըջտպատող լեռները ծածկւած են իիտ անտառնե-
րով և հաբուստ են ոսկու ու քարածուխի հանքերով։

Մանջուրիայի ընակիչների թիւն է մօտ 8 միլիոն։ Եր-
կը ընիկները մանջուրացիներն են։ Առաջ նրանք անկախ և
շօրեղ ժողովուրդ են եղել։ Մի քանի հարիւր տարի սրանից

առաջ նրանք նւաճեցին Զիիաստանը, որտեղ և մինչև վերշերս թագաւորում էր մանջուրական հարստութիւնը (դինաստիա): Բայց տիրելով չինացիներին՝ մանջուրացիներն այնպէս խառնեցին նրանց հետ, որ իւրացրին նրանց բոլոր սովորութիւնները, մոռացան նոյն իսկ իրենց լեզուն: Այժմ բուն Մանջուրիայում իսկ գժւար է ջոկել մանջուրացիներին (թւով ընդամնը մօտ 1 միլ.) չինացիներից: Սրանք բնակութիւն են հաստատել Լեաօ-խէ և Սունգարի գետերի հովիտներում ու մեծ աշխատասիրութեամբ մշակում են իրենց դաշտերը. ցանում են կորեկ, բակլա, խաշխաշ և ծխախոտ: Վերջին ժամանակներս չինացիները խմբերով բնակութիւն են հաստատում նոյն իսկ հիւսիս-արևմտեան Մանջուրիայի տափաստանում: Միայն լեռների անտառներում դեռ ևս թափառում են մանջուրացիներին ցեղակից տունզուզները և ուրիշ ժողովուրդներ, որոնք զբաղւում են սամոյր, կղաքիս և վագր որսալով:

Չինացիներին և մանջուրացիներին մեծ օգուտ են տալիս ուսւների ձեռքով շինած երկաթուղու ձանապարհները: Սրանցից մէկը կարում է չիւսիսային Մանջուրիան և միացնում է Սիբիրի երկաթուղին Վլադիկոսովկի հետ: Մի ուրիշ երկաթուղային գիծ անցնում է Խարբին քաղաքից (Սունգարի դետի վրայ) դէպի հարաւ Մանջուրիայի գլխաւոր քաղաք Մուկուէնի վրայով մինչև Պորտ-Արտուր, որ այժմ գտնուում է եապոնացիների ձեռքում:

ԿՈՐԷԱ:—Կորէան լեռնոտ թերակղի է. մի կողմից նա ողողուում է եապոնական ծովով, իսկ միւս կողմից՝ Դեղին ծովով: Հարաւ-արևմտեան մասը շատ աւելի տաք է, քան հիւսիս-արևելեան մասը:

Կորէայի բնակիչներն են կորէացիները: Սրտաքին տեսքով նրանք նման են չինացիներին և եապոնացիներին, իսկ իրենց զարգուցմամբ ու ձեռներէցութեամբ շատ աւելի յետ են մնացել թէ մէկ և թէ միւս ժողովրդից: Նրանք զբաղւում են եղիշրազործութեամբ և անասնականութեամբ: Կորէացիներն իրենց դաշտերը մշակում են շատ աւելի վատ, քան եապո-

նացիները և չինացիները: Նրանք չեն տնկում թէյի և թթի ծառեր, մետաքսագործութեամբ էլ չեն պարապում: Արհեստների մէջ ևս առանձին շնորհք չեն ցոյց տալիս:

Կորէացիներն ապրում են խղճուկ խրճիթներում. նրանց երկրում քաղաք համարեա թէ չկայ. Կորէայի գլխաւոր քաղաքը՝ Սէուլ, մեծ գիւղի է նման:

Կորէացիները շատ հանդարտաբարոյ և խաղաղասէք ժողովուրդ են: Այդ պատճառով և Կորէան առաջ ենթարկւած էր Չինաստանին, այժմ էլ եապոնացիների ձեռքում է գրտնըլում: Եապոնացիների համար Կորէան մեծ նշանակութիւն ունեցող մի երկիր է: Եապոնիայի ազգաբնակութիւնը շատ խիտ է, իսկ Կորէայի ազգաբնակութիւնը՝ նուր. այդ պատճառով էլ եապոնացիները խմբերով բնակութիւն են հաստատում Կորէայում ու այնտեղ վաճառում են իրենց գործարաններում պատրաստած ապրանքները:

ԵԱՊՈՆԻԱ:—Եապոնիան Ասիայի ամենաարևելեան երկիրն է. այդ պատճառով էլ նա կոչւում է «Ծագող արեգակի երկիր»: Նա բաղկացած է չորս մեծ ու բազմաթիւ մանր կղզիներից: Այդ չորս մեծ կղզիներն են Հոնդո կամ Նիպոն, Կիու-Շիու, Շիկու և Եսսօ: Բացի դրանցից՝ եապոնացիներին են պատկանում նաև կուրիլեան կղզիները, Սախալինի հարաւային կէսը, ՈՒիու-Կիու և Ֆորմոպա կղզիները: Իր տարածութեամբ եապոնիան մի փոքր մեծ է Անգլիայից և համարեա հաւասար է մեր կովկասին:

Եապոնական բոլոր կղզիներն էլ լեռնոտ են, ենթակայ յաճախակի երկրաշարժների *): Լեռնագագաթներն ընդհանրապէս ներկայացնում են հրաբուխներ, —կամ գործող, կամ հանգած դրութեան մէջ: Եապոնիայի ամենաարձը հրաբխային սարն է՝ Փուղի-Եամա ($3\frac{1}{2}$ վերստ բարձրութեամբ), որ գտնուում է Հոնդո կղզու վրայ. 10 ամիս շարունակ նա ձիւնով է ծածկւած լինում: Եապոնացիները սուրբ են համարում

*) 1885 թւականին եապոնիայի մայրաքաղաք Տոկիօում 90 անգամ երկրաշարժ եղաւ, աւերակների տակ թողներով 100,000-ից տւելի մարդ:

այդ սարը: Դաշտավայրեր համարեա թէ չկան այդ երկրում.
չկան նաև երկայն, նաւարկելի գետեր:

Կուրօ-Սիւօ տաք հոսանքը եապոնիա է բերում շատ
ջերմութիւն ու խոնաւութիւն: Ամառ ժամանակ այդ հոսանքի



Նկ. 36. Ֆուզի-Ետմա:

վրայով են փշում հարաւ-արեելեան մուսսոնները, որոնք ջրա-
յին գոլորշիներով լցւում են ու առատ անձրև թափում եա-
պոնական կղզիների վրայ:

Կուրօ-Սիւօի մի ճիւղը մտնում է եապոնական ծովը:
Զմեռը մայր ցամաքից փշող մուսսոնները ջերմութիւն և խո-
նաւութիւն են տանում Կուրօ-Սիւօի այդ ճիւղից. այդ պատ-
ճառով նրանք եապոնիա են բերում առատօրէն մթնոլորտա-
յին տեղումներ: Տարւայ ամենալաւ եղանակներն են գարունը
և աշունը:

Ծնօրնիւ տաք ու խոնաւ կղմայի՝ եապոնական գլխաւոր
կղզիների բոսականութիւնը շատ փարթամ է, մերձարեա-

գարձային: Լեռները ծածկւած են անառներով, իսկ հովիա-
ները և բլուրները՝ արտերով ու այգիներով:


Կուրօ-Սիւօ ու Սախալին կղզիները ողողում են Օխոտի ցուրտ ծո-
վով. նրանց կղման շատ խիստ է, ծածկւած են փշատերև անտառ-
ներով ու տունդրաներով: Դրա համար էլ նրանք անյարմար են մարդ-
կային բնակութեան համար: Խորմօզա կղզու կղման, ընդհակառա-
կը, շատ տաք է և վատառողջ իսկ բուսականութիւնը՝ միանգամայն
արեադարձային: —Կ են դանին և ը այդ անտառներում յատկապէս
թռչուններ, բիչ կա:

Եապոնիան Ռուսաստանից յիսուն անգամ փոքր է (Կո-
րէայի հետ միասին—25 անգամ), բայց նրանից հազիւ Յ ան-
գամ պակաս թւով բնակիչներ ունի: Եապոնիայում մօտ 55
միլիոն մարդ է ապրում (Կորէայի հետ միասին—75 միլ.):
Այդպէս խիտ բնակութիւն ունենալու գլխաւոր պատճառները
երկու են. —Նախ՝ բնութեան հարատաւթիւնը, երկրորդ՝ եա-
պոնացիների աշխատասիրութիւնը և մեծ ընդունակութիւն-
ները:

Եապոնացիները դեղին ցեղին են պատկանում և չինա-
ցիներին ցեղակից են: Նրանք մեծ մասով աղքատ գիւղացի-
ներ են. դրանց ու-
նեցած հողն այնչափ
սակաւ է, որ կէս դե-
սեատինը համարւում
է արդէն մեծ հող:

Բայց իրենց փոքրիկ
արտերը նրանք մշա-
կում են նոյնպի-
սի ջանասիրութեամբ,
ինչպէս չինացիները.
զբաղւում են գլխաւո-
րապէս թրնծի մշա-
կութեամբ:

Աշնանը, բրնձի հնձից
յետոյ, նոյն հողի վրայ
ցանում են հացահատիկ-
ներ—զարի կամ ցորեն,



Նկ. 37. Բամբաւկի թփուտ եապոնիայում:
Եապոնական կտուպան:

որոնց հօւնձը լինում է զգարնանը: Եապոնիայի հարաւում ամեն մի արտից կարելր է լինում տարեկան նոյնիսկ երեք հունձ վերցնել:

Հացաբոյսերի արտերը տարածւում են եապոնիայի ամենացածր վայրերում: Աւելի բարձր տեղերում եապոնացիները մշակում են թէյի թփեր, իսկ սարերի լանջերին՝ թթենի: Եապոնիայում այնչափ շատ մետաքս է պատրաստւում, որ նա կազմում է եապոնական արտահանութեան գլխաւոր առարկան: Իսկ թէյը համարեա ամբողջն էլ երկրի ներսում է սպառւում, որովհետև եապոնական թէյն իր որակով շատ յետ է մնում չինականից և հնդկականից:

Ծովափերին ապրող եապոնացիները զբաղեցնում են ծըկնորսութեամբ, որ նրանց համար էլ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան չինացիների համար: Ամենահարուստ ձբկնորսարանները գտնւում են Եսսուում և Սախալինի հարաւում: Այնքան շատ ձուկ է ստացւում, որ մի մասը գործ են դնում նոյն իսկ արտերը պարաբռացնելու համար:

Բրինձը, ձուկը, բակլան և ծովային օկաղամբը կազմում են եապոնացիների գլխաւոր ուտելիքները: Թէ բրինձը հապոնացիների համար ինչ մեծ նշանակութիւն ունի, այդ երեսում է նրանից, որ փոխանակ առելու նտիսաճաշ, ձաշ, ընթրիք, նրանք ասում են՝ «առաւտեան բրինձ», ակէսօրւայ բրինձ», «երեկոյեան բրինձ»—որովհետև ամեն անդամ էլ բրինձ են ուտում: Միս, կաթ և իւղ նրանք ևս, չինացիների նման, համարեա չգիտին ինչ բաներ են, որովհետև արօատեղեր չլինելու պատճառով անասնապահութիւնը ետպոնիայում զարգացած չէ:

Նկ. 38. Եապոնական գիւղացի:

Ետպոնացիները մեծ մասով տպրում են գիւղերում, սրանք և իւղ նրանք ևս, չինացիների նման, համարեա չգիտին ինչ բաներ են, որովհետև արօատեղեր չլինելու պատճառով անասնապահութիւնը ետպոնիայում զարգացած չէ:

Ետպոնացիները մեծ մասով տպրում են գիւղերում, սրանք

աշքի են ընկնում իրենց զարմանալի մաքրութեամբ: Տները շինում են փայտից: Տներում կահկարասիք չի լինում. եապոնացիները նըստում և քնում են խոտից կամ արժաւենու տերեներից հիւսած խսիքների (փոխաթ) վրայ: Տուն մտնելիս եապոնացիները հանում են կօշիկները. նրանց բնակարանների մաքրութիւնն էլ օրինակելի է:

Եապոնացիները շատ ընդունակ ժողովուրդ են: Հին ժամանակները նրանք սովորեցին չինացիներից մի քանի արհետ ու տներ (օրինակ՝ ձենապակեղէն պատրաստելը), և այդ բանում նրանք գերազանցեցին նոյն իսկ իրենց ուսուցիչներին:

Անցեալ գարի վերջերում եապոնացիները սկսեցին շատ բան սովորել ելուապացիներից և ամենակարճ ժամանակւայ ընթացքում ցոյց տվին մեծ առաջադիմութիւն: Ներկայումս եապոնացիներն ունեն եւրոպական ձեփի բազմաթիւ սեփական զործարաններ. այդտեղ նրանք մեքենաների միջոցով պատրաստում են բամբակէ և մետաքսէ գործւածքներ, մետաղի զանազան ալպանքներ, ամենալաւ տեսակի թուղթ, և այն: Այժմ եապոնացիներն իրենք են կառուցանում շոգենամեր, երկաթուղիներ: Ամբողջ եապոնիան ծածկուած է երկաթուղիներին: Ամբողջ եապո-

նիան ծածկուած է երկաթուղային ցանցով: Եապոնական շատ քաղաքներում, յաճախ նոյն իսկ գիւղերում, կայ էլեքտրական լուսաւորութիւն:

Եապոնացիները շատ հնուց արդէն կութառական ժողովուրդ են: Իրենց կրթութիւնը, շատ սովորութիւններ և կրօնը փոխ են առել չինացիներից: Չինաստանի նման եապոնիան ևս երկար ժամանակ



Նկ. 39. Եապոնական գիւղացի:

ապրում էր և արտած ուրիշ երկիրներից. եապոնացիներն իրենց երկիրը ներս մտնել չէին թողնում օտարերկրացիներին: Միայն 60 տարի արանից առաջ երողացիներին թոյլ տրւեց եապոնիտ մտնել: Այդ ժամանակից էլ սկսած նրանք շատ բան սովորեցին եւրոպացիներից: Իրենց բնութեամբ եապոնացիները պատերազմառէր և քաջ ժողովուրդ են. իսկ առօրեայ կեանքում նրանք նոյնչափ քաղաքավարին և բարեսիրտ, որչափ չինացիները:



Նկ. 40. Եապոնացի կառապան:

Բայց ամենագլխաւորն այն է, որ եապոնացիներն այժմ կրթած ժողովուրդ են: Նրանք հիմնել են բազմաթիւ ժողովրդական դարոցներ և ուսումն պարտադիր են դարձրել ամենքի համար: Այդ պատճառով էլ համարեա բոլոր եապոնացիները գրադէտ են, կարգում են լրագիրներ, գրքեր, որ եապոնիայում աւելի են լրյու տեսնում, քան մուսասիսնում:

Երկրի կառավարութիւնն էլ նման է եւրոպականին: Կայսրի (Միկաղօ) իշխանութիւնը սահմանափակւած է պարլամենտով, այսինքն ժողովրդական ներկայացուցիչների ժողովով: Ժողովրդից ընտրւած մարդիկ տչալուրջ կերպով հսկում են մինիուրների և պաշտօնեաների գործերին ու նրանցից ամեն բանի համար հաշիւ են պահանջում:

Եապոնացիների մեծ մասը գաւանում է շինտո կրօնը, որ այդ ժողովրդի բնիկ, ազգային կրօնն է: Այդ հաւատի էութիւնն է՝ բնութեան ոյժերին և նախահայրերի ոգիներին երկրպագելը: Եապոնացիների մէջ քիչ չեն նաև բուդիսյականներ և կինդիրուցիուսի վարդապետութեան հետեղներ:

Եապոնիայի մայրաքաղաքն է Տոկիօ. ունի մօտ 1,800,000 բնակիչ: Չնայած դրան, Տոկիօն մեծ գիւղի նմանութիւն ունի, որովհետեւ բաղկացած է բազմաթիւ փոքրիկ փայտաշէն տներից^{*}): Փողոցներում երթևեկութիւնը մեծ է. կայ նաև էլեք-



Նկ. 41. Եապոնական տաճար:

տրաքարշ: Կառավարմներն իրենք են քաշում երկանիւ փոքրիկ կառքերը: Թէպէտ Տոկիօ մայրաքաղաքը գտնուում է ծովածոցի վրայ, բայց որովհետեւ այդ ծովածոցը փոքր է, այդ պաճառով էլ մեծ նաւերը կանգ են առնում Յօկոհամա նաւահանգստում:

Եապոնիայի երկրորդ մեծ քաղաքն է՝ Օսակա (մօտ 1

*) Տները փայտից են շինում, որ յանախակի կրկնուող երկրաշարժներից շատ չվասահն:

միլ. Բ.), որ եապոնական գործարանային արդիւնագործութեան կենտրոնն է: Եապոնիայի ամենանշանաւոր նաւահանգիստներն են, հաւասարժէք եօկոհամային, կորէ և նազասակի:

Եսոս, Սախալին և Կուրիլեան կղզիների վրայ բացի եապոնացիներից ապրում են նաև այն կոչող մի խեղճ ու համարեա վայրենի ժողովրդի մնացորդներ: Նրանց թիւը հետզհետէ փոքրանում է, և այժմ հաղիւ մի քանի հազար հոգի լինեն:

Ա Փ Ր Ի Կ Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՖՐԻԿԱՅԻ ԴԻՐՔԸ, ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ:—Աֆրիկան կազմում է արևելեան մայր ցամաքի մի մասը. նա Եւրոպայից 3 անգամ մեծ է, իսկ Ասիայից՝ $1\frac{1}{2}$ անգամ փոքր: Աֆրիկան բաժանւում է Ասիայից Կարմիր ծովով, Բաբ-էլ-Մանդէբի նեղուցով և Սուէզի ջրանցքով. Եւրոպայից—Միջերկրական ծովով և Զիբրալտարի նեղուցով: Արևմտեան կողմից նրա ափերը ողողում է Ասլանտեան սվկիանոսը՝ Գուինէի ծոցի հետ միասին, իսկ արևելքից—Հնդկական ովկիանոսը՝ Մոզամբիկի նեղուցի հետ միասին:

Աֆրիկայի ամենահեռաւոր ծայրերն են.—հիւսիսում՝ Բլանկօ կամ Սպիտակ հրւանդանը, հարաւում՝ Ասեղի հրւանդանը, արևմուտքում՝ Կանաչ հրւանդանը, իսկ արևելքում՝ Գուարդանայ հրւանդանը: Աֆրիկան հիւսիսից հարաւ տարածում է 8000 վերստ, իսկ արևմուտքից արևելք՝ 7500 վերստ:

Աֆրիկայի ափերը շատ աւելի քիչ են կտրտած, քան որ և է ուրիշ աշխարհամասի ափեր. ծովեր, ծոցեր, թերակղզիներ կամ կղզիներ շատ քիչ կան: Ծոցերից նշանաւոր են.—Գուինէի ծոց՝ արևմուտքում, Գաբէսի ծոց՝ հիւսիս-արևելքում: Կղզիներից — Մազակասկարը՝ հարաւ-արևելքում, որ մայր ցամաքից բաժանւում է Մոզամբիկի խոր և լայն նեղուցով: Լաւ, յարմար նաւահանգիստներ Աֆրիկայում շատ քիչ կան:

ԱՖՐԻԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՑՈՒԹՅՈՒՆ:—Ամենահին ժամանակներից սկսած արդէն Եւրոպացիներին յայտնի էին Աֆրիկայի հիւսիսին ծովափնեայ Երկիրները: Վաղուց յայտնի էին նաև Կարմիր ծովի ափերը. այդտեղ Եւրոպացիները Սուէզի պարանոցից. Հնդկաստան էին գնում:

իսկ Աֆրիկայի մասցած ահազին տարածութիւնը եւրոպացիները յետոյ միայն ձանաչչեցին: 8-րդ դարում Քրիստոսից յետոյ ամբողջ հիւսիսացին Աֆրիկան նւաճեցին արար և ըստ և այդտեղաւարածեցին իրենց կրօնը (մահմեղականութիւն), առեւտրական յարաբերութիւններ ստեղծեցին նաև երկրի ներքին մասերի հետ: 15-րդ դարում, երբ նաւագուցութիւնը զարգացաւ, և ըստ պատրին երը սկսեցին յաճախ երթալ դէպի Աֆրիկայի արևմտեան ափերը և հիմնեցին այնահեղ գաղթականութիւններ: Դրանք գլխաւորապէս պուրագալ տուգաւալ աշ ին եր էին:

15-րդ դարի վերջում պորտուգալացի ծովագնաց Պատիկո-դէ-Գաւան կատարեց առաջին ծովային ձանապարհորդութիւնն Աֆրիկայի բոլորքով դէպի Հնդկաստան: Պորտուգալացիներից յետոյ Աֆրիկայում գաղութիւններ հիմնեցին նաև իսպանացիները, ֆրանսիացիները, անգլիացիները, գերմանացիները: Սակայն Աֆրիկայի խորքերը երկար ժամանակ ոչ ոք սիրու չէր անում թափանցել երկիւղ կրելով վատառողջ կիմայից ու դէպի եւրոպացիները թշնամութիւն տածող սհամորթ բնիկներից:

Առաջինն անգլիացի Լեիֆինգտոնն էր, 19-րդ դարի 60-ական թւականներին, որ երկար ձանապարհորդութիւններ արաւ դէպի Աֆրիկայի խորքերը: Նա ձանապարհ ընկաւ դէպի հարաւային Աֆրիկա՝ աւետարանը քարոզելու նպատակով: Իր հեզ ու բարի բնաւորութեան շնորհիւ նա գրաւեց տեղացիների սէրը ու նրանց օգնութեամբ շատ ուսումնասիրութիւններ արաւ:

Լիինգտոնը շատ սակաւ անգամ էր տեղեկութիւն տալիս իր մասին, ուստի և մտածեցին մի ժամանակ, թէ նա արդէն սպանւել է: 80-ական թւականներին նրան որոնելու նպատակով Աֆրիկա ուղարկցին մի ուրիշ անգլիացու, Սանելի անունով: Սա կտրում անցնում է կինտրունական Աֆրիկան, գտնում է Լիինգտոնին: Յետոյ Ստենլին հայրենիք է վերադառնում, իսկ Լիինգտոնը շարունակում է իր ձանապարհորդութիւնը դէպի հարաւա: Շուտով տեղից նա հիւսնդանում է և մեռնում: Նրա հաւատարիմ ծառաները՝ նեղուերն իրենց ուսերի վրայ են տանում նրա դիակը անտառների խորքերից մինչև ովկիանոսի ափերը. այդտեղ արդէն անգլիացի նաւաստիները նրա դիակը հայրենիք են փոխադրում:

Սանելին էլի երեք անգամ ձանապարհորդութիւն է կատարում Աֆրիկայում և ուսումնասիրում Վիկտորիա լիճը, Կոնցո և այլ գետի ջրաբաշխում գտնւած գարաւոր արևադային անտառները: Լիինգտոնից և Ստենլիից յետոյ ուրիշ ձանապարհորդներ էլ ուսումնասիրել են Աֆրիկան: Դրանց թւում պատւաւոր տեղ է գրաւում ուստ ձանապարհորդ դոկտոր Խունկերը, նա նշանակալից, բայց

մինոյն ժամանակ վարանկաւոր ուղևորութիւն կատարեց դէպի Նեղուսի ակունքները և Կոնցո գետի ջրաբաշխում ապրող նեամ-մարդակերների երկիրը: Զնայած այս բոլորին մինչև այսօր էլ Աֆրիկայում կան տեղեր, որ քիչ են հետազոտած: Սակայն Աֆրիկայի բոլոր մասերն էլ բաժանուած են եւրոպական պետութիւնների մէջ, որոնք և շատ տեղ երկաթուղիներ են անց կացրել:

ՄԱԿԵՐԵՒՈՅՑԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ: — Աֆրիկայի մակերեւոյթի կազմութիւնն ես միապաղապ է, ինչպէս ափերի գծադրութիւնը: Համարեա ամբողջ Աֆրիկան ներկայացնում է մի ընդարձակ բարձրաւանդակ՝ քարակոշտերից բաղկացած. նրա միջին բարձրութիւնն է կէս վերստ: Այդ բարձրաւանդակի վրայ լեռնային տեսակներն իրար վրայ են դարսւած, համարեա ամեն տեղ, հարթ (հորիզոնական) կերպով, չկազմելով ծալքեր: Օրեր և շաբաթներ շարունակ կարաւաններ են զնում առանց աեսնելու իրենց շուրջն աւելի կամ պակաս բարձրութիւն ունեցող սարեր: Բարձրաւանդակի ծայրերը շատ տեղ ապառաժուած են և սանդղքածե (տեռուաներով) իջնում են դէպի ծովափերը:

Աֆրիկայի հարաւարեկեան կէսն աւելի բարձր է, քան հիւսիս-արևեմտեանը. առանձնապէս բարձր է (տեղ-տեղ 4 վերստից էլ բարձր) Հաբէշստանի բարձրաւանդակը, — մի լեռնոտ և վայրի երկիր, Բարձր են նաև Դրակոննեան լեռները՝ հարաւարեկելքում (3 վերստից բարձր):

Արևելեան Աֆրիկայի բարձր սարահարթերի միջև գտնւում են բազմաթիւ խորը և մեծ (40—100 վերստ) գոգաւորութիւններ: Դրանցից մի քանիսը լցւած են ջրով ու ներկայացնում են լճեր: Օրինակ՝ Վիկտորիա, Տանգանիկա, Նեասսա և ուրիշները: Դրանց ծայրերին բարձրանում են հանգած հրաբուային լիռներ. ամենաբարձրերն են՝ Կիլիմանջարօ (6 վերստ բարձր) և Կենիա ($5\frac{1}{2}$ վերստ), որոնք ծածկւած են յաւերժական ձիւնով:

Հիւսիսի սարեր և մասնաւու Աֆրիկան թէպէտ իր բարձրութեամբ չէ կարող հասնել հարաւարեկեանին, բայց և այնպէս նա էլ բաղկացած է ընդարձակ բարձրաւանդակներից: Դաշտավայրերն այդ մասում փոքր տեղ են բռնում:

Աֆրիկայում չկան այնպիսի լեռնաշղթաներ, ինչպէս Ասիայում. բացառութիւն կազմում է Ատլանտ. նա բաղկացած է մի շարք ծալքերից, որոնք ձգւած են ծովափերի երկայնութեամբ ու կազմում են բարձր լեռնաշղթաներ։

Աֆրիկայի միակ մեծ կղզին՝ Մադագասկարը ցամաքային ծագում ունի. նա ևս քարակոշտերից է բաղկացած, սեպ և սանդղաձե ծայրերով։ Աֆրիկայի մասցած կղզիներից շատերը հրաբխային են. օրինակ՝ Համբարձման, Ա. Հեղինէի ու Կանարեան, Մասկարէնեան կղզիները։ Շատերն էլ կորալական ծագում ունեն. այսպես են բազմաթիւ մասր կղզիներ Աֆրիկայի արևելեան ծովափի մօտ, օրինակ՝ Զանդիբար։

ԿԼԻՍԱՆ։—Քանի որ Աֆրիկայի մեծ մասն ընկնում է արևադարձների միջի, ուստի և նրա կլիման տաք է։ Արեգակի տարին բոլոր շատ է տաքացնում այդ մայը ցամաքը. և ամառայ ու ձմեռայ ամիսների մէջ այնտեղ համարեա տարբերութիւն չկայ։ Աֆրիկայի ամենահիւսային կամ ամենահարաւային ծայրերում անգամ աւելի տաք է, քան Եւրոպայի ամենահարաւային, տաք երկիրներում։

Ամենատաք երկրամասը, այն էլ ոչ միայն Աֆրիկայում, այլ և ամբողջ երկրագնդի վրայ, Սահարա անապատն է. այստեղ տարւայ տաքութեան միջին աստիճանը 35-ի է հասնում։ Ամառ ժամանակ անապատի լերկ ժայռերը մինչեւ 70, նոյն իսկ 80 աստիճան տաքանում են։ Օդն ևս այնքան է տաքանում, որ նոյնիսկ գծւար է շնչել։ Իսկ երբ անապատով փչում է սամում՝ կոչւող սոսկալի աւազափառն փոթորիկը, շատ անգամ կարւաններ են ոչնչանում։ Սակայն գիշերները Սահարայում զով է լինում, յաճախ ցօղ է նըստում. իսկ ձմեռայ գիշերներին ժայռերի վրայ նոյնիսկ եղեամ է երեսում։

Սահարայում շատ սակաւ ան ձ բ և ն ե ր են գալիս. համարեա ամպ չէ երեսում երկնքի վրայ։ Այդ է պատճառը, որ այստեղ ցերեկը շատ շող է լինում, իսկ գիշերը՝ շատ զով։

Սահարայի չափազանց չոր լինելու պատճառները սրանք են։ Արևմեան կողմից նո ողողում է Ատլանտեան ովկիանոսի այն մա-

սով, որտեղ ամբողջ տարին անդադար փչում են հիւսիս-արևելեան պասսատները. իսկ գրանք խոնաւութիւնն ովկիանոսից տանում են պէտքի Հարաւային Ամերիկա, Սահարայի արևելեան կողում էլ ընկած է Արաբիա թերակղզին, որ չոր է, կարսիր և Միջերկրական ծովերն ևս այնչափ մեծ չեն, ուստի և քիչ գոլորշի են առաջացնում. իսկ Գուինէի ծոցից փչող քամիներն իրենց բերած խոնաւութիւնը հազիւ թողնում են նրա ծգվափնեայ բարձրութիւնների վրայ։ Վերջապէս՝ Հընդկական ովկիանոսից փչող քամիները խոնաւութիւնը թողնում են շաբէշտանում։


Սահարայից դէմփի հարաւ ընկնում են տաք և լինաւ երկիրներ. գրանք տարածւում են հասարակածի երկու կողմում։ Խոնաւութիւնը բերող

Նկ. 42. Ցեղերի տարտծում Աֆրիկայում։

քամիներն այդ երկիրներում թափում են շատ մթնոլորտային տեղումներ, -թէ Ատլանտեան և թէ Հնդկական ովկիանոսից։ Մանաւանդ շատ անձրեւ է գալիս Գուինէի ծոցի ափերին ու կոնգո գետի ջրաբաշխում։ Այդտեղ յորդ անձրեներ գալիս են համարեաւ ամբողջ տարին։ Իսկ մասցած մասերում ձմեռայ ամիսներին եղաշտ է լինում, անձրեւ գալիս է գլխաւորապէս ամառը, մանաւանդ կէսօրին։

Այ ծ ե ղ ե ր ա ր ե ա դ ի ց հարաւ՝ Աֆրիկայի կիսան չափաւոր-տաք է։ Ամառը (այսինքն՝ գեկտեմբերին, յունարին, փետրարին) այդ ամիսներին է Հարաւ. Աֆրիկայում ամառ) խիստ շատ շող է լինում այնտեղ, իսկ ձմեռը՝ բաւական զով, բարձր տեղերում նոյն իսկ ձիւն է գալիս։ Անձրեներ բերում են Հնդկական ովկիանոսից փչող քամիներ։

Աֆրիկայի հիւսիսային ծայրն ևս ունի այնպէս շափական կիմայ, ինչպէս հարաւային մասը. միայն թէ այնոր-տաք կիմայ, ինչպէս հարաւային մասը. միայն թէ այն-



տեղ ձմեռ է լինում այն ժամանակ, երբ հարաւում ամառ է և ընդհակառակը (ինչը՞ւ):

ԳԵՏՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ:—Աֆրիկայի բոլոր մեծ գետերն ել իրենց սկիզբն առնում են այն վայրերում, ուր շատ մթնոլորտային տեղումներ են թափւում: Նրանք հոսում են բարձրարահարթով և իրենց ընթացքի միջոցին պատահում են իջևածքների, այդ պատճառով էլ գոյացնում են բազմաթիվ ջրվեժներ ու սահանքներ: Գետերի մեծ մասը թափւում է Ասֆանտեան ովկիանոս, և փոքր մասը միայն՝ հնդկական ովկիանոս:

Աֆրիկայի զիխաւոր գետը Նեղոսն է, որ իր երկայնութեամբ (մօտ 6,000 վերստ) յետ է մուռմ միայն Միսսիսիպի գետից՝ իր Միսսուրի վտակով: Նեղոսը կազմւած է Սպիտակ Նեղոս և Կապոյտ Նեղոս ճիւղերից:

Սպիտակ Նեղոսն (կամ Բար-Էլ-Աքիադ) իր սկիզբն առնում է Ալիսուրիա լճից, որի մակերեսոյթն ովկիանոսից բարձր է աւելի քան մեկ վերստ: Կապոյտ Նեղոսը (կամ Բար-Էլ-Ազրեկ) սկսում է Հարե՛զստանի Յան կղզուղ լճից, որ աւելի բարձր է ովկիանոսի մակերեսոյթից, քան Վիկտորիա լիճը: Ամեն տարի ամառ ժամանակ Նեղոսն ափերից գուրս է գալիս շնորհիւ այն առատ ու յորդ անձրեների, որ անդում են նրա ակունքների մօտ:

Իր հոսանքի միջոցին զէպի Միջերկրական ծով՝ Նեղոսը պատահում է իջևածքների ու գոյացնում բազմաթիւ սահանքներ: Այդ սահանքները վերջանում են արևադարձի մօտ միայն: Այսուհետև Նեղոսը հոսում է հանդարտ: գետաբերանի մօտ գոյացնում է մեծ դելտա:

Աֆրիկայի գետերի թւում իր երկայնութեամբ երկրորդ տեղը բռնում է Կոնգոն: Նա իր ջրառատոթեամբ երկրորդ տեղն է բռնում երկրագնդի բոլոր գետերի շարքում (առաջինը՝ Հարաւ). Ամերիկայի Ամազոն գետը): Այդ գետի սովորական լայնութիւնը, միջին հոսանքի վրայ, մօտ 10 վերտան է. իսկ ովկիանոսի մօտ նեղանում է մինչև $\frac{1}{4}$ վերտան:

Իր երկայնութեամբ Աֆրիկայի երրորդ գետն է՝ Նիգեր: Մնացած գետերից նշանաւոր են—Օրանժի, Զամբեզի և Շարի (որ թափւում է Զադ լիճը):


Արևելեան Աֆրիկայի լծնղն են—Նեասսա, Տանգանիկա,

Վիկտորիա, Ալբերտ և ուրիշներ: Սրանց մէջ ամենախոր լին է՝ Նեասսա, իսկ ամենամեծը՝ Վիկտորիա:

Աֆրիկայի չոր մասերում շատ քիչ գետ կայ կամ ամենին չկայ: Սահարայում ոչ մի գետ չկայ, այստեղ պատահում են միայն հեղեղատներ (վաղի), որոնց միջով երեմն անձրեխց յետոյ հեղեղներ են հոսում. դրանք էլ կորչում են աւագուտների և քարքարուտների մէջ: Սահարայի հիւսիսային մասում, նաև Ատլասի լեռնաշղթաների միջն, պատահում են աղի լճակներ (շոտտեր): Դրանց մէջ ջուր լինում է գարձեալ անձրեխց յետոյ միայն, մնացած ժամանակ ծածկւած են լինում աղի, ձիւնանման սպիտակ շերտով:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:—Գուինէի ծոցի ափերին և Կոնգո գետի ջրաբաշխի վրայ, այսինքն Աֆրիկայի ամենախոնաւ մասերում, աճում են արեւադարձային անտառներ: Դրանք շատ լիանոսներով պատած մթին անտառներ են, ուր արեւագի ճառագայթները հազւագէպէ անգամ կարողանում են ներս թափանցել. օդը տաք է և խոնաւ: Բայց և այնպէս իրենց փարթամութեամբ ու բազմազանութեամբ Աֆրիկայի անտառները համեմատել չեն կարող Մալայեան արշապելագի կամ Հարաւային Ամերիկայի անտառների հետ: Պատճառն այն է, որ Աֆրիկայում քիչ պեղեր կան, ուր ամենին երաշտ չէ լինում:

Աֆրիկայի այն մասերում, որտեղ չորութիւնը, երաշտը երկարատես է լինում, և անձրեներ գալիս են միայն ամառ ժամանակ, այստեղ էլ տարածւում են սաւաններ: Դրանք երկրագնդի ամենափարթած արևադարձային տափաստաններն



Նկ. 43. Բուսականութեան արածութիւն Աֆրիկայում:

Են: Անձրաների ժամանակ այդ տափաստանները ծածկւում են բարձր խոտով,—շատ անդամ մարդու հասակի չափ և առելի: Խոտերի մէջ այս ու այն տեղ աճում են և բարձր ծառեր, օրինակ՝ ակացիաներ: Պատահում են նաև հազարամետ բաօբաբներ^{*)}: Սաւանները կտրող գետահովիտներում տարածում են անտառներ: Գետերի և լճերի ճահճու ափերը ծածկւած են խիտ եղեգնով ու պապիրուս կոչող բոյսով:

Եթե սկսում են երաշտները, սաւանների խոտը չորանում

աճում են միայն խոտ, նաև թփեր՝ մանրիկ փշտերեներով ու չափազանց երկայն, հաստ արմատներով:

Աֆրիկայի ամենահիստորիկն մասում, Ատլանտիկի բարներում, բուսականութիւնն անձրեների չնորհիւ աւելի թարմ է: Բարձրաւանդակների վրայ կան տափաստան երեսովիտներում և սարալանջերին տարածում են մերձարեւադարձային անտառներ՝ մշտականաչ ծոռերով: օրինակ՝ ձիթենի, օլէանդը և այլն:

Աֆրիկայի ամենահարաւային մասում, բարձրաւան-



Նկ. 44. Պապիրուսի թփուտ նեղոսի ակունքներում:

Է, թափւում են ծառերի տերենները: Ահա այդ միջոցին սաւաններում հեշտութեամբ առաջ են գալիս հրդեհներ, որոնք բռնում են տասնեակ և հարիւրաւոր վերստ տարածութիւն:

Աֆրիկայի անապատները—Սահարա և Կալահարի—բռնում են ահապին տարածութիւն: Նբանք համարեա բոլորովին զուրկ են որեէ բուսականութիւնից: Հովիտներում ե սարալանջերի վրայ, որտեղ հազւադէպ անդրէ է գալիս,

^{*)} Մասաղ բաօբաբներ համարեա ամեննեն չեն պատահում: այդ պատճառով պէտք է կարձեր որ այդ ծառերը կամաց-կամաց ոչնչանում են:



Նկ. 45. Սոսկալի հեղեղ փոթորիկ և որոտ ափերիկ անտառներ:

դակների վրայ, գտն. ում են գարձեալ տափաստաններ: Պարզակների վրայ, գտն. ում են գարձեալ տափաստաններ: Պարզակների համար այդ տափաստանները ծածկւում են ծաղիկներով և շատ գեղեցիկ տեսք ունեն: Ծովափի հովիտներում աճում են մշտականաչ տերեւաւոր ծառեր (միայն թէ ուրիշ տեսակի, քան Աֆրիկայի հիւսիսում):


Աֆրիկայից են ծագում շատ օգտակար բոյսեր: Հարեշը սանից է զուրս եկել սուրճի թուփը, Գուինէի անտառներից ձիթարմաւենին, Սահարայի ովազիսներից—փիւնիկեան որմաւենին և այլն:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ:—Աֆրիկայի կենդանական աշխարհը պատկանում է երկու՝ Աֆրիկական ու Եւրոպական-Ասիական շրջաններին։ Առաջին շրջանի կենդանիներ կան ամբողջ Աֆրիկայում, իսկ երկրորդ շրջանի կենդանիներ՝ մայր ցամաքի միայն հիւսիս-արևմտեան մասում։ Ամենից շատ կենդանիներ կան սաւաններում։ Այդտեղի փարթամ արօտատեղերում արածում են բազմաթիւ անտիլոպներ, ջայլամներ և զեբրեր։ Սաւանների վրայ ցըւած ծառերի ճիւ-



Նկ. 46. Կենդանական աշխարհը Զադ լճի ափերին։

զերից են կերակրուում ընձւղտները (ժիրաֆֆ): Խոտուկեր կենդանիներին հալածում են զիշակերները—առիւծներ, բորենիներ և շնագայլեր։ Սրանց սիրած տեղերն անտառների բոլորքն են, որտեղից գիշերը սաւանն որսի են դուրս գալիս էլի նոյն տեղ, անտառների շրջակայքում, թափառում են և ճիւղերով, արմտիքով ու պտուղներով կերակրուում ահաւ զին, հաստակաշիփուեր ոնդեղջիւրներ։



Նկ. 47. Կենդանական աշխարհը սաւաններում—Քարայծեր, ընձւղտներ (ակացիաների մօտ)

Աֆրիկայի անտառների խորքում համեմատաբար աւելի քիչ կենդանիներ կան։ Ամենից շատ այդտեղ պատահում են կապիլիներ և նրանց զիխաւոր թշնամիները՝ յովազներ (լէօպարդ)։ Յմենախուլ տեղերում փոքրիկ լնտանիքներով ապրում են մարդանման կապիկներ—շիմպանզէն և զորիլլա։ Յնտառների և սաւանների միջով հոսող զետերում ու լճերում ապրում են զետաձիեր (բեգեսուտ) և կոկորդիլոսներ։ Թէ անտառներում և թէ սաւաններում շատ կան միջատներ։

Նեղոսի վերին հոսանքի և մեծ լճերի մօտերքը լինում են շատ թռչուններ Զմեռն այդ կողմերն են դիմում Եւրոպայից չոր ահազին երամներ։



Նկ. 48. Յովազ (լէօպարդ)։

Հարաւային Աֆրիկայի տափաստաններում առաջ ապրում էին նոյն կենդանիները, ինչ որ սաւաններում, բայց այժմ նրանք համարեա թէ բնաշինջ են արւած: Այսպէս օրինակ՝ Հարաւային Աֆրիկայում փիղ մնացել է գեռ այն տեղերում, ուր արգելւած է սպանել նրանց:

Սահարայում կենդանիներ թիչ կան. այստեղ գտնւում են միւրյան կարիճներ, մողէմներ և օձեր: Դրանք ամիսներ շարունակ կարող են ապրել առանց ուտելու և խմելու: Հովհան-

Անապատների բոլոր կենդանիներն էլ մոխրաղեղնաւոն գոյն են ունենում, այդ պատճառով էլ դժւար է նրանց նկատել նոյն զոյն ունեցրդ ժայռերի և աւազի մէջ:

Առլասի երկիրներում ևս առաջ կային ջայլամներ և առիւծներ, իսկ այժմ նրանք համարեա բոլորովին բնաշինջ են արւած,

ՍԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ: — Աֆրիկան ունի մօտաւորապէս 150 միլիոն բնակիչ, այսինքն՝ տմբողջ մարդկութեան $\frac{1}{10}$ -ից էլ պակաս:

Աֆրիկան բոնում է առ 27 միլ. վերստ տարածութիւն, կընշանակէ իւրաքանչիւր քառակուսի վերստի վրայ միջին հաշուով գաւես է վեց մարդուց պակաս:

Աֆրիկայի տարբեր մասերում տարբեր չափով էլ բնակիչներ են ապրում: Անապատները համարեա անմարդաբնակ են: Սակաւ բնակութիւն կայ նաև արևադարձային ճահճոտ անտառների մէջ, որոնց խորքերում թափառում են միւրյան որսորդական մանրիկ ցեղեր: Աֆրիկայի սաւանները շատ աւելի խիտ բնակութիւն ունեն, քան կենտրոնական-ասիֆական տափաստանները, որովհետեւ սաւաններում անձրևների առատութեան պատճառով հսարաւոր է երերազործութեամբ պարապելը: Սմենախիտ ազգաբնակութիւն ունի նեղոսի ստորին հոսանքի բերբի հովիտը:

Աֆրիկայի ժողովուրդները պատկանում են երեք՝ սկ, սպիտակ և գեղին՝ ցեղերի: Սեւ ցեղին է պատկանում Աֆրիկայի բալոր բնակիչների $\frac{2}{3}$ -ից աւելին: Այդ ցեղին պատկանող գլխաւոր ժողովուրդն է Աֆրիկայում—Նեղըրը: Դրանք ապրում են սաւանների և արևադարձային անտառների ամբողջ տարածութեան վրայ և իրենց լեզվին նայելով բաժանում են երկու խմբի—Սուգանի և Բանտու նեղերեր:

Սկ ցեղին են պատկանում նաև հոտտենտոնները և բուշմէնները, որոնք ապրում են հարաւ-արևմտեան Աֆրիկայում: Նեղըրերից նրանք զանազանուում են իրենց աւելի փայլուն, բայց խորշումաւոր կաշուով և գանգուր մաղերով:

Սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդներից Աֆրիկայում շատ հսուց սկսած ապրում են՝ հիւսիսում և արևելքում՝ քա-

Նկ. 49. Շիմպանզե:

բով, որտեղ խոտ է բանում, մինչև հեռու անապատ թափանցում են անտիլոպներ Դրանց, ինչպէս նաև ջայլամների համար, դժւար բան չէ մի օրում մի քանի տասնեակ և հարիւրաւոր վերստ տարածութիւն անցնել՝ ուտելիք կամ խմելիք սրոնելու: Անապատների ծայրերում պատահում են զիշակներ — տախւծներ և բորնիներ:

Նկ. 50. Գորիլլայի ըստամիք:



մեան ազգեր—բերբերները, եզիպտացիները և այլն : Սպա Ասիայից են գաղթել սեմական ցեղեր—արաքները և հրեաները, որոնք ցըւած են ամեն տեղ քամիտների մէջ :

Քամեան և սեմական ազգերը նման են իրար թէ արտաքինով և թէ լեզով. միայն թէ քամիտների մէջ մի փոքր նկատելի են նեղ-ըերի մի քանի նշաններ—աւելի հաստ շրթունքներ, սակաւամազութիւն դէմքի վրայ: Երկուսի կաշի գոյնն էլ թուխ է:

Ելրոպացիները վաղուց չէ որ սկսել են ընակութիւն հաստատել Սֆրիկայում. Նրանց թիւը մեծ է միայն ամենա-հարաւային մասում, որտեղի կլիման նրանց համար առողջա-րար է:

Դեղին ցեղին պատկանում են միայն Մազագասկարի բնակիչները,—մաղագասները, որոնք այստեղ են գաղթել հա-ւանօքն Մալայեան արշիպելագից:

ԱՓՐԻԿԱՅԻ ԸՆԿՆՉԻՆ ՄԱՍՆԵՐԸ

ԵԳԻՊՏՈՍ:—Եզիպտոս կոչւում է ստորին Նեղոսի հովիտը՝ շրջակայ անապատային մասերի հետ: Այդ հովիտը ներկա-յացնում է մի տեսակ երկայնաձիգ ովազիս՝ Սահարա անա-պատի մէջ:

Հովտի լայնութիւնը հասնում է մինչև 50 վերստի. բայց մարդ-կանց բնակութեան համար պէտքական է միայն նրա այն մասը, որ ողողուում է ջրով, երբ Նեղոսը վարարում է և ափերից դուրս զալիս: Հովտի այդ մասի լայնութիւնը ոչ մի տեղ 15 վերստից չէ անցնում. միայն գելայում նա շատ աւելի լայն է: Հովտի մնացած ամրող մասն անապատ է, որովհետև Եզիպտոսի կլիման չոփազանց չոր է և անձրե համարեա երբեք չէ զալիս:

Եզիպտոսի բնակիչների թիւը հասնում է մօտ 10 միլիո-նի: Շրջակայքի անապատները համարեա անմարդաբնակ են: Ամրող ազգաբնակութեան $\frac{3}{4}$ -ը կազ բում են սպիտակ ցեղի քամեան ճիւղին պատկանող ֆելլաները: Դրանք հին եզիպ-տացիների սերունդ են, միայն թէ խառնւած են արաքների հետ և իւրացըրել են վերջիններիս լեզուն ու կրօնը—մահմեդա-

կանութիւնը: Նրանց կեանքը կախւած է Նեղոսից *): Գլխա-ւոր զբաղմունքն է՝ երկրագործովթիւնը:

Փարաւունների ժամանակից սկսած Նեղոսի հովիտն ամբողջապէս կտը-տած է ջրանցքներով. Դրանք երկու տեսակ են. կան այնպիսիները, որ խոր են, կան այնպիսիներն էլ, որ ծանծաղ են: Խոր ջրանցքներով ջուրը գետից գալիս է ամբողջ տարւայ ըն-թացքում, իսկ ծանծաղ ջրանցքնե-րով՝ երբ Նեղոսը վարարում է:

Նեղոսը վարարում է ամառը (ինչիւ), երբ եղանակը պարզ և շոգ է լինում: Վարարելուց Նե-ղոսը պղտորւում է, ջրանցքները լցում են ու արտերը ողողում: Ամեն ինչ ծածկում է ջրով, որից զուրս մնում են միայն արմաւենու անտառակներով, ծառերով ու քաղաքներով ծածկած կղզիներ:

Նկ. 51. Ֆելլան:


Պղտոր ջուրը կանգնած է մնում ամբարտակներով (թումբ, պատւար) շրջապատած գաշտերում, և գետինը ծածկում է պատւարը տիղմի հաստ շերտերով: Հոկտեմբերին միայն, արգաւանդ տիղմի հաստ շերտերով կրկին իջնում է, ֆելլաները ցանում են թաց երբ ջուրը կրկին բակլա, եզիպտացորեն, բամբակ, շաքա-րեղեգ և այլն: Այս բոլորը ըսնում են ուշ աշնանը և ձմեռը: Երբ լինում է այդ պարենը, այս բոլորը մեղնում գաշտերը ձիւնով են ծածկած վինում, եզիպտոսում կանաչում են փարթամ ցանքսերը: Հունձը լինում է գարնանը—մարտին և ապրիլին:

Հունձից իտոյ ֆելլաները սկսում են մաքրել ջրանցքները, որոնք տիղմով են ծածկած լինում, Տիղմը զամբիւզների մէջ են ածում սրանք են ծածկած լինում, Տիղմը զամբիւզների մէջ են ածում սրանք են բարձրացնում ու նրանով ամբարտակները: Նրանք, վեր են բարձրացնում գաշտերը ճիւղնով են ծածկած չարիւր հազարերը ֆելլաներ ամեն գարուն այդ գործով են զբաղում:

*) Զուր չէ, որ ֆելլան երբ նախնիները հին եզիպտացիներն աստւածացը երբ նեղոս գետը, աղօթելիս նրանք զիմում էին այս խօսքերով. «Փառք քեզ, նեղոս» գաղանացնում են Եզիպտոսը:



Հունձը Եղիպտոսում միշտ էլ շատ առաջ է լինում: Այսի տեղ ցանքսն այնպիսի հունձ չէ տալիս, ինչպէս Նեղոսի հովտում: Այդ պատճառով ազգաբնակութիւնն այդտեղ խիս է: Ամեն տեղ, համեմատաբար մի փոքր բարձրադիր վայրերում, ցըւած են Փելլաների զիւղերը: Տներն այդ գիւղերում շինած են լինում իրար շատ մօտ, այնպէս որ հարթ կառուները յաճախ իրար են կպչում:



Նկ. 52. Կահիրէ:

Բացի Փելլաներից՝ Եղիպտոսում ապրում են նաև որպատճեր (կոպտեր): Եւ արաբներ Ղալիներն ևս իրենց ծագումով հին Եգիպտացիների սերունդ են, բայց Փելլաներից զանազանում են նրանով, որ քրիստոնեայ են, պարապում են արհեստներով և առևտով ու ապրում են զլիսաւրապէս քաղաքներում: Ղալիների թիւն է մօտ 700,000: Սրաբների մի մասն ապրում է քաղաքներում և առևտով է պարապում: Իսկ մեծամասնութիւնը, այսպէս կոչւած բեղուիները, վաշ-

կառուն կեանք է վարում: Վերջապէս՝ Եղիպտոսի քաղաքներում ապրում են նաև յոյներ, հայեր, թիւրքեր ու եւրոպացիներ:


Եղիպտոսի առեալորական նշանակութիւնը շատ մեծ է: Այնտեղից Եւրոպա են արտահանում մեծ քանակութեամբ ցորեն և բամբակ: Բացի զրանցք՝ Եղիպտոսի վրայով է կատարեւում առևտուրը Աֆրիկայի ներքին մասերի հետ—Նեղոսվ, երկաթուղով կամ կարաւաններով: Յատկապէս մեծ նրաշանակութիւն ստացաւ Եղիպտոսը, երբ 1869 թւականին փորւեց Սուէզի ջրանցքը: Այդ ջրանցքը, որի երկայնութիւնն է 110 վերստ, միացնում է Միջերկրականը Կարմիր ծովի հետ: Այդ ջրանցքով են երթեւկում նաև Եւրոպայի, Ասիայի, Աւստրալիայի և արևելյան Աֆրիկայի միջև: Սուէզի ջրանցքի շնորհիւ Եւրոպայից Հնդկաստան տանող ճանապարհը 7000 վերստով կարճացաւ:

Մինչեւ Եւրոպական մեծ պատերազմը Եղիպտոսը կառավարում էր խեղիւր, հարկ էր վճարում Թիւրքիայի սուլթանին, իրապէս ենթակայ լինելով անդիացիներին: Ներկայումս Եղիպտոսն այլևս չէ գտնուում Թիւրքիայի գերիշխանութեան տակ, այլ կազմում է բրիտանական կայսրութեան մէկ մասը: Երկիրը կառավարում է Եղիպտոսական սուլթանը, որ նշանակում է Անգլիայի կողմից: Եղիպտոսական բոլոր պաշտօնեանները, զօրապետները և բարձր զինւորականներն անգլիացիներ են:

Եղիպտոսի մայրաքաղաքն է Կահիրէ, որ գտնում է Նեղոսի գելտայի սկզբում: Կահիրէն ամենամեծ քաղաքն է ոչ միայն Եղիպտոսում, այլ նաև ամբողջ Աֆրիկայում (ունի մօտ 600,000 բնակիչ):

Կահիրէից ոչ հեռու գտնուում են հին փարաւոնների դամբարանները—հսկայական բաւրգեր, պիրամիդներ: Թէպէտ զրանք շինած են Քրիստոսից մի քանի հազար տարի առաջ, բայց և այնպէս մինչեւ օրս էլ լաւ են պահել, որովհետեւ պինդ քարից են: Բուրգերի ներսում գտնաել են փարաւոնների զմբսած մարմինները, որոնք մումիա են կոչում, Բուրգերից շատերի վրայ էլ մնացել են հին Եղիպտացիների նշանագրերը, որ հիերօգլիֆ են կոչում, Եղիպտոսում կան հնութեան շատ ուրիշ մնացորդներ:

Եղիպտոսի ամենանշանաւոր նաւահանգիստն է՝ Ալեքսանդրիա. միացած է Նեղոսի հետ նաւատար ջրանցքսկ, իսկ կահիրէի հետ՝ երկաթուղով: Թէ Կահիրէում և թէ Ալեքսանդրիայում ապրում են բաւականաչափ հայեր, պլաստրապէս թիւքիայից դադթած:



Ակ. 53. Պիրամիդներ և սփյուռ:

Սուէզի ջրանցքի հիւսիսային ծայրում գտնվում է Պորտ-Սայիդ մեծ քաղաքը, իսկ հարաւում՝ Սուէզ:

ԱՏԼԱՍԻ ԵՐԿԻՐՆԵՐԻ: (Մարոկկօ, Ալժիր եւ Թունիս, Տրիպոլի եւ Բարկա): Ատլասը բաղկացած է մի քանի լեռնաշղթաներից, որոնք ձգւում են Ատլանտեան ովկիանոսի Միջերկրական ծովի ափերի երկայնութեամբ: Ատլասի ծովագույն եալ այլ առաջնաշատ շատ աեղերում ծածկւած են մերձարեալարձային անտառներով, որոնց մէջ աճում են մշտադալար ծառեր: Զմեռային յորդ անձրեների շնորհիւ ծովագնեայ մասը յարմար է երկրագործութեան և այգեգործութեան համար: Ատլասի լեռնա-

շղթաների մէջ ընկած բարձրագիր հովիտները ներկայացնում են չոր տափաստաններ, ուր յաճախ լինում են աղուտ լճեր: Այդ տափաստանները ծածկւած են խոտով և յարմար են անասնապհութեան համար: Ատլասի հարաւային ստորոտներից սկսում է անապատը, որի ովազիսներում միայն ապրել կարելի է:

Ատլասի ազգաբնակութեան մեծ մասը, բնիկները, սպիտակ ցեղի քամեան ճշլզին պատկանող ըեղբերներն են, որոնք ամենահին ժամանակներից սկսած ապրում են այդտեղ: Ալժիրում նրանք քարիլ են կոչւում: Ասիայից Ատլաս են եկել յետոյ սեմիտ արաբները: Մրանք հպատակեցրել են բերբերներին և երկար ժամանակ իշխել նրանց վրայ. իսկ արևմտեան Ատլասում մինչեւ օրս էլ իշխող են: Քաղաքներում յիշած երկու ժողովուրդները խառնւել են իրար հետ, այդ խառնուրդ ժողովրդին պատկանողները կոչւում են մարեր:

Մրաբները հովիւներ են և պարապում են գլխաւորապէս անասնապահութեամբ: Նրանք սիրում են թափառել, բնակւում են վրաններում: Թափառելիս նրանք կողոպտում են նստակեաց բերբերներին:

Բերբերները նստակեաց կեանք են վարում: Նրանց գլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը և այգեգործութիւնը: Հունձը սովորաբար լաւ է լինում, միայն թէ մորեխը երբեմն փչացնում է ցանքսը: Այն միջոցին, երբ տղամարդիկ աշխատում են արտերում, կանայք զբաղում են խաղողի և այլ պաղատու ծառերի մշակութեամբ:

Ատլասի երկիրների համարեա բոլոր բնակիչների կրօնը մնանմաղականութիւնն է: Լեզուն՝ արաբներէնը:

Կառավարութեան նայելով՝ այդ երկիրները բաժանւում են մի քանի մասի:

Արևմուտքում՝ գտնվում է ՄԱՐՈԿՈ երկիրը, որ մինչեւ վերջին ժամանակներս անկախ պետութիւն էր: Ներկայումս Մարոկկօն գտնվում է Ֆրանսիայի հովանաւորութեան տակ:

Մարոկկօի գլխաւոր քաղաքներն են՝ Ֆէս և Մարոկկօ: Մարոկկօի գլխաւոր քաղաքներն է՝ Տանժեր. այդտեղով է կատարվում առեստուրը եւրոպայի հետ:

Ալժիր և ԹՈՒՆԻՍ երկիրները կազմում են Ատլասի արևելեան մասը և պատկանում են ֆրանսիացիներին: Ֆրան-

սիացիները շատ օգտակար գործեր են կատարել այդ գաղութներում: Նրանք այնտեղ հաստատել են կարգ ու կանոն, անց են կացրել շատ երկաթուղիներ: ոռոգել են Սահարային մօտ եղած շատ հողամասեր, այնտեղ արտէզեան խոր ջրհորներ փորելով: Այնտեղ, ուր առաջ անապատ էր, այժմ ծաղկում են փիւնիկեան արմաւենու շատ պուրակիներ: Արդիւնազոր ծութիւնը և առևտուրը, դարձեալ ֆրանսիացիների շնորհիւ, զարգանում են այնտեղ: Եւրոպա են արտահանում շատ գինի, միրգ փշակաղնու կեղև և այլն: Ընդհանրապէս ֆրան-



Նկ. 54. Հրապարակ Թունիսում:

սիացիները զնում են այնտեղ հում նիւթեր, իսկ ծախում են իրենց գործարաններում պատրաստած ապրանքներ: Գլխաւորքաղները և նաւահանգիստներն են՝ Ալժիր և Թունիս:

ՏՐԻԳՈԼԻ և ԲԱՐԿԱ երկիրներն իրենց կլիմայով նման են Թունիսին և Ալժիրին. միայն թէ այնտեղ անձրև աւելի պաշատ է գալիս: Այդ պատճառով էլ բնակիչներն ըստն արաբներ և բերբերներ) աւելի աղքատ կեանք են անցկացնում: Այդ երկրները մինչև վերջերս պատկանում էին Թիւրքիային, իսկ ներկայումս նւաճւած են իտալացիների կողմից և կա-

մում են նրանց գաղութները: Իտալացիները հոգ են տանում նախ և առաջ կարգ ու կանոն ստեղծել այդ երկիրներում, զսպել արաբական շէյխներին, որոնք թիւրքական տիրապետութեան տակ սովոր էին անպատիժ կերպով աւազակութիւններ անել:

Սահարան աշխարհիս անենամեծ անապատն է. նա տարածւում է Սֆրիկայի Ատլանտեան ովկիանոսից մինչև կարմիր ծովի ափերը, և Ատլասի սարերից ու Միջերկրական ծովից մինչև Սուեզ: Սահարան մեծ է եւրոպական Ռուսաստանից և հաւասար է եւրոպայի $\frac{2}{3}$ -ին: Ամբողջ անապատը ծածկւած է լեռկ ժայռերի շեղերով կամ աւազաթմբերով: Սահարայում գչում է սամում կոչւող աւազարեր փոթորիկը: Այդ փոթորիկը թէն կարճ է տեսւմ, բայց և այնպէս ցամաքեցնում է



Նկ. 55. Տիւրքական:

ջուրը, ջրհորներն աւազով է լցնում ու ճանապարհորդներ ոչնչացնում: Տարիներ շարունակ անձրև չէ գալիս Սահարայում: Շոգը ստեերի տակ հասնում է 30—40 աստիճանի:

Սահարայի միայն լենոտ տեղերում կարող է մարդ ապրել, ուր անձրւներ են գալիս և խոտ է բնուում. բնակւել կարելի է նաև ովազիսներում, ուտեղ ջուր է գուրս գալիս և աճում են փիւնիկեան արմաւենիներ:

Լեռնոտ տեղերում ապրում են թափառաշրջիկ ցեղեր. Սահարայի արևմտեան կիսում տուաւեգները, որոնք բերբերական ցեղին են պատահում: Սարալանչերի աղքատ արտատեղերում պահում են նրանք կանում:

այծ, ոչիսար և ուղտ: Յաճախ տուարէզները յարձակումներ են գործում կարաւանների վրայ և կողոպուտներ անում. երբեմն արշաւում են մինչև Ատլաս և Սուդան:

Ովազիսներում ապրում են նաև բերբերներ: Դրանք սաստիկ խառնւել են արաբների և մասամբ նեղերի հետ: Նրանց ամրող կեանքը կախւած է փիւնիկեան արժաւենուց*):

Տարւայ ընթացքում մի քանի անգամ Սահարայով Սուդանից

Տրիպոլի են անցնում կարաւաններ և ծախելու տանում ջայլամի փետուր ու փղոսկր: Վերադարձին բերում են եւղոպական տպրանքներ:

Սահարայի մեծ մասը պատկանում է Թրանսխին, բայց ֆրանսիացիների իշխանութիւնը ճանաչում են միայն Ալժիրի սահմանին մօտ գտնող բնակիչները:

Սահարայի և Սուդանի սահմանի մօտ է զանուում Տիմրուկու քաղաքը Նիգեր գետի վրայ:

ՀԱԲԵՇԱՏԱՆ:—Հաբէշստանը բարձր սարահարթ է, ամբողջապէս կիրճերով կտրաւած. ունի բազմաթիւ լեռներ՝ մեծ մասը հարթ գաղաթներով: Այդ գաղաթները ծածկւած են լինում աւազի շերտերով կամ հանգած լաւայով^{**)}: Կան նաև շատ հանգած հրաբիսային սարեր՝ մինչև 4 վերստ բարձրութեամբ:



Նկ. 56. Տուարէգ:


Մարդկային բնակութեան համար ունիցած յարմարութեանը նաւելով՝ Հաբէշստանը կորելի է բաժանել երեք շրջանի՝ ստորին, միջին և վերին: Ստորին մասը շատ շոգ կլիմայ ունի. հովիտներն ամբողջապէս ծածկւած են տրիադարձային անտառներով, ուր վիտում են բազմաթիւ կապիճներ ու յովազներ (լէօվաբղ), պատահում են նաև առիւծներ, ընձուղտներ, փղեր և ոնդեղիւրներ: Գետերում կան կո-

*) Անապատի բնակիչներն արժաւի համար առում են՝ «Միակ միիթարութիւն» աղքատների, օգնողը և փրկիչն ամենքի:

**) Այդպիսի լեռները Հաբէշստանում ամբ են կոչում:

կորդիլուսներ և բազմաթիւ զետաձիեր (բեգեմոտ): Մարդկանց բնակութեան համար անյարմար է այս մասը, ամառը, անձրէների ժամանակ, հովիտներով հոսում են արագավազ հեղեղներ, որոնք տփերից գուրս են գալիս և ղղողում շրջակայքը: Շատ յարմար չեն բնակութեան համար նաև երկրի վերին՝ ցուրտ մասը, որ բաղկացած է $2\frac{1}{2}$ վերստ բարձրութիւն ունիցող բարձրաւանդակներից: Սարերի գաղաթներն այս մասում երկար ժամանակ ծածկւած են մնում ձիւնով:

Բնակութեան համար ամենից յարմար է երկրի միջին՝ տաք մասը: Այդտեղ լաւ աճում է խաղողի որթը. այդտեղ է սուրճի ծառի հայրենիքը, ուր և շատ լաւ աճում են՝ ցորեն, գարի, կորեկ: Ծաղկաւէտ արօտատեղերն ել կերակրում են կովերի, ոչխարների և այծերի բազմաթիւ հօտեր:



Նկ. 57. Տիմրան Հաբէշստանի լեռներում:

Հաբէշները խառնուրդ ժողովուրդ են Նրանք սեմական ցեղին են պատկանում, Արաբիայից են գաղթել այս երկիրը, ուր և խառնւել են քամեան ցեղին պատկանողների ու նեղըրերի հետ: Շատ վաղուց արդէն նրանք ընդունել են քրիստոնէութիւնը: Սակայն կուապաշտական և մահմեդական հուատալիքներ ու սովորութիւններ դեռ շատ կան հաբէշների մէջ:

Հաբէշների գլխաւոր զբաղմունքներն են երկրագործու-

թիմը եւ անասնապահովմինք: Որովհետեւ ամառ ժամանակ Հարէշստանում շատ անձրեւ է գալիս, այդ պատճառով էլ հունձն այնուեղ միշտ էլ լաւ է լինում:

Հարէշստանի առանձին մասերը կառավարում են իրենց իշխաններով, որոնք յաճախ յարձակութիւններ են գործում իրար վրայ և աւերում երկիրը: Այդ իշխանները կոչւում են «Նեգուս»: Ամբողջ Հարէշստանի կառավարողն է «Նեգուսի»-ն՝ թագաւորների թագաւորը, որին հարկ են տալիս միւս իշխանները: Նա անսահման իշխանութիւն ունի իր հպատակների կեանքի և մահւան վրայ:

Հարէշստանի զլիաւոր քաղաքն է՝ Աղդիս-Արեքա: Թէպէտ նա ունի մօտ 100 հազար բնակիչ, բայց նման է ոչ թէ քաղաքի, այլ մի մեծ գիւղի:

ՍԱԻԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՐԵՒԱԴԱՐՁԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՇՐՋԱՆ:—Աֆրիկայի այդ մասը տարածւում է Սահարայի հարաւային ծայրեց մինչև Կալահարի և Սալանտեան ովկիանոսի ափերից՝ մինչև Հնդկական ովկիանոսի ափերը:



Նկ. 58. Նեգր:

Չմեռւայ ամիսներին անձրեւ գալիս է միայն Գուինէի ծոցի ափերին և կոնգո գետի աւաղանում: այդ պատճառով էլ այնուեղ աճում են արեալարձային անտառներ: Սակայն մարդկային բնակութեան

համար այդ անտառներն անյարմար են, շատ քիչ տեղ կայ այստեղ երկրագրծութեան համար, անտառներն էլ մաքրելլ հեշտ բան չէ:

Սաւաններում և արեալարձային անտառներում ապրում են Սուղանի և բանտու նեղորեր:

ՍՈՒԻԴԱՆ (այսինքն՝ «սև մարդկանց երկիր») կոչում է այն ընդարձակ երկիրը, որ ընկնում է Նիգեր գետի ակունքներից մինչև Սահիտակ Նեղոս: Իր տարածութեամբ Սուղանը համարեալ հաւասար է եւրոպական Մուսաստանին:

Սուղանի նեղորերը բանտու նեղորերից տարբերում են միայն իրենց լեզուով: Նեղորերի զլիաւոր զբաղմունքն է՝ երկագործովիմը: Նրանք չգիտեն թէ ինչ բան է գութան կամ արօք, հողը փորում են բրիչներով կամ հասարակ, ծայրը սրած փայտերով: Ամենից շատ ցանում են նրանք աֆրիկական կորեկ (գուրբու): Ցաջողութեամբ մշակում են նաև բան, շաքարեղեգ և ուրիշ շատ բոյսեր:

Ծառերից նեղորերը մշակում են միայն արմաւենիներ, մասնաւորապէս ծիթարմաւենի:



Նկ. 59. Բնանակիրների կարառանն անցնում է սուղանով:

Անստանպահովինը սաւաններում ամեն տեղ զարդացած չէ: Խոկ բուն Սուղանում և Նուբիայում (Նեղոսի միջին հոսանքի երկրամասում) անստանպահութիւնը ծաղկած

վիճակի մէջ է և աւելի մեծ նշանակութիւն ունի, քան երկրագործութիւնը:

Արևադային անտառներում ապրում են բզուկների ցեղեր, որոնք զբաղում են միայն որորդութեամբ և որսի մանգալով անդադար մի տեղից ուրիշ տեղ են թօփառում:

Նեգրերը նստակեաց կեանք են վարում. ապրում են զիւղերում: Քաղաքներ շատ քիչ ունեն նրանք, որովհետեւ առետուբը զարգացած չէ նրանցում: Մեծ քաղաքներ կան միայն Սուդանում, օրինակ՝ Կուկա, Կանօ, Տիմբուկտու:

Նեգրական պետութիւնները շատ մանք են, նրանք շատ արագ կերպով կազմուում են, բայց նոյնչափ արագօրէն էլ անհետանում: Նրանց պետերի իշխանութիւնն իրենց հպատակների կեանքի և մահւան վրայ անսահման է:

Նեգրական ամենանշանաւոր պետութիւնն է Լիբերիա հասարակապետութիւնը՝ Մոնրովիա գլխաւոր քաղաքով: Այդ հասարակապետութիւնը հիմնել են այն նեգրերը, որոնք Ամերիկայում սարկութիւնից ազաւելով Աֆրիկա են եկել:

Ոչ մի տեղ ստրկութիւնն այն չափերի չէ հասած, որչափ Աֆրիկայում: Այժմ էլ, երբ Ամերիկայում ոչնչացել է ստրկութիւնը, Աֆրիկայի շուկաներում ստրուկներն առետրի ամենասովորական առարկաներն են: Կենտրոնական Աֆրիկայում յազմւած թշնամիներին յաճախ ու սում են: Սրանով յայտնի են առանձնապէսնեամնեամն և մ'ները (նշանակում է «լափողներ»): Նրանք ուտում են ոչ միայն սպանւած թշնամիներին և գերիներին, այլ նաև իրենց ցեղակիցներին, օրինակ՝ որբերին և անօքնական մարդկանց: Նրանց գիւղերում ամեն տեղ թափթած կարելի է տեսնել մարդկային ոսկըներ, իսկ լափած թշնամիների զանգերը նրանք կախ են տալիս ծառերի ճիւղերից՝ իբր զարդարանք:

Նեգրերի երեխաները հեշտութեամբ են սովորում կարդալ-գրել և շուտ են իւրացնում օտար լեզուներ: Սակայն նրանց զարգացումը շուտ էլ կանգ է առնում, և նրանք ամերող կեանքի ընթացքում երիխայի պէս են մնում — չեն մտածում բնաւ էզուցւայ մասին, սիրում են խաղեր, շատախօսութիւն և զւարձութիւն:

Նեգրերը չեն սիրում յարատե աշխատանք: Թէպէտ նրանք շատ ուժեղ են, բայց աշխատանքի մէջ ամենեին չեն կարող համեմատել եւրոպացիների հետ. այդ կողմից նրանք յետ են նոյն իսկ թուլակազմ հնդիկներից:

Նեգրերի կրօնը ֆետիշական է: Ֆետիշ կոչում են այն հասարակ առաջկաները, որ պաշտում են նեգրերը: Սրանք հաւատում են, թէ այդ առարկաների մէջ կամ նըանց մօտ գտնուում են բարի կամ չար ողիներ, որոնք կարող են օդ-նել կամ վնասել մարդու: Մարդկանց և ողիների մէջ եղած միջնորդներն են քուրմբը: Սրանք ողիների սիրտն առնում են ազօթքներով, պարերով և զոհերով (յաճախ մարդկային զոհերով): Թուրմերը բժժշկում են նաև հիւանդներին, միայն՝ ոչ թէ գեղերով, այլ կախարդութեամբ:

Վերջին դարերի ընթացքում նեգրերի մէջ ֆետիշական կրօնը սկսեց տեղի տալ մահմեղականութեան, զլխաւորապէս շընորհիւ արար վաճառականների և որսորդների: Իսկ քրիստոնէական քարոզը նեգրերի մէջ առանձին լաջողութիւն չէ գտնուում:

ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՍԱԽԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ: — Շնորհիւ նեգրական պետութիւնների թուլութեան եւրոպացիները կարողացան տիրել կամ առանց որևէ պատեհականութեամբ կարգավաճառիւ իրար մէջ Աֆրիկայի բոլոր սաւանները և անտառապատ մասերը (չհաշւելով Լիբերիա հասարակապետութիւնը):

Եւրոպական այդ գաղութների կլիման շատ վատասող է (ամեն տեղ զոհեր է տանում մալիսարիան). այդ պատճառով էլ նրանք անյարմար են եւրոպացիների բնակութեան համար և միայն առեւտրական տեսակէտից նշանակութիւն ունեն: Եւրոպացիներն այդտեղ ներմուծում են՝ հրագէն, ձոթեղէն, ապարանջան և ուրիշ զարդարանքներ, որ շատ են սիրում նեգրերը: Իսկ նեգրերից նրանք գնում են՝ արմաւի իւղ, կառւչուկ, փղի և գետաձիու ժանիք, զարգանների մորթ:

Առևտրի յարմարութեան համար եւրոպացիներն անց են կացրել մի քանի երկամուղային զծեր, իսկ մեծ գետերի և ձերի վրայ սարքել են նաև զարգանացութիւն:

Մի քանի տեղերում եւրոպացիները գցե են շաքարեղեգի աւր-



Կ. 60. Բանւած թզուկ
(աղեղով և թունաւորած նետերով)

Ճի և կակաօի տնկարաններ (պլանտացիաներ). բայց այդ տնկարանները չեն ծաղկում, որովհետև նեփրերը չեն սիրում տեսլան աշխատանք, իսկ եւրոպացիները հիւանդանում են ջերմից: Եւրոպացիները սովորաբար ապրում են ֆակտորի անելում, այսինքն առեւարական կայաններում, շինւած այս ու այն տեղ՝ ովկիանոսի կամ մեծ գետերի ափերին: Իւրաքանչիւր ֆակտորիա ամրացրած է ամուր ցանկապատով և պահպանում է սեամորթ գինուրների վաշտով՝ սպիտակամորթ սպայի զեկավարութեամբ:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ: — Կիմային նայելով՝ Հարաւային Աֆրիկան կարելի է բաժանել երեք մասի: Հնդկական ովկիանոսի խոնաւ ծովափ, Օրանժ գետի սակաւածուր աւազան և կալահարի ջրազուրկ անապատ:



Նկ. 61. Զուլունատու

Կալահարիի չորութեան պատճաներից մէկն այն է, որ Հարաւ. Աֆրիկայի արևմտեան ծովափի երկայնութեամբ անցնում է զուր նուանի, որ շատ քիչ դուրշիներ է թողնում:

Հարաւ. Աֆրիկայի բնիկ ազգաբնակութիւնը կազմում են—արևելեան մասում՝ զուլուները կամ քաքրերը (որ բանտուներից են), իսկ արևեմտեան մասում՝ հոտենտոտները: Եւ բոշմէնները: Ոյդ վայրենի ցեղերի գլխաւոր ղբազմունքն է անասնապահութիւնը:

Հարաւային Աֆրիկայի առողջ կիման և գեղեցիկ արօտատեղերը վագուց արդէն սկսեցին գէպի այդ կողմերը զբաւել եւրոպացիներին: Առաջին անգամ հոլլանդացի դիւդա-

ցիներ (ըուլեր) եկան այդ կողմերը 17-րդ դարում, իսկ 19-րդ դարի սկզբից՝ նաև անգլիացիները, որոնց ձեռքում և գտնում է այժմ համարեա ամբողջ Հարաւային Աֆրիկան:



Նկ. 62. Բուշմէն

Բուրերը սկզբում հաստատեցին Թարեյանոյ հրանդանի մօտ, որտեղ նրանք հիմնեցին Կապեսադս քաղաքը:

Բուրերը նւաճեցին ակղական մի քանի ցեղեր և հիմնեցին երկու հասարակապետութիւններ— Օւանձ և Ծրանավար: Երբ իմացւեց, որ այդ երկիրները հարուստ են ուկու և արմաստի հանգերով, անգլիացիները երկար և յամառ պատերազմելուց յետոյ նւաճեցին այդ հասարակապետութիւններն ու իրենց գաղութները դարձրին:

Թէ եկուրների և թէ բնիկների գլխաւոր զբազմունքն է անասնապահութիւնը: Հարաւ-

ային Աֆրիկայի տափաստաններն ամառ ժամանակ շատ չեն չորանում, ձմեռն էլ ձիւնով չեն ծածկում: Ամբողջ տարին չորսեղ արածում են ոչխարի և եղջիւրաւոր խոշոր կինդանիների հօտեր ու նախիրներ: Վերջին ժամանակներս Հար, Աֆրիկայում սկսել են պահել մեծ քանակութեամբ ջայլամ (թանգուգին փետուրների համար) և անզորական այծ (թաւշանման բուրդի համար): Անզորական այծը բերել է Փոքր Ասիայից:

Երկրագործութեան համար Հար, Աֆրիկայի տափաստանների կիման շատ է չոր. ցորենի և ուրիշ հացաբոյսե-



Նկ. 63. Բուր (Բուր)

բեր արտերը լուս հունձ են տալիս միայն արւեստական կերպով ուսուցելուց յետոյ:

Սակայն Հար. Աֆրիկայի գլխաւոր հարստութիւնները հողի ծոցում են թափնած — ոսկին և ալմաստը:

Անցեալ դարի վերջին Տրանսվալում գտնւեցին ամենալուսան ոսկու հանքերը: Հազարաւոր մարդիկ զիմեցին գէպի այդ երկիրը և շուառվ հիմնեց Յովիաննէսբուրդ քաղաքը. հիմնելով մեզնից ընդամենը 30 տարի առաջ, այժմ նա դարձել է ամենամեծ քաղաքն ամբողջ Հարաւային Աֆրիկայում (ամսի համարեա 200,000 բնակիչ):

Ոսկու հետ միաժամանակ Հար. Աֆրիկայում գտնւեց նաև աղամանը (ալմաստ), — մանաւանդ Վաալ գետի հովտում*): Շատ եւրոպացիները դէպի Հարաւային Աֆրիկա շտապեցին հարստանալու նպատակով: Հանքահորերում (շախտաներում) եւրոպացիների հակողութեան տակ աշխատում են քաֆրերն ու աղամանդ որոնում: Ամենահարուստ հանքերի մօտ հիմնեց և կարծ ժամանակւայ ընթացքում մեծացաւ Քիմբելլէյ քաղաքը:

Ոսկու և արծաթի հանքերի շահագործումը գտնուում է անզիացիների ձեռքում: Բուրերը առաջւայ նման անամսապահութեամբ են պարապում և ասլրում են տափաստաններում՝ իրենց պարզ, բայց յարմար ագարակներում (ֆերմա): Քաֆրերը և հոտենտոտները նմանապէս պահում են անասուններ և ապրում են զիւղերում (կրաալ): Բուշմէններին եւրոպացիները համարեա բնաջինջ են արել. մնացրդները քշւել են կալահարի անապատը և այնտեղ թափառաշրջիկ որսորդների կեանք են անց կացնում: Հանքերում աշխատում են միայն ամենաաղքատ քաֆրերը, այն էլ՝ ոչ-սիրով. այդ պատճառով վերջին ժամանակներս անզիացիները սկսել են Հար. Աֆրիկա բերել չինացի կուկիներ (բանւորներ):

*) Հոտենտոտն երեխաներն առաջ էլ վատակ գետի մօտ յաճախ գտնում էին «ջրի նման պարզ քարեր» ու խաղում նրանցով: Մի բուր մի անզամ իր հարեանից նւէր ստանալով մի այզպիսի քար՝ տանում է եւրոպա, երկում է, որ դա աղամանդ է. ծախում է թանգ գնուով: Վերադառնալով կրկին եւրոպա է տանում նման մի քար ու 100 հազար սուրբով ծախում: Այնուհետև շատերն են դիմում գէպի վաալի հովտը:

Ոսկին, արծաթը, բուրզը և հար. Աֆրիկայի ուրիշ արտադրութիւններ արտահանուում են Եւրոպա հետեւեալ նաւահանգիստների վրայով. — Կապշատադտ, Պորտ-Եղիսաբէթ և Պորտ-Նաթալ: Այդ նաւահանգիստներից դէպի երկրի խորքերն անց են կացրած երկաթուղային գծեր:

Ամբողջ Բրիտանական Հարաւային Աֆրիկայի գլխաւոր քաղաքն է՝ Կապշատադտ. այնաեղ է ապրում անզիական բնդիմուր նահանգապետը, որի իշխանութիւնը սահմանափակւած է ժողովրդից ընտրւած ներկայացուցիչների ժողովով:

Բուրեղի նախկին հասարակապետութիւնները, իսկ ներկայումս անզիական գաղութիւններ՝ Օրանժը և Տրանսվալին ինքնավար են, կառավարում են ժողովրդից ընտրւած իշխանութիւնների ձեռքով: Անզիացիները, տիրելով բուրերին, շնորհեցին նրանց ներքին ինքնավարութիւն:

Աֆրիկան կազմութիւնը: — Աֆրիկային պատկանում է միայն մէկ հատ մէծ կղզի՝ Մադագասկարը. դա քարակորչերից է բաղկացած և ծածկւած է սաւաններով ու արևադարձային անտառներով. ունի տաք, վատագառողջ կլիմայ: Կղզու բնակիչներն են մադագասկանները, որոնք պատկանում են մալայեան ցեղին, վերջինս կղզու արևմուտքում խառնել է բանտու նեղերի հետ և սրանց նման էլ կեանք է վարում:

Աֆրիկայի մնացած կղզիները չնչին են իրենց մեծութեամբ: Նըրացած մասը հրաբխային ծագում ունի. օրինակ՝ Մադեյրա, Կամբաւան, Համբարձման, Ա. Ճեղինելի, Մասկուենան կղզիները: Կան կղզիներ, օրինակ՝ Զանգիբարը, որոնք կորալլական ծագում ունեն:

Աֆրիկայի համարեա բոլոր կղզիներն էլ փարթած բուսականութիւն ունեն: Մասկուենան կղզիների վրայ մեծ չափերով մշտկում է թանգ գնուով: Մադեյրայի վրայ՝ խաղող, որից այստեղ լաւ զինի են պատրաստում:

Աֆրիկայի բոլոր կղզիներն էլ պատկանում են եւրոպացիներին: Մանզիբարը պատկանում է Փրանսիացիներին. Զանզիբարը, Ա. Մադագասկարը պատկանում է Գուանչուրին: Կղզիները՝ անզիացիներին, Մադեյրան՝ Հեղինէի և Համբարձման կղզիները՝ անզիացիներին: Եւրոպական համար կղզիներից շատերը պորտուգալացիներին: Եւրոպական համար կղզիներից շատերը ծառայում են իբրև լաւ կայաններ, որտեղ կարելի է գտնել պաշտը և ածուխ:

ԱՄԵՐԻԿԱ

ԲՆԴՀԱՆՈՒՄ ՆԿԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՐՔԸ, ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ԵԻ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ:— Ամերիկան գտնուում է արևմտեան կիսազնդում. երբ այնտեղ ցերեկ է նոյն այդ միջոցին մեզնում, արեկելեան կիսազնդում, գիշեր է լինում. և ընդհակառակը:

Քուոր աշխարհամասերից Ամերիկան բաժանւած է ովկիանուներով.—Եւրոպայից և Աֆրիկայից նա բաժանւած է Ասլանաւեան ովկիանոսով, Ասիայից և Աւստրալիայից—Մեծ կամ Խաղաղ ովկիանոսով: Միայն ամենահեռաւոր հիւսիսարևմուտքում, Բերինգեան նեղուցի մօտ, Ամերիկան բաւական մօտենում է Ասիային:

Տարածութեան նայելով՝ Ամերիկան մի քիչ փոքր է Ասիայից, իսկ երկայնութեամբ առաջին տեղն է ըստում բոլոր աշխարհամասերի մէջ. հիւսիսից հարաւ (Պրինց Ռեչլի հրանդանից մինչև Հորն հր.) նա ձգւում է 15,000 վերստ. իսկ արևմուտքից արեկելք, ամենալայն մասում, $5\frac{1}{2}$ հազար վերստ:

Ամերիկան բաղկացած է երկու մասերից—Հիւսիսային և Հարաւային Ամերիկա: Դրանք իրար հետ միանում են ցամաքի մի երկայն ու նեղ շերտով, որ կոչւում է կենտրոնական Ամերիկա: Կենտրոնական Ամերիկայի ամենանեղ մասը կոչւում է Պանամայի պարանոց, որի միջով ներկայումս փորած է համանուն Պանամայի ջրանցքը:

Հեռումն Ամերիկայի երկու մասերն առանձին-առանձին մայր ցամաքներ են եղած, իրարից բաժանւած. այդ է, պատ-

ճառը, որ այդ երկու մասերի բնութիւնը, յատկապէս բուսականութիւնը և կենդանական աշխարհը, բաւականաչափ տարբերում են իրարից: Ընդհակառակը՝ լեռների (հիւսիսից հարաւ ձգւող) և դաշտավայրերի գիրքին նայելով նրանք շատ նման են իրար. երկու մասերից իրաքանչիւրն էլ հիւսիս գնալով լայնանում է, իսկ հարաւ գնալով նեղանում:

Հիւսիս. Ամերիկայի ափերը շատ են կտրտւած. այնտեղ կան շատ թեքականութիւն եր, որոնցից ամենամեծերն են Լաբրադոր, Ֆլորիդա, Կալիֆորնիա, Ալեասկա:

Ծոցերից նշանաւոր են:—Հուդզոնի, Ս. Լաւրենտիուսի, Մեքսիկայի և Կալիֆորնիայի ծոցերը:

Հիւս. Ամերիկայի ափերին ընկած են շատ կղզիներ. Նշանաւոր են:—Նիու-Ֆառունդինդ, Գրենլանդիա, Բաֆֆինի երկիր:

Հարաւային Ամերիկայի ափերն ամենաին կտրտւած չեն, այնտեղ չկան մեծ թերակղզիներ և ծոցեր. նա ունի միայն մէկ նշանաւոր կղզի—Հրոյ երկիրը, որ մայր ցամաքից բաժանւում է Մագելլանի նեղուցով:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՒԾԸ:—Ամերիկայի գիւտը երպագիների կողմից տեղի է ունեցել երկու անգամ: Առաջին աներպագիների կողմից տեղի է ունեցել երկու անգամ: Առաջին գամ Ամերիկան գտան 10-րդ դարում Յումանները, —որոնք ապրում էին Սկանդինավական թերակղզու վրայ: Նոր երկիրներ որոնելու նպատակով Նրանք յաճախ էին ձեռնարկում ծովային հեռաւոր ճանապարհորդութիւնների, այդպիսով նրանք գտան սկզբում Գրենլանդիան, իսկ յետոյ Հիւսիսային Ամերիկայի արեկելեան ափը, որ և նրանք «իսազողի կոչերկիր» կոչեցին (որովհետեւ այդտեղ մեծ քանակութեամբ վայրի խաղող էր աճում): Նորմանները մեծ նշանակութիւն չտվին իրենց գիւտին և շուտով մոռացւեց այդ բանը, իսկ մնացած եւրոպացիներն այդ դիւտի մասին մի բան էլ չիմացան:

Երկրորդ անգամ, նորմաններից միանգամայն անկախ կերպով, Ամերիկան գտաւ Վրիսեափոր Կոլումբոսը: Սա իտալացի էր, ծենովտ քաղաքից, միայն թէ Խապանիայի թագաւորի մօտ էր ծառայում: Իր ժամանակի ուրիշ ծովագնացների նման Կոլումբոսը նպատակագրել էր գտնել ամենակարծ ճանապարհը գէպի Հնդկաստան: Նա մտածում էր, որ այդ նպատակին հասնել կարող է՝ եւրոպայից ուղիղ գէպի էր, իսկ այդ նպատակին հասնել կարող է՝ եւրոպացից ուղիղ գէպի արևմուտք գիմելով: 1492 թւականի օգոստոսի 3-ին Կոլումբոսը ճանապարհ ընկած կարտեակարծ համանուն ովկիանոսով, նոյն տարւայ հոկտեմբերի

31. Ին նա հասաւ Թահամեան կղզիներից մէկին: Կուբա և Հայիտի կըդզիներն էլ գտնելով՝ վերադարձաւ Խոպանիա և քերաւ ուրախ լուրը—վերջապէս գտնել է ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան (Կուլումբում էր, թէ իր գտած կղզիները Հնդկաստանի մօտ են, իսկ Կուբա կղզին նա Եապոնիայի տեղ էր ընդունում):

Յետոյ Կոլումբոսը երեք անգամ և ծովային ճանապարհորդութիւն կատարեց և գտաւ շատ նոր կղզիներ, նաև բռն Ամերիկա մայր ցամաքը, բայց միշտ էլ նա այն կարծիքին էր, թէ իր գտած երկիրները Հարաւ-Արևելիան Ասիայի մասերն են: Այդ համոզման մէջ էլ նա մեսաւ: Երոպացիները երկար ժամանակ նոր գտնեած երկիրները կոչում էին Հնդկաստան, իսկ յետոյ՝ Վեստ-Ինդիա, այսինքն Արևմտեան Հնդկաստան:

Պանւած երկիրները յայտարարւեցին իրեւ խոպանական կալածներ: Այսուհետեւ նորանոր ճանապարհորդներ սկսեցին յաճախել այդ կողմերը: Շատ ճանապարհորդութիւններից յետոյ միայն երոպացիները համոզւեցին, որ Կոլումբոսը նոր աշխարհամաս է գտել: Այդ նոր աշխարհամասն «Ամերիկա» կոչեց մի երկրորդական ճանապարհորդի—Ամերիգո Վեսպուչի—անունով, որ կազմել էր դժուած երկիրների նկարագրութիւնը և քարտեզը:

Կոլումբոսից յետոյ՝ Ամերիկայի հետազոտման համար ամենամեծ ծառայութիւնն արել է իսպանացի ծովագնաց Մագելլանը: Նա աշխարհի շուրջը ձեռնարկած իր ճանապարհորդութեան (1520 թ.)

միջոցին Աստվանտեան ովկիանոսից մատաւ յետոյ իր անունով կոչւած (Մագելլանի) նեղուցը, կարեց անցաւ Հարաւային Ամերիկան և առաջինը եղաւ, որ համոզւեց, թէ Ամերիկայի և Ասիայի միջև գտնւում է մի հսկայական ովկիանոս (որ նա Խաղաղ օվկիանոս կոչեց):

Այսուհետեւ երոպացի ճանապարհորդները մանրամասն հետազոտեցին Ամերիկայի զանազան մասերը: Հիւս. Ամերիկայի ծովափն ուսումնասիրեցին անգլիացի ծովագնացներ Դեվիթը, Հուգոնը, Թանքինը և ուր.: Մի քանի ճանապարհորդներ, որոնք փորձել են Ասլանտեան ովկիանոսից Խաղաղ ովկի, անցնել Հիւս. Սառ. ովկիանոսի միջով, ցրտից ու քաղցից իրենց կորուստն են գտել լողացող սառցակոյակերի մէջ: Այս-



Ակ. 64 Մագելլան:

պէս օր, ոչնչայոււ անցեալ գարում Թրանկիլին իր բոլոր ուղեկիցների հետ միասին:

Հիւս. և Հար. Ամերիկայի խորքերն ուսումնասիրեւն են մեծ մասով եւրոպացիների ձեռքով, այդ կողմից ամենամեծ ծառայութիւնն է մատուցել գերմանացի գիտնական Ալեքսանդր Ֆոն-Հումբորդտ:

ՄԱԿԵՐԵՒՌՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ:—Ամերիկայի արևմտեան ծովափի երկայնութեամբ—Ալեասկայից մինչև Հրոյ Երկիր—ձըգւում են աշխարհի ամենաերկայն լեռները—Կորդիլիերները, որոնք Հարաւային Ամերիկայում նաև Անդ են կոչւում: Այդ լեռները կարւում են միայն մէկ տեղ—Պանամայի պարանունները:

Կորդիլիերներն իրենց համարեա ամբողջ տարածութեան վրայ բաղկացած են մի քանի զուգահեռական լիննաշղթանեւթից: Հիւսիս-Ամերիկեան կորդիլիերներում այդպիսի լեռնալողաներ շատ կան, որոնք և իրենց առանձին անուններն ունեն—Ժայռոտ, կասկադեան, Սիերրա-Նևադա և այն: Այդ լեռնաշղթաների միջև ընկած են ընդարձակ բարձրաւանդակականներ. օրինակ՝ Մեքսիկայի և Խւտահ բարձրաւանդակականները:

Հարաւ-Ամերիկեան կորդիլիերները կամ Անդերը շատ աւելի նեղ են և մեծ մասով բաղկացած են երկու զուգահեռական լեռնաշղթաներից. Նրանց միջև ընկած են երկայնաձիգ, որինց միջև լայնատարած բարձրաւանդակներ. օրինակ՝ Պերու բայց ոչ լայնատարած բարձրաւանդակներ. և Բոլիւմիա. վերջինս 4 վերստ բարձրութիւն ունի (ծ. մ.), այսինքն համարեա Տիբետի չափ:

Բարձրութեան կողմից կորդիլիերները յետ են մուժ միայն Հիմալայեան և Կարակորում լեռներից. առանձնապէս ասկան Հար. Ամերիկայի կորդիլիերները: Նոյն իսկ հասարակածի մօտ, որտեղ ձեան սահմանը 5 վերստ բարձրութեան բակածի մօտ, այդ լեռների գագաթներից շատերը ծածկած են յափունական ծինով:

Կորդիլիերների ամենաբարձր գագաթն է Ակոնկացուա, մօտ 7 վերստ բարձրութեամբ. Նա հանգած հրաբուխ է: Բնդում անգամապէս այդ լեռների գագաթները մեծ մասով հարաբեկան իրեն կամ գործող, կամ հանգած: Գործող հրաբուխներից

Են. Կոտոպախի (6 կ.), Օրիզաբա և այլն։ Հանգած հրաբուխներից են. Ա. Եղիայի լեառը, Զիմբորազօ։

Կորդիլիերների արևելքան ստորոտներից սկսած – թէ Հիւսային և թէ Հարաւային Ամերիկայում – տարածւում են ընդարձակ հարթութիւններ, որոնք կամ բլրաշատ սարահարթեր են, կամ գաշտավայրեր. օրինակ՝ Միսսիսիպիի,



Նկ. 65. Հայոց Ամերիկայի հարդիլիքըները: -Ականապատճ:

Ամազոնի, Լապլատեան դաշտավայրերը։ Ընդարձակ հարթութիւններից դէպի արևելք-թէ Հիւսիսային և թէ Հարաւային Ամերիկայում—նորից բարձրանում են լեռներ։ Հիւսիսային Ամերիկայում — Աղեգանի, իսկ Հար. Ամերիկայում — Բրազիլիայի լեռները։ Իրենց բարձրութեամբ այդ լեռները համեմատել չեն կարող կորդիլիերների հետ. մինչև գագաթը Նրանք ծածկւած են անտառներով և արօտներով։

ԿԼԻՄԱՆ:—Հիւսիսից հարաւ. Ամերիկան շատ մեծ երկայնութիւն, ունի. նրա հիւսիսային ծայրն ընկնում է հիւս. բեկուային շրջանակից այն կողմը, իսկ հարաւային ծայրը՝ հարա-

ւային արևադարձից այն
կողմը:


Բենոային կզգիների և Սառու-
ցեալ Ովկիանոսի ափերի կլիման
շատ ցաւը է, ինչպէս հիւսիսային
Սիբիրում։ Գրենլանդիան և մի
քանի ուլից կզգիներ ծածկւած
են յաւիտենական ձիւնով և սառ-
ցադաշերով, որոնք ուղղակի
ովկիանոսից են լողում և կտոր
կտոր լինելով՝ գոյացնում են
սառցասարեր (ովկիանոսում)։
Լարցադրի ցաւը հոսանքը քա-
շում տանում է այդ սառցասա-
րերը դէպի հարաւ ու ցրտու-
թիւն բերում մայր ցամաքի
հիւս, արեկի հան ափերից։

Զհաշւած Սառուցեալ Ով-
կիանոսի ցուրտ ափերը և
Լաբրադոր թերակղզին՝ Հիւ-
սիսային Ամերիկայի մեացած
մասը չափատր-տար, բայց իս-
Ամառը մայր ցամաքը Խիստ
նում են մինչև $40^{\circ}-50^{\circ}$, իս-
 30° և մինչև իսկ 40° սառնա-

Միայն Մեքսիկայի ծովածոցի (որ տաք է) ապարքու առվաճ և
լինում սահմանիքներ. թէպէտ երրիմն ձմեռն այնակղ ձիւն գալիս
է, բայց խկոյն և հթ հալչում է հենց որ ծովածոցից տաք քամի է
փշում:

Սեքուիկայի ծոցը մեծ ազգեցութիւն ունի Հիւս. Ասորի
կտյի կլիմայի վրայ. այսինքն գալնանը և ամառը, երբ ցա-
մաքն աւելի է առքայած լինում՝ քան ծովը, այդ ծոցից
փշում են խնաւարեր քամիներ, որոնք մթնոլորտային առաւ-
տեղութիւններ են թափում Հիւս. Ամերիկայի ամբողջ արևելեան
կիում,

Մերսիկայի ծոցից է սկսում երկրագնդի ամենալավ տաք տասնամբը, որ գոլիցը է կոչում. նա տաքացնում է Ֆլորիդան և տա-



Նկ. 66. Մթնոլորտային տեղումների բաշ-
խաւմը Հեռա. Ամերիկայում:

քութիւն է տանում դէպի բաց ռվկիանուը — մինչև հեռու Երոպայի ափերը, երկրագնդի այդ մասի համար նա շատ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան Ամերիկայի համար:

Կենտրոնական Ամերիկայի և Հար. Ամերիկայի մեծ մասի կլիման արեւադարձային է: Ամբողջ տարին այնտեղ շատ տաք է լինում. յունաւը համարեա ոչնչով չէ զանազանում յուլիսից: Անձրեւ շատ է գալիս, որ բերում են գըլ խաւորապէս հիւսիս-արեւելեան պասատները: Այդ քամիները փչում են ամբողջ տարին անընդհատ: Անցնելով Ատլանտեան ովկիանոսի ամենատաք մասով, նրանք լցում են խոնաւութեամբ, որ բերում թափում են Կենտրոնական և Հար. Ամերիկայի կղզիների ու մայր ցամաքի վրայ: Յատկապէս շատ անձրեններ են զարի Ամազոն գետի ջրաբաշխում:



Կ. 67. Սթորոգային տեղումերի բաշխումը Հար. Ամերիկայում.

Այծեղեր արևադարձից հարաւ կլիման աստիճանաբար աւելի ցուրտ ու չոր է դառնում: Լապլատեան գաշտավայրի վրայ արդէն նկատելի է ձմեռայ և ամառայ տարբերութիւնը, իսկ սառնամանիք ձմեռն այնուամենանիւ համարեա երբեք չէ լինում, երկիրը չէ ծածկը ունենալ. Մշտական սառնամանիքներ լինում են ձմեռը (յուլիսին) միայն ամենահեռաւոր հարաւում — Հրոյ երկրում, այն էլ բարձր սարերի վրայ:

Ամբողջ Ամերիկայի (թէ Հիւս. և թէ Հար.) ոռոգման գլխաւոր աղբիւր է ծառայում

Ատլանտեան ովկիանոսը: Մեծ ովկիանոսից Ամերիկան կորւած է Կորդիլիերներով. բացի դրանից՝ Ամերիկայի

արևմտեան ափերի երկայնաւթեամբ անցնում են ցուրտ հոսանքներ, որոնք քիչ գոլորշիներ են տալիս:

ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ: — Ամերիկայի գետերն աչքի են ընկնում իրենց ջրառատութեամբ: Նրանք մեծ մասով հոսում են դէպի Հիւսիսային Սառուցեալ և Ատլանտեան ովկիանոսները:

Հիւս. Ամերիկայի ամենամեծ գետն է Միսսիսիպի՝ Միստրի, Օհայօ և ուրիշ շատ գտակներով, եթէ Միստրին հետը հաշւենք՝ Միսսիսիպին կլինի ամենաերկայն գետը երկրագնդի վրայ (մօտ 7000 վերստ): Ջրառատ է նաև Ս. Լաւրենտիոսի գետը, որ հոսում է Ամերիկայի հետեւեալ նշանաւոր լճերով՝ Վերբին, Հուլրոն, Միջիգան, երի և Օնտարիո: Երկրագնդի վրայ նշ մի ուրիշ վայր չկայ, ուր անուշ ջուր ունեցող լճեր այնչափ շատ լինեն, որչափ այդտեղ: Դրանց մէջ ամենամեծն է Վերբին լիճը, որ 600 վերստ երկայնութիւն ունի*): Երի և Օնտարիօ լճերի միջև է ընկնում Նիագարա հոչակաւոր ջրվէժը:

Հիւսիսային թերթածքով հոսող գետերից ամենանշանաւորներն են. — Նելսոն (որ հոսում է Վինիպեգ լճի միջով) և Մեկենզի (որ հոսում է Աթարասկա և Արջի լճերի միջն): Այս գետերը, չնայած ջրառատ են, առանձին նշանաւորներ չունեն նաւագնացութեան համար, որովհետեւ թափութիւն չունեն նաւագնացութեան համար, որովհետեւ թափութիւն համար ծովեր, որոնք լիքն են սառոյցով, և հենց իրենք գետերն էլ տարւայ ընթացքում երկար ժամանակ սառած են լինում:

Դէպի արևմուտք — Մեծ կամ Խաղաղ օվկիանոս են հոսում իւկոն, Կորումբիա և Կոլորածո գետերը:

Հիւսիսային Ամերիկայում կան նաև սակաւաթիւ աղի լճեր, որոնք գտնում են բարձրաւանդակների վրայ: ամենանշանաւորն է՝ Մեծ Աղի լիճը:

Հարաւային Ամերիկայի ամենամեծ գետն է Ամազոն: Իր երկայնութեանը նայելով ($5^{1/2}$ հազ. վ.) նա յետ է մուլ Միսսիսիպի և Նեղոս գետերից, իսկ ջրառատութեամբ

*.) Վերբին լիճն ամենամեծն է երկրագնդի տարած ջուր ունեցող լճերի մէջ, նույնագույն 100 տնտեսմ մեծ է մեր Սկանայ լիճը:

առաջն գետն է Երկրագնդի վրայ: Նա ունի 15 այնպիսի մեծ վտակներ. Ինչպէս են Հայաստանի Եփրատ, Տիգրիս և Երասմի, կամ Ռուսաստանի Վոլգա, Դոն և Դնեպրը: Այդ վտակներից նշանաւոր են՝ Մաղեցլա, Ռիօ-Նեոպրօ և ուրիշները, որոնք նաւարկելի են համարեա մինչև իրենց ակունքները: Ինքն Ամազոնը նաւարկելի է մինչև Կորդիլիերների ստորոտները: Իր ստորին հոսանքում Ամազոնն այնչափ խոր է և լայն, որ ծովային մակընթացութիւնը հասնում է մինչև 1,000 վերստ վեր նրա հոսանքով:

Հարաւային Ամերիկայի երկրորդ մեծ գետն է՝ Պարանա, որ սկսում է Բրազիլիայի լեռների հարաւարքելեան ստորոտներից: Առա գետաբերանը կոչւում է Լա-Պլատա, որ ներկայացնում է ծովախորց: Նշանաւոր վտակներ են՝ Պարագուայ և Մելուգուայ:

Հարաւային Ամերիկայի երրորդ մեծ գետն է՝ Օրինոկօ, որ ծովը թափւելիս գելտա է կազմում: Յիշած բոլոր գետերը նաւարկելի են իրենց հոսանքի մեծ մասում, որովհետև հարթութիւններով են հոսում:

Համեմատելով Հար, Ամերիկայի գետերը Հիւս. Ամերիկայի գետերի հետ՝ տեսնում ենք, որ Միոսիսիպին (իր վտակներով) հոսում է նոյն ուղղութեամբ, ինչ որ Լա-Պլատան (իր վտակներով). Ա. Լաւրենտիոսի գետը հոսում է նոյն ուղղութեամբ, ինչ որ Ամազոնը, Նելսոնը և ինչպէս Օւինոկօն: Այդ նմանութիւնը բացատրում է նրանով, որ Հիւս. և Հար. Ամերիկան բաւական նման են իրար թէ մակերեսոյթի կազմութեամբ և թէ գծագրութեամբ:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:—Ամերիկայի բուսական աշխարհն առմիի փարթամ է, քան որեւէ ուրիշ աշխարհամասի բուսականութիւն: Անապատներ այնուեղ համարեա թէ չկան. տափաստաններն էլ այնչափ ընդունակ և չոր չեն, ինչպէս Ասիայում: Ամերիկայի կէսից աւելին ծածկւած է խիտ անտառներով. կան սակայն նաև ընդարձակ տունդրակ տունդրաներ:

Ցունդրաները տարածում են բնեւային կղզիների վրայ և Սառուցեալ ովկիանոսի ավերքին Ամերիկայի տունդրաների բուսականութիւնը նոյնն է, ինչ որ Հիւս Աշխարհի տունդրաների բուսականութիւնը—մամուռ, հատապտուղ բոյսեր,

և այլն: Տունդրաներից հարաւ Հիւս. Ամերիկայում տարածւում են խիտ և ընդարձակ անտառներ, նման Սիբիրի տարգային, միայն թէ աւելի բազմազան:

Այնտեղ աճում են բազմաթիւ ծառեր, որ չկան Հիւս. Աշխարհում (հաշում են օրինակ մայրի ծառի 40 զանազան տեսուկներ, կաղնու 80 տեսակ, և այլն): Շատ ծառեր ահազին բարձրութիւն ունեն. Մեծ ովկիանոսի ափերին աճում են բուսական թագաւորութեան այնպիսի հսկայ ծառեր, ինչպէս է օրինակ մամանի ծառը, որ 60 սաժէն բարձրութեան է հասնում: Մեքսիկայի ծոցի ափերին աճում են մշտադաշտ ծառեր և արմաւենիներ:

Հիւս. Ամերիկայի չոր մասերում գտնուում են բաւական ընդարձակ տափաստաններ,

նկ. 68. Բուսականութեան տարածումը Հիւս. Ամերիկայում:
Հիւս. Ամերիկայում:
որոնք այդտեղ կոչւում են պլենարներ: Գարնանը և ամառը պլենարները ծածկւած են լինում հիւթառատ, կանաչ խոտով. չորանում են նրանք միայն ամառայ վերջը և աշնանը. այդ միջոցին պլենարները էրցնում են իրենց կանաչ տեսքը և ստանում են ոսկեգոյն գլուխուն կերպարանք: Քիչ տեղեր միայն տափաստաններն անապատի են փոխում:

Ամբողջ կենտրոնական Ամերիկան և Հար. Ամերիկայի կէսը ծածկւած են արեւադարձային անտառներով: Ամազոնի ամբողջ դաշտավայրի վրայ աճում են արեւադարձային անտառներ, որոնք սելասներ են կոչւում. Նրանք բոլորը միասին կազմում են մի հսկայական (Եւրոպական Ռուսաստանի մեծութեամբ), շատ խիտ անտառ, որ ամենափարթամն է ամբողջ երկրագնդի վրայ:

Այդտեղի ծառերը շատ բարձր են, աճում են այնչափ խիտ և այնպէս խճճած են լիանոսներով, որ ճանապարհորդել այդ անտառ-



Ներում հնարաւոր է միայն գետափերով։ Սելասներում ծառերի բաղ-
մազանութիւնը շատ մեծ է, այնտեղ աճում են այնպիսի արժեքաւոր
ծառեր, ինչպէս են՝ կակա, քիչա, կարմիր ծառ և այլն։


Հարաւային Ամերիկայի
աւելի չոր տեղերում, օրի-
նակ՝ Օրինոկօ, Պարանա և
Պարագուայ գետերի մօտ
գտնուում են արեւադար-
ձային տափաստաններ (սա-
ւաններ), որոնք տարւայ
խոնաւ կիսում (ամառը)
ծածկուում են խոտով, իսկ
ձմեռուայ երաշտների ժա-
մանակ չորանում, այր-
ուում են։

Այծեղջեր արեագարձից
հարաւ սաւաններն աստի-
ճանաբար բարեխառն զօ-
տու տափաստանների են
փոխուում, որոնք չար. Ամե-

ռ Ամերիկայի գիւտից յետոյ փոխադրւեց նաև միւս աշխար-
համասերը. այժմ կարառֆէլը մշակւում է երկրագնդի համա-
րեա բոլոր կողմերում։ Համարեա նոյնչափ տարածւել է նաև
եղիստացորենի գործածութիւնը, որ ծագել է կենարունական
Ամերիկայից։ Ամերիկայից են նաև քինայի ծառը, կական,
ծիւախոտը և ուրիշ բոյսեր։

Եւրոպացիներն էլ Ամերիկա են փոխադրել Հին-Աշխարհի
բոլոր նշանաւոր մշակովի բոյսերը, — բրինձ, շաքարեղեգ,
սուրճի ծառ և այլն, որոնք բոլորն ես Ամերիկայում աւելի
լաւ են աճում, քան Հին-Աշխարհում։


ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ:— Ամերիկայի կենդանական աշ-
խարհն այնչափ հարուստ չէ, ինչպէս բուսականը։ Ամերիկայի
հիւսիսային մասում ապրում են նոյն կենդանիները, ինչ որ
Ասիայի և Եւրոպա-
յի հիւսիսում. բայց
քանի գէպի հարաւ
ենք զնում, այն-
շափ էլ Ամերիկայի
կենդանական աշ-
խարհը տարբերուում
է Հին-Աշխարհի կեն-
դանական աշ-
խարհից։ Ամերիկայի
տունդրան ե-
րում ապրում են
— հիւսիսային եղ-
ջերու, բնեռային
աղւէս, սպիտակիա-
քաւ։ Անտառն ե-
րում ապրում են
— սկիւու, աղւէս,
գայլ, արջ և ուրիշ
աղւամազ զազան-
ներ։



Ակ. 69. Մամոնտի ծառ։

բիկայում պամպասներ են կոչ-
ուում։

Ամերիկայից են ծագում մար-
դու համար մի քանի օգտակար
բոյսեր։ Անդերի լանջերում է
գտնուում կարտոֆիլի հայրենիքը,



Ակ. 70. Բուսականութեան տարա-
ծումը չար. Ամերիկայում։

Ակ. 71. Բէսոն։

Մեծ լճերից հարաւ, որտեղ ազգաբնակութիւնը բաւական խիտ է և անտառներն աւելի սակաւ, այնտեղ վայրենի գազանները համարեա բնաջինջ են արւած:

Պը ե ր ն ե ր ու մ մինչև վերջերը թափառում էին վայրի եզների՝ ըստոնների ահագին նախիրներ. 50 տարի սրանից առաջ հաշւում էին այնտեղ մի քանի միլիոն բիսոն, իսկ այժմ համարեա չկայ. մում են դեռ միայն մի քանի տեղերում, ուր արգելւած է նրանց որսալը



Նկ. 72. Կոլիբրի.—Ակին բարում են խոլորձներ (որոնց ծաղկներից կոլիբրի թրսչունները ծծում են քաղցր հիւթ):

Հարաւային Ամերիկայում բազմաթիւ են տյապիսի կենդանիներ, որոնք տեսքով շատ են ջոկւում մնացած աշխարհամասերի կենդանիներից. այդպէս են օրինակ՝ յամիունները, մըջնակերները և զրահակերները: Ամերիկայի գիշատիչ կենդանիները (օր. եազուար) շատ աւելի քիչ են և թոյլ, քան չին-Աշխարհի գիշատիչները—առիւծը և վազը:

Ամբողջ Ամերիկայում ամենից հարուստ է սելւասն երի կենդանական աշխարհը: Այտնեղ այնչափ շատ կապիկներ կան, որչափ՝ ոչ մի տեղ: Աշխարհիս վրայ և ոչ մի տեղ այնչափ թոշոններ (թութակ, կոնդոր, կոլիբրի) չկան, որչափ սելւասներում: Ամեն քայլափոխում հանդիպում են նաև թունաւոր և ոչ-թունաւոր օձեր — թէ ջրում, թէ ցամաքում և թէ ծառերի ճիւղերի վրայ: Բարձրաւանդակներում և կորդիֆերների լանջերին արածում են լամաներ: Պամպաներում պատահում են ջայլամների երաժիշտներ:

Ընտանի կենդանիներ Ամերիկայում, մինչև եւրոպացիների այնտեղ հաստատելը, համարեա ամենելին չկային. տունզրաներում միայն մարդուն ծառայում էր շունը, իսկ չարաւ. Ամերիկայի բարձրաւանդակներում՝ լաման: Եւրոպացիներն Ամերիկա փոխազրեցին ձի, ներում՝ լաման: Եւրոպացիներն անտառներ և ուրիշ նշանաւոր ընտանի կենդանիներ:

ԱԶԳԱՐՆԱԿՈՒԹԻՒՆԸ: — Ամերիկայի բնակիչների թիւն է մօտ 150 միլիոն. ամեն մի քառակուսի, վերստի վրայ այնտեղ գալիս է միջին հաշւով ընդամենը 4 հոգի (քանի անգում տևի պակաս, քան Ասիայում):



Նկ. 73. Կոնդոր:

Ամենից աւելի պակաս ազգաբնակութիւն ունեն քենուամին կղզիները և Սառուցեալ ովկիանոսի ափերը։ Այնտեղ ապրում են սակաւաթիւ էսկիմոսներ իրենց խղճուկ խրճիթներում և պարապում են որսորդութեամբ ու ձկնորսութեամբ։

Սակաւ ազգաբնակութիւն կայ նաև հուզգոնի ծոցի, Մեկնզի և Խւկոն գետերի ափերին տարածւած խիտ անտառներում։ Երկրագործութեամբ պարապել այստեղ, ցրտութեան պատճառով, անհնար է. իսկ անտառներում թափառում են միայն վայրենի որսորդ հնդկացիներ։

Միսսիսիպի գետի աւազանը և Մեծ լճերի ու Ասլանտեան ովկիանոսի ափերը խիտ բնակութիւն ունեն, որովհետև այստեղ կղիման տաք է և խոնաւ, իսկ հողը՝ արգաւանդ։ Այդ մասում է ապրում Ամերիկայի ամբողջ ազգաբնակութեան համարեակէուր։

Բաւական խիտ ազգաբնակութիւն ունի նաև կենտրոնական Ամերիկան, մասնաւանդ Վեստ-Ինդիան։ Այնտեղի բնակիչներն արգէն շատ են մաքրել արևագարձային անտառները և մշակովի ու պտղաբեր դաշտեր դարձրել։

Հարաւային Ամերիկայի ընդարձակ տարածութիւնները բոնւած են արևագարձային դարաւոր անտառներով, որոնց մաքրու ձեռք համարեա չէ կպած. այդ պատճառով էլ Հար. Ամերիկան բաւական նօսր բնակութիւն ունի։

Ամերիկայի ամբողջ ազգաբնակութեան $\frac{2}{3}$ մասը պատկանում է սպիտակ ցեղին, որ եւրոպացի գաղթականների սերունդներից է բազկացած։ Հիւս. Ամերիկա գաղթել են գլխաւորապէս անդկացիներ, իրանդացիներ, գերմանացիներ, իսկ կենտրոնական և Հար. Ամերիկա՝ իսպանացիներ և պորտուգալացիներ։

Ամերիկայի ազգաբնակութեան մնացած $\frac{1}{3}$ -ը բազկացած է նեգրերից (սկ ցեղ), հնդկացիներից (գեղին ցեղ) և խառնուրդ ժողովուրդներից—մոլուսներից (սպիտակների և նեգրերի սերունդ) և մետիսներից (սպիտակների և հնդկացիների սերունդ)։ Նրանք ապրում են գլխաւորապէս այն վայրերում, որոնք ան-

յարմար և վատառողջ են նկատւած եւրոպացիների բնակութեան համար։

Ամերիկայի տիրապետող տարրերն են, ինարկէ, սպիտակցեղի ժողովուրդները։ Նոր-Աշխարհ գաղթելով՝ եւրոպացիները սկզբում հիմնեցին գաղութներ, որոնք կախում ունեին եւրոպական պետութիւններից. վերջը համարեա բոլոր գաղութներն էլ ձեռք բերին անկախութիւն և դարձան հասարակապետութիւններ։ Ամենամեծ և ամենախիտ բնակութիւն ունեցող հասարակապետութիւնն է՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները։ Իր մեծութեամբ և բնակիչների թւով երկրորդ տեղը բոնում է Բրազիլիան։ Գաղութներից ամենանշանաւորն է Կանադան, որ պատկանում է անգլիացիներին։

Ամերիկայի բնիկներն են՝ դեղին ցեղին պատկանող ժողովուրդներ—էսկիմոսներ և հնդկացիներ։ Հնդկացիների մեծագոյն մասը վայրենի որսորդներից էր բաղկացած, որոնք թափառաշրջեկ կեանք վարում։ Նրանք ապրում էին մանը ցեղերով և անընդհատ կոիւէին վարում։ Նրանք մի քանի ցեղեր, օր. Մեքսիկա և ներէին մզում իրար դէմ։ Միայն մի քանի ցեղեր, օր. Մեքսիկա և ներէին մզում իրար դէմ։ Մեքսիկան ապրում էին երկրագործութեամբ և ստակեաց կեանք էին վարում. նրանք հիմնել էին նշանագրեր։

Եւրոպացիներն Ամերիկա գաղթելով երկար ժամանակ և շարունակ կոիւներ մզեցին հնդկացիների դէմ։ հետզհետէ գրաւեցին ամսով Ամերիկան, հնդկացիների շատ ցեղեր բոլորովին ոչնչացրին, իսկ մողջ Ամերիկան, հնդկացիների շատ ցեղեր թուլացան և նւաճւեցին։

Նեգրերն ակամայ են գաղթել Ամերիկա։ Երկար ժամանակ եւրոպացիներն Աֆրիկայից Ամերիկա էին բերում և գրաւեցին ամսով իրենց անկարաններում բանեցնելու նպատակով։ Հնդկամները մի քանի իրենց անգր են բերւել Ամերիկա։ Իսկ այժմ նրանք կազմում են ազմիւններից մասը։ Ստրկութիւնն անցեալ գարում գաբնակութեան մէկ ութերորդ մասը։ Վերակութիւնն այժմ գարում վերացւեց, և նեգրերն աղատ են այժմ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԳՐԵՆԱՆԴԻԱ ԵՒ ՀԻՒՍԻՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՐՇԻՊԵԼԱԳ:—Գրենանդիան երկրագնդի ամենամեծ կղզին է. նա համարեա հաւասար է Եւրոպական Ռուսաստանի կէսին: Սակայն մարդկային բնակութեան համար Գրենանդիան շատ անյարժար է, որովհետեւ յաւերժական ձիւնով և սառցադաշտերով ծածկւած մի բարձրաւանդակ է:

Գրենանդիայի ափերը կտրտւած են շատ խորը և նեղ խորշերով, որոնք քիչ ու են կոչւում. նրանցով է ցամաքից շարժւող սառոցը թափւում ովկիանոս ահագին սառցադաշտերի ձևով, որոնք մանըւելով կաղմում են սառցասարեր:

Բաֆֆինի երկիրը և հիւսիս-ամերիկեան մնացած կղզիները տարւայ կէսից աւելին ծածկւած են ձիւնով. յաւերժական ձիւն և սառցադաշտեր այնտեղ պատահում են միայն մի քանի, համեմատաբար բարձր, տեղերում. մնացած մասերում տարածւում են տունդրանիր:

Այդ կղզիների վրայ և Գրենանդիայի ծայրերում ապրում են էսկիմոսները, որոնց միակ ընտանի կենդանին լծկան շունն է: Նրանց գլխաւոր զբաղմունքն է որսորդութիւնը և ձկնորսութիւնը: Որսում են՝ հիւսիսային եղջերուներ, սպիտակ արջեր, փոկեր, ծովացուկեր և այլն: Ուրիշ խոշոր ծովային կենդանիներ, ինչպէս օր. կետը, չկան այնտեղ, որովհետեւ արդէն ոչնչացւել են Եւրոպացիների ձեռքով:

Էսկիմոսներն ապրում են հիւսկերում (յածրիկ խրճիթներում), որ շինում են քարից և հողից, իսկ երեմն նոյն իսկ սառցակոշտերից: (Էսկիմոսների թիւը մօտ 10,000 է):

Թէպէտ Գրենանդիան և հիւսիս-ամերիկեան կղզիները պատկանում են Եւրոպացիներին, բայց շատ քիչ Եւրոպացիներ են լինում այնտեղ: Գրենանդիան պատկանում է դանիացիներին (որոնց թիւն այնտեղ հազիւ 300 է): Հիւսիս-ամերիկեան կղզիները պատկանում են անգլիացիներին:

Գրենանդիայի ափերն են գալիս ամեն ամառ մի քանի շուրջ ենաւեր (Եւրոպայից), բերում են պոստ և բեռնած են լինում ցորե-

նով, շաքարով և ուրիշ ապրանքներով, որ եւրոպացիները ծախում են էսկիմոսներին և առնում նրանցից մորթի, ձուկ և այլն:

Գրենանդիայի էսկիմոսները եւրոպացիներից ընդունել են քրիստոնէութիւն և նրանցից են սովորել գրագիտութիւն: Նրանց մի գիւղում, որ կոչւում է Ռւապերնիւիկ, կայ նոյն իսկ տապարան, որտեղ տպագրուում են էսկիմոսների լրագիրները և անդէւն ելը:



Նկ. 74. էսկիմոսներ:

ԿԱՆԱԴԱ ԵՒ ԱԼԵՎԱԿԱ:—Կանադան և Ալեասկան բռնում են Ամերիկայի ամբողջ հիւսիսային՝ ցուրտ մասը: Սառուցեալ ովկիանոսի և նոյն իսկ լաբրադորի ափերին տարածւում են ովկիանութեր. իսկ կանադայի մնացած մասը համարեա ամբողջովին ծածկւած է փշտուրեև և սաղարթաւոր ծառերի անտառ: Այդ աններով, որոնք հարուստ են աղւամազ զազաններով: Այդ անտառներն անյարմար են մարդկային բնակութեան համար: Այն կիման այդտեղ շատ խիստ է (Նման Սիբիրի կիմային), այն պէս որ երկրագործութեամբ դրազեւ նարաւոր է կանադայի

միայն հարաւային մասում — սկսած Ս. Լաւրենտիոսի ծոցից՝ արևելքում, մինչև Վանկուվիեր կղզին՝ արևմուտքում: Բայց նոյն իսկ այդ շրջանում հողը մեծ մասով քարքարոս է և մշակութեան համար անյարմար: Ալեասկայում երկրագործութեամբ զբաղելը միանգամայն անհնար է: Կանադայի և Ալեասկայի սարերը հարուստ են արծաթով և ոսկով, որոնց ձեռք բերելը դժւար է — դարձեալ կլիմայի խստութեան պատճառով:

Կանադայի բնակիչների թիւն է ընդամենը մոտ 10 միլիոն:

Տունդրան երուս ապրում են որսորդութեամբ և ձկնորսութեամբ պարապող էսկիմոսները (ինչպէս և բնեուային կղզիների վրայ): Մեկենզի և Նելսոն գետերի աւազանում տարածւած խիտ անտառներում թափառում են վայրենի նողկացիները, որոնք ազւամազ գազաններ որսալով են պարապում:

Հղղկացիների վիճակը Կանադայում այնչափ վատ չէ, որչափ Ամերիկայի ուրիշ շատ վայրերում, որտեղ նրանց մեծ մասը բնաջինջ է արւած: Կանադայում գանդաղօրէն բնակութիւն են հաստատել եւրոպացիները, իսկ հնդկացիներն էլ հետզհետէ դիմել են դէպի անտառների խորքերը, աւելի լաւ տարածութիւնները սպիտակներին թողնելով: Շատ հնդկացիներ նոյնիսկ մնացել են իրենց տեղերում և այժմ վարում են նստակեաց կեանք, զբաղում են երկրագործութեամբ և նոյն խոլ իրենց երեխաներին ուսումնաբան են ուզարկում:

Կանադայի հարաւային մասում, առանձնապէս Մեծ լճերի և Ս. Լաւրենտիոս գետի ափերին, ապրում են Ելրուպայից զաղթածները, որոնք և կազմում են Կանադայի ազգաբնակութեան գլխաւոր տարրը:

Ամենից շատ Կանադա են գաղթել անդիմացիները, այդ պատճառով էլ անդիմացիներ Կանադայում տիրապետող լեզու է դարձել: Սակայն ամենից վաղ այնտեղ գաղթել սկսեցին Փրանսիացիները, որոնք կազմում են Կանադայի ազգաբնակութեան $\frac{1}{3}$ մասը և պահպանել են իրենց լեզուն:

Կանադացիների գլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւնը և անասնաբուծութիւնը: Իրենց գաշտերում նրանք ցանում են գլխաւորապէս ցորեն, զարի և հաճար:

Անտառներից պահում են գլխաւորապէս կաթնատու-

ներ, որոնց կաթից պատրաստում են շատ իւղ և պանիր: Կանադացիների համար մեծ նշանակութիւն ունի նաև անտառագործութիւնը: Չմեռը կտրտում են փայտ, իսկ գարնանը փոխադրում գետերով կամ երկաթուղիներով: Կանադացիները որսում են նաև շատ ձուլ, մանաւանդ Նիու-Ֆանդլենդում:

Կանադացիները շատ զարգացած և ձեռնարկող ժողովուրդ են: Նրանք իմանել են բազմաթիւ ուսուցիչները — սոորին, միջնակարգ և բարձրակոյն տիպերի: Անկրագէտ մարդ նըրանց մէջ շատ քիչ կայ: Նրանք շինել են նաև շատ երկաթուղիներ:

Մեծ նշանակութիւն ունեն նաև ջրային ճանապարհները: Կանադայի և Միացեալ նահանգների սահմանում է ուսումնաբների զբայով և կարող է լող առաջ մինչև իսկ ովկիանոսում:


Նկ. 75. Փայտեղինի փայտութիւն կոլումբիա գետով: Հոկայական լաստ՝ զգթաներով ամրացրած: Այդպէս լաստը յաջողութեամբ անցնում է ուսումնաբների զբայով և կարող է լող առաջ մինչև իսկ ովկիանոսում:

Կանադայի ամենամեծ քաղաքն է Մոնրէալ, — Ս. Լաւրենտիոս գետի ափին. Նշանաւոր է իր առետրով Եւրոպայի հետ, Կանադայի արտահանութեան գլխաւոր առարկաներն են՝ կանադայի անասնաբուծութեան գաղթեղին, անասնաբներ, իւղ, պանիր և հաց. քիչ չեն արփայտեղին, անասնաբները, իւղ, պանիր և հաց. քիչ չեն արփայտեղին, անասնաբները:

Կանադան Անգլիայի գաղութներից է. Նրա կառավարու-



թեան զլուխ կանդիած է ընդհանուր նահանգապետը, որ նշանակում է Անգլիայի թաղաւորի կողմից։ Սակայն օրէնքները հրատարակում են երկրի պարլամենտի կողմից, որ բաղկա-



Նկ. 76. Նէտարայի ջրվէրը։

ցած է ժողովրդական ընտրեալներից և գտնում է Օտտաւա քաղաքում։

Ալեասկա մեծ թերակղին, նրանից հարաւ ընկած ծորակինեայ նեղ շերտով միասին, պատկանում է Միացեալ նահանգներին։ Առաջ Ալեասկան պատկանում էր ուռւներին, որ յետոյ ծախեցին ամերիկացիներին։ Ալեասկան երեք անգամ մեծ է կովկասից, բայց համարեա անմարդաբնակ է։ Ալեասկայի բնիկներն էսկիմոսներն ու հնդկացիներն են։ Վերջին տարիներն Ալեասկայում գտնւել են ոսկու հարուստ հանքեր։ այդ պատճառով էլ այնտեղ դիմել սկսեցին շատերը, որոնք շուտ հարստանալ էին ցանկանում։

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ—«Միացեալ նահանգներն» ամենամեծ պետութիւնն են կազմում Ամերիկայում և չորրորդը՝ երկրագնդի վրայ։ Իր տարածութեամբ (Ալեասկայի հետ) այդ երկրը երկու անգամ մեծ է եւրոպական Ռուսաստանից և համարեա հաւասար է ամբողջ Եւրոպային։

Միացեալ նահանգներում ապրում են աւելի քան 90 միլիոն բնակիչներ։ Միացեալ նահանգների բնութիւնը շտահ հարուստ է, հողն ամեն տեղ արդաւանդ է, մշակութեան համար յարմար։ Կիման տաք է, համարեա ամեն աեղ խոնաւ և այնպէս առողջարար, ինչպէս Եւրոպայի կիման։ Միացեալ նահանգների արևելեան կէսում տարածում են արգաւանդ և ընդարձակ հարթութիւններ։ Գարնանը և ամառը տեղում են առատ անձրեններ, որոնց շնորհիւ այնտեղ շատ լաւ են աճում զանազան հացաբոյսեր, բամբակ և ուրիշ կարսոր բոյսեր։ Մ. Ն-ի արևմտեան կէսը ժայռոտ է, ուր ընդարձակ տարածութիւններ են բռնում չոր սարահարթերը և բարձր լեռները։ Սակայն հեռաւոր արևմուտքում—Մեծ Ովկիանոսի ափերին և Սիերրա-Նևադայի ստորորոսներում—կլիման բաւական խոնաւ է, հողն էլ արգաւանդ։

Հսկայական հարստութիւններ կան թաղւած նաև երկրի ծոցում։ Միսսիսիպի գետի և նրա վտակների աւազանում տեղ ընկած են քարածուխի հանքեր։ Ալեպանները հաշտ տեղ ընկած են քարածուխի հանքեր։ Ալեպանները կազմուած են երկաթով և նաւթով, իսկ ժայռոտ լեռները, Սիերրա-Նևադան և Կասկադեան լեռները՝ ոսկով, արծաթով, պղնձով և ուրիշ մնացածներով։

Այս բոլոր հարստութիւնները մշակուում են Մ.-Նահանգներում առանց զժւարութեան, շնորհիւ հաղորդակցութեան նահանգների ճանապարհների, մանաւանդ արևելքում։ Միսսիսիպի գետը և նրա բազմաթիւ վտակները—Օհայօ Միսսիսիպի գետը և նրա բազմաթիւ վտակները—նաւարկելի են համարեա իրենց ամբողջ սուրբի և ուրիշները—նաւարկելի են նաև Ասլանտեան ովկիանոս հուընթացքում։ Նաւարկելի են նաև Ասլանտեան ովկիանոս հուընթացքում։ Նաւարկելի են կազմակերպ զենքերը, թէպէտ երկայն չեն, օր. Հուզպոն գետը, սող գետերը, թէպէտ երկայն չեն, օր. Հուզպոն գետը, ասղորդակցութեան առաջնակարգ ճանապարհներ են նաև Հաղորդակցութեան առաջնակարգ ճանապարհներ են նաև Մեծ լճերը, որոնք այժմ ջրանցքներով միացած են Հուզպոն գետի և Միսսիսիպի վտակների հետ։ Վերջապէտ Մ.-Նահերը արևելքից և թէպէտ արևմուտքից ողողւում են ովկիանոսներէ արևելքից և թէպէտ արևմուտքից ողողւում են ովկիանոսներէ արևոտ կան բազմաթիւ ընափեր նաւահանգիստներ, ուրով այնտեղ կան բազմաթիւ ընափեր նաւահանգիստներ, լաւ կիման, հաղորդակցութեան հարստութիւնները, լաւ կիման, հաղորդակցութեան

թեան ընտիր ճանապարհները,—այս բոլորը վաղուց արդէն գրաւել սկսեցին ելքովացիներին դէպի Մ.-Նահանգները։ Ամենից շատ դաղթեցին անզիացիները, ուստի և անզիական լեզուն այնտեղ տիրապետող դարձաւ։ Մնացած բոլոր եւրոպացիները—իրանդացիները, գերմանացիները, իտալացիները ֆրանսիացիները և այլն, խառնւեցին անզիացիների հետ և ընդունեցին ոչ միայն նրանց լեզուն, այլ նաև կենցաղավարութեան եղանակն ու սովորութիւնները։ Այսպէս ահա Ամերիկայում առաջ եկաւ մի նոր ժողովուրդ, որ իրեն ամենի կացի է կոչում (իսկ Եւրոպայում նրանց երբեմն «եանկի» են կոչում)։ Այդ ժողովուրդն աչքի է ընկնում իր ձեռնարկուողով և աշխատասիրութեամբ։ Այդ բոլորի շնորհիւ է, որ Մ.-Նահանգները կարծ ժամանակում զօրաւոր պետութիւն դարձան։ Այդ պետութիւնն իր ոյժով և զօրութեամբ յետ չէ մնում երկրագնդի և ոչ մի պետութիւնից։



Նկ. 77. Եանկի։

Բացի սպիտակ ցեղին պատկանողներից՝ Մ.-Նահանգներում ապրում են նաև հնկացիներ և նեղեր։ Ամերիկական հնդկացիների թիւն առաջ շատ էր, իսկ ներկայումս մնացել են ընդամենը



Նկ. 78. Հիւս. Ամեր. հնդկացի։

200 հազար հոգի, իսկ նեղերեր Մ.-Նահանգներում բաւական շատ կան,—մօտ 10 միլիոն։ Նրանք ապրում են Մ.-Ն.-ի բոլոր մասերում, իսկ աւելի խիտ՝ միայն հարաւում և հարաւ-արեւելքում, որտեղ կլիման տաք է և խոնաւ։

Թէպէտնեղերն ազատւած են ստրկութիւնից և ունեն քաղաքացիական ամեն տեսակ իրաւունքներ, բայց և այնպէս սպիտակ ցեղին պատկանողներն արհամարդանքով են վերաբերուում նրանց։ Ծնտեսապատկանողներն արհամարդանքով են վերաբերուում նրանց։ Ծնտեսապատկանողներն արհամարդանքով են վերաբերուում նրանց։ Համարեա բոլոր նեղերն էլ աշխատուում են սպիտակներին պատկանող արտերում, գործարաններում, հանգիբրում և այլն, և կամ երկաթուղիների վրայ ստորին ծառայութիւններ ունեն։ Քիչ կպատահի, «ը մի նեղերի վրայ ստորին ծառայութիւններ ունեն։ Քիչ կպատահի, «ը մի նեղերի վրայ ստորին ծառայութիւններ ունենայ։

Միացեալ-Նահանգների ամերոջ արդինաբերութիւնը գըտընուում է ամերիկացիների ձեռքում և նրանց շնորհիւ միայն հասել է բարձրագոյն զարգացման։ Առաջին տեղը բռնում են երկրագործութիւնը և անասնաբուծութիւնը։ Այստեղ, ուր գեռ ոչ շատ առաջ տարածւում էին խիտ անտառներ և վայրի պլեներ, ուր արածում էին միայն բիսոնների նախիրներ, թափառում էին վայրենի հնդկացիներ,—այնտեղ այժմ ամենուընք տարածւում են ընդարձակ գաշտեր, կամ արածում են ընտանի կենդանիների ահագին հօտեր։ Դաշտային աշխատանքներն ամերիկացիները կատարում են երկրագործական մերինաների օդնութեամբ։ այդ պատճառով էլ նրանք կարծ միջոցում կարողանում են մշակել ընդարձակ տարածութիւններ և հաւաքել առատ հունձ։ Միայն եգիպտացորեն ստացւում է Մ.-Նահանգներում այնչափ, որչափ Ռուսաստանում՝ բոլոր հացահատիկները միասին առած։ Մշակում է նաև մեծ քանակութեամբ ցորեն, որ ոչ միայն բաւականացնում է Մ.-Նահանգների բոլոր բնակիչներին, այլ և ամեն տարի մի քանի հարիւր միլիոն փութ ուղարկուում է Արևմտեան Եւրոպա։

Մ.-Նահանգներում ստացւում է աւելի մեծ քանակութեամբ ըստարակ, քան աշխարհի մնացած բոլոր երկիրներում և մեծ քանակութեամբ էլ ուղարկուում է Արևմտեան Եւրոպա ու մասամբ Ռուսաստան։

Շատ է զարգացել Մ.-Նահանգներում նաև անասնաբու-

ծութիմնը, մանաւանդ պրեբներում, որոնք ամբողջապէս դեռ չեն մշակւած։ Ամենից շատ պահում են խոշոր եղջիւրաւոր կենդանիներ, նաև ոչխար ու խոզ։ Այնչափ շատ միս է ստացում Մ.-Նահանգներում, որ սապցրած ձեռվ միլիոնաւոր փթեր Արեմ. Եւրոպա է ուղարկւում.

Կորդիլիերներում ամերիկացիները զբաղւում են ուկու և արծաթի հանքերի մշակութեամից։ Ուկու առատութեամբ Մ.-Նահանգների հետ մրցում են Աւստրալիան և Հարաւային Աֆրիկան, իսկ արծաթով միայն Մեքսիկան։ Բայց թանգարին մետաղներից աւելի արժէքաւոր են Մ.-Նահանգների համար—երկաթը և քարածուխը. Երկաթը նրա համար, որ գործադրւում է ամեն տեսակ մեքենաներ, երկաթուղիներ և շոգեմեքենաներ շինելու. իսկ քարածուխը նրա համար, որ գործադրւում է իրեւ վառելանիւթ գործարանների, շոգեկառքերի համար և այլն։ Քարածուխի և երկաթի քանակով Մ.-Նահանգները ներկայումս գերազանցում են բոլոր պետութիւններին, մինչև անգամ Անգլիային։ Վերջապէս՝ ստացւող նաւթի (Ալլեգաններում) քանակով Մ.-Նահանգները յետ են մնում միայն Ռուսաստանից (Բագւի նաւթահանգնելը):

Մ.-Նահանգներում շատ կան ամեն տեսակ գործարաններ, զարգացած է արդիմագրութիւնը։ Ամերիկայի երկրագործական և կարի մեքենաները սպառւում են բոլոր աշխարհամասերում. քիչ չեն ներմուծւում նաև Ռուսաստան։

Երկաթուղիներ այնտեղ աւելի կան, քան ամբողջ Եւրոպայում և Ասիայում՝ միասին վերցրած։ Մի քանի երկաթուղային գծեր կտրում անցնում են Կորդիլիերներով և միացնում Ատլանտիան ովկիանոսի նաւահանգիստները Խաղաղ օվկիանոսի նաւահանգիստների հետ (այդ գծերը կոչւում են «խաղաղ-ովկիանոսեան» երկաթուղիներ)։ Մ.-Նահանգների գետերի, լճերի է ծովերի վրայ ամեն տեղ լողում են շողենաւեր։ Շընորհիւ արւեստական ջրանցքների՝ ծովային շոգենաւերը կարողանում են անցնել Ատլանտիան ովկիանոսից մինչև Ռեժերը և ապա վերադառնալ այնտեղից։ Ընդհանրապէս՝ ճանա-

պարհների հաղորդակցութիւնը Մ.-Նահանգներում շատ զարգացած է։

Թէպէտ Մ.-Նահանգները բաղկացած են 45 նահարակապետութիւններից («շտատ»-ներից կամ նահանգներից) և 5 տիբրուտորիաներից (երկրամասերից*), բայց նրանք բոլորն էլ կապւած են իրար հետ իր ամբողջութիւն—շնորհիւ ճանապարհների հաղորդակցութեան, ընդհանուր լեզուի և ընդհանուր կառավարութեան։ Մ.-Ն.-ի շտատները մեծութեամբ հաւասար չեն իրար։ Հիւս.-արևելեան հին շտատները շատ աւելի փոքր են, քան հիւս.-արևեմտեան և հար.-արևեմ։ շտատները։ Բոլոր շտատները բաժանվում են 4 խմբի.—արեւելեան, հարաւային, կենտրոնական և արեւմտեան։

Միացեալ Նահանգների կամ շտատ՝ երի գլուխ կանգնած են հասարակապետութեան նախագահը (որ ընտրւում է 4 տաեւեակապատեան է, որ կառավարում է իր նահանգը՝ ժողովրդուկան ներկայացուցիչների կողմից հրատարակող օրէնքներով։ Այդ բոլոր շտատներն էլ դաշնակցելով միացել և կազմել են Մ.-Նահանգների գաշնակական (Փեղերատիւ) հասարակապետութիւնը։

Ամեն մի նահանգ կամ պետութիւն (շտատ) ունի իր յատուկ կառավարութիւնը. Ամեն մի նահանգի գլխաւորն էլ ընտրովի նահանգապետն է, որ կառավարում է իր նահանգը՝ ժողովրդուկան ներկայացուցիչների կողմից հրատարակող օրէնքներով։ Այդ բոլոր շտատներն էլ դաշնակցելով միացել և կազմել են Մ.-Նահանգների գաշնակական (Փեղերատիւ) հասարակապետութիւնը։


Միացեալ Նահանգների բոլոր քաղաքացիներն ունեն միւնոյն իրաւունքները, և օրէնքի առաջ բոլորն էլ հաւասար են. Նոյն իսկ հասարակապետութեան նախագահը ծառայութիւնը թողնելուց յետոյ ոչնչով չէ զանազանուում մնացած քաղաքացիներից։

Ժողովրդուկան կրթութեան համար Մ.-Նահանգներում հոգում են ամենը—կոնգրէսը, նախագահը, նահանգապետները, զանազան ընկերութիւններ, մասնաւոր անձեր—ուսոնք ահազին գումարներ են ներկում այդ նպատակով։ Համարսահազին գումարներ են ներկում է ամերիկացի միլիոնաւուերի բանների մեծ մասը պահւում է ամերիկացի միլիոնաւուերի

*.) «Տերիանորիա» կոչւում են այն շրջանները, որոնք շատ սուխաւ ազգարնուկութիւն (100 հազ. պակաս) ունեն և չեն հանդիսանում անկախ շտատներ կամ հարակապետութիւններ։ Նրանց գործերը վարում են նախագահի կողմից համակած պաշտոնները։

Նւիրաբերութիւններով։ Գրքեր և լրագիրներ Մ. Նահանգներում հրատարակում են անսահման քանակութեամբ։

Մ.-Նահանգների մայրաքաղաքն է՝ Վաշինգտոն, որ գըտ-



Նկ. 79. Կոնգրեսի շենքը Վաշինգտոնում։


նըւում է Կոլումբիա շրջանում*) և միջին մեծութիւն ու նեցող մի քաղաք է։ Այստեղ է գտնւում կոնգրեսը, ուր և ապրում է նախագահը («սպիտակ տանը»)։

Մ.-Նահանգների ամենամեծ քաղաքն է՝ Նիու-Յորկ, որ մօտ 4 միլիոն բնակիչ ունի։ Իր բնակիչների թւով նա յետ և մնում երկրագնդի միայն մէկ քաղաքից—Լոնդոնից (Անգլիայի մայրաքաղաքից)։ Նիու-Յորկը գտնւում է Հուզիզնի գետաբերանում և շատ յարմար նաւահանգիստ է։ Նիու-Յորկի վրայուն է կատարւում Մ.-Նահանգների ամբողջ արտաքին առևտութէսը։ Այստեղ են ցամաք իջնում ամեն տարի Եւրոպայից եկող մի քանի հարիւր հազար զաղթականներ**։

*) Այս շրջանն առանձնացրած է միւս շտատներից նրա համար. որ ոչ մի շտատ առիթ չունենայ զերազար համարելու իրեն, թէ՛ իր սահմաններում է գտնւու պետութեան մայրաքաղաքը։

**) 1910 թւականին եւրոպայից Մ. Ն. են գաղթել 926,000 հոգի. որոնք համարեա բոլորը Նիու-Յորկում են ցամաք իջեւ։ Գաղթականներին գէպի այդ երկիրը զլաւողը բարձր աշխատավարձն է ու աղատ կառավարութիւնը։

Նիու-Յորկի շենքն աչքի են ընկնում իրենց հսկայական մեծութեամբ, այստեղ շատ կան 20—30 յարկանի տներ։ Փողոցներում նըկատելի է ահազին հաղորդակցութիւն՝ էլեքտրաքարշերով, կառքերով և ոտքով։ Փողոցների վերևուն սիւների վրայ՝ շինած է երկաթուղի, որ օրական մօտ 1 միլիոն մարդ է փոխադրում։ Հուզիզն գետի և նեղուցների վրայ գցած են հսկայական կամուրջներ և անց են կացրած ստորջրեայ տունելներ (ուղիներ)։



Նկ. 80. Բազմայարկ տուն Նիու-Յորկում։

Մ.-Նահանգների միւս նշանաւոր նաւահանգիստներն են։ Առաջանաւան պվկիանոսի ափին—Ֆիլադելֆիա, Բալտիմոր և Բուստոն։ Սեքսիկայի ծոցի վրայ, Միսսիսիպիի գետաբերանում՝ Նոր Օրլէան, որ երկրագնդի ամենանշանաւոր նաւարանում է առ Օրլէան մի քաղաք է առ ապահովագրածն է ու աղատ կառավարութիւնը։

ւահանգիստն է բամբակի արտահանութեամբ։ Մեծ ովկիանոսի վրայ, արևմուտքում, նշանաւոր է Սան-Ֆրանցիսկօ նաւահանգիստը։

Երկրի ներսում եղած քաղաքներից ամենանշանաւոր ներն են։—Չիկագօ (Միչիգան լճի ափին), Սէն-Լուի (Միսիսիպիի և Միսսուրիի խառնարանից ոչ հեռու) և Պիտուրուդ (Օհայօ գետի ափին, ամենահարուստ նաևթահանքերի մօտ)։ Չիկագօն գտնւում է 35 երկաթուղային գծերի հանգոյցում։ Նա երկրագործության բազաքն է՝ հացահատիկների և մոխ առևտությունների կողմից։

100 տարի առաջ Չիկագօի տեղում գտնվում էր հնդկացիների մի փոքրիկ գիւղ, իսկ այժմ Չիկագօն ունի 2 միլիոն բնակիչ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկա մայր ցամաքի այն հեղ մասը, որ տարածւում է Միացեալ Նահանգներից հարաւ, նաև նրա արեելեան կողմն ընկածէկզպիները միասին՝ կոչւում են Կենտրոնական կամ Միջին Ամերիկա։ Մեծ մասով գտնվում է արեագարձային գոտում։

Կենտրոնական Ամերիկան աւելի շուտ գտնվեց, քան Ամերիկայի միւս մասերը, գտնողներն էին իսպանացիները, սրանք չկարողացան բնիկներին՝ ամերիկական հնդկացիներին բնաջինջ անել կամ երկրի խորերը քշել։ Հնդկացիների մեծ մասն այժմ հստակեաց է, կազմում է տեղական պղպարնակութեան գլխաւոր տարրը։ շատերը խառնւել են սպիտակների հետ։ 19-րդ դարի սղբում իսպանական գաղութները մեծ մասով ըաժանւեցին մայր երկրից—Իսպանիայց և կազմեցին անկախացակագործութիւններ։

ՄԵՔՍԻԿԱ ԵՒ ՎԵՍ-ԻՆԴԻԱ.—Կենտրոնական Ամերիկայի մեծ մասը բռնում է Մեքսիկան։ Մեքսիկան հինգ անգամ փոքր է Միացեալ Նահանգներից, բայց իր մեծութեամբ գերազանցում է բոլոր եւրոպական պետութիւններին, բացի Ռուսաստանից։ Մեքսիկայի բնութիւնն այնպէս յարմար չէ մարդկային

բնակութեան համար, ինչպէս Միացեալ Նահանգների բնութիւնը։ Մեքսիկայի մեծ մասը բարձրաւանդակ է։ Թէ արևելքից և թէ արեմուտքից շրջապատւած է Կորդիլիերների լեռնաշղթաներով։ Կլիման չոր է (ինչո՞ւ), բուսականութիւնն էլ բաւական աղքատ։ Այդ բարձրաւանդակը ներկայացնում է անապատ հարթութիւններ—քարքարոտ կամ աւազոտ։ Կալիֆորնիա թերակղզին ևս բաւական չոր և անապատոյին է, որովհետեւ նրա մօտով ցուրտ հոսանք է անցնում։ Միայն Մեքսիկայի ծոցի ափերին և Խվատան թերակղզու վրայ շատ անձրի է գալիս. այստեղ աճում են արեագարձային անտառներ, որոնք սակայն առողջաբար չեն և անյարմար են մարդկային կեանքի համար։

Կորդիլիերները Մեքսիկայում հարուստ են ոսկով և մանաւանդ աղջամով։ Այս թանգագին մետաղներն էին զլիաւրապէս եւրոպացիներին դէպի Մեքսիկա գրաւողները։ Ամենից շատ Մեքսիկա գաղթեցին իսպանացիներ։ Արքանց յետնորդները, որ Ամերիկայում կը էօլ են կոչւում, կազմում են ներկայումն Մեքսիկայի աղջամով։ Ամենալավ բաժինները։ Ամենալավ Մեքսիկայի բնակիչները զլիաւրապէս հնդկացիները և մնափնտեցն ենու նրանք գրադւում են երկրագործութեամբ։ Մեքսիկայի ծոցի ափերին մշակում են սուրճի և կակաօի ծառեր։

Մեքսիկայի մետաղները և

նկ. 81. Արքայական արմաւենիներ։

Հաղկացիներն իրենց կենցաղավարութեամբ քիչ են տարբեր-
ւում կրէօններից։ Համարեա բոլորն էլ քրիստոնեայ են և խօ-
սում են իսպաններէն։ Ինակիչների ընդհանուր թիւն է 13½
միլիոն։

Կառավարութեան տեսակին նայելով՝ Մեքսիկան Միացեալ նահանգների նման հասարակապետութիւն է։ Մայրաքաղաքն է Մեքսիկօ։

Կեստրոնական Ամերիկայի Հարաւային մասում, մայր ցամաքի վրայ, գտնվում են ինքնուրոյն վեց հասարակապետութիւններ։ Նրանց մէջ ամենանշանաւորն է ՊԱՆԱՄԱՆ համանուն պարանոցի վրայ։ Այդ պարանոցի վրայ այժմ փորած է մի ջրանցք, որ միացնում է իրար հետ Ատլանտիկան և Խաղաղ ովկիանոսները։

ՎԵՍՏԻՆԴԻԱՆ (Արևմտեան Հնուկաստան) սահմանձ է՝

Մեծ Անտիկեան (Կու-
բա, Եամայկա, Հայի-
տի և Պորտօ-Ռիկօ),
Փոքր Անտիկեան և
Բահամեան կղզինե-
րից:

Մեծ-Անտիլեան կղզիները ցամաքային ծագում ունեն. Փար Անտիլեան կղզիները մեծ մասով հրաբըսային են, Բահամեան կղզիները՝ կորալլական:

Վեստ-Խնդիքի բնոււ-
թիւնը փարթամ' է: Շը-
նորհիւ մշտական տա-
քութեան և խոնաւու-
թեան՝ այնտեղ աճում
են արևագարձային ան-
տառներ: Բայց կլիման
առողջարար չէ, ամեն
տեղ տարածւած են մա-

իարիա և գեղին տեսդ հիւանդութիւնները։ Վեստ-Ինդիայի
քաղաքներն են (մօտ 5 միլ.) նեղերը եւ մուպատնեղը, որոնք
բոլորն էլ կաթոլիկ քրիստոնեաներ են։ Բնակիչների զիսաւոր
կազմունքն է երկրագործութիւնը։ Յածղբաղիր տեղերում մը-
շակում են շաքարեղեգ, բանան, ծխախոտ, իսկ սարերի և
ըլուցների լանջերին՝ սուրճի և կակաօի ծառեր։ Այս բոլորից
և մեծ քանակութեամբ արտահանւում է գէպի Միացեալ-
նահանդներ ու Եւրոպա։



Նկ. 83. Ծխախոտի տնկաբան կուբայում:

Յիշած կղզիներից Պոլտօ-Ռէկօն պատկանում է Միացեալ-
Նահանգներին, Եամայկան՝ Անգլիային, իսկ Հայիստիի վրայ
գտնուում են նեղրերի երկու անկախ հասարակապետութիւն-
ներ: Ամենաշատ բնակիչներ ունի Կուբան (մոտ 2 միլ.), որ
հասարակապետութիւն է: Նրա գլխաւոր քաղաքն է Հաւան-

Նկ. 82. Հնդ. կուլիները շաքարեղեգ ևն քաղում
Ետմայկա կղզու վրայ:

նա. նշանաւոր է ծխախոտի և շաքարի արտահանութեամբ։ Փոքր Անտիկեան կղզիները պատկանում են եւրոպական զանազան պետութիւնների։

ՀՅՐԱՒՅՑԻՆ ՍՄԵՐԻԿԸ

ՎԵՆԵՑՈՒԵԼԱ ԵՒ ԳՈՒԻԱՆԱՅ։—ՎԵՆԵԳՈՒԵԼԱՆ և Գուիանան բնութեամբ հարուստ, բայց սակաւ բնակութիւն ունեցող երկիրներ են։ Բոլոր ծովագիերը և լեռնալանջերն ու հովիտները ծածկւած են արևադարձային խիտ անտառներով։ Օրինոկօֆ դաշտավայրը ծածկւած է սաւաններով, որոնք այդտեղ լիանոս են կոչւում։ Լիանոսները շատ յարմար են անտառնապահութեան համար։

Եւրապացիներ Վենեցուելայում և Գուիանայում աւելի քիչ կան, քան Վեստ-Ինդիայում։ Բնակիչներն են գլխաւորապէս՝ մոլատներ և մետիսներ։ Լիանոսներում նրանք պահում են եղջրաւոր խոշոր կենդանիների ահազին նախիրներ, ձի, խոզ և ուրիշ ընտանի կենդանիներ։ Պարապում են նաև երկրագործութեամբ։ Նրանց դիւղերը շրջապատւած են լինում բանանի և եղիպատացորենի տնկարաններով։ Ծովագիերին մուլաները և մետիսները մշակում են սուրճ, կակա և շաքարեղեգ։ Իսկ ծովից աւելի հեռու ընկնող տեղերը համարեարութուովին անընակ են։ Գուիանայի սարերը հարուստ են ոսկով, միայն թէ շատ դժւարին է ճանապարհը դէպի սոկուհանքերը. պլատի անցնել արևադարձային խիտ անտառներով։

Պետական կազմին նայելով՝ ՎենեցՈՒԵԼԱՆ հասարակապետութիւն է. նրա մայրաքաղաքն է՝ Կարակաս։ ԳՈՒԻԱՆԱՅ բաժանւում է երեք գաղութների, որոնք պատկանում են եւրոպացիներին (անգլիացիներին, ֆրանսիացիներին և նովանդացիներին)։

ԲԲԱԶԻԼԻԱ.՝ Բրազիլիան բոնում է չար. Ամերիկայի համարեա կէսը. իր մեծութեամբ նա մի քիչ փոքր է Միացեալ Նահանգներից, բայց ունի 23 միլիոնից էլ պակաս ազգաբնակու-

թիւն։ Բրազիլիայի մեծ մասը՝ Ամազոն գետի ամբողջ աւազանը ծածկւած է արևադարձային վատառողջ անտառներով՝ սելլասներով։

Սելլասների մէջ ապրում են ընդամենը հազիւ 600 հազար հոգի. նրանք բալորն էլ վայրենի հնդկացիներ են, որոնք զբաղւում են որսորդութեամբ և ձկնորսութեամբ։

Մարդկային բնակութեան համար աւելի յարմար է Բրազիլիայի հարաւարեակելեան լեռնոտ մասը։ Այդտեղ այնչափ խոնաւ և այնչափ շող չէ, որչափ սելլասներում։ Այդտեղ է կենարոնացած Բրազիլիայի ազգաբնակութեան մեծ մասը, ոչ միայն հնդկացիները և մետիսները, այլ նաև եւրոպացի զաղթականները, — գլխաւորապէս պորտուգալացիներ և իտալացիներ։



Նկ. 84. Առուճ հաւաքելը։ — Առուճի ծառերն աճում են ուրիշ տեսք՝ բարձր, ծառերի հովանու տակ։ Նկարի ձախ կողմում, գերեւ, սուրճի ծառի ծիւղ է՝ ծաղկելով և պատղներով։

Ակզբում սպիտակներին այդտեղ գրաւողն այն գոյնզգոյն ալմատներն էին, որոնցով հարուստ են Բրազիլիայի սարերը, ուր կայ նաև սոկի։ Ներկայումս հարաբեկեան Բրազիլիայի ուր կայ նաև սոկի։

թէ սպիտակ և թէ գունամորթ բնակիչների գլխաւոր զբաղմունքն է՝ սուրճի, մասամբ նաև շաքարեղեգի, ըրնծի ու կարտոֆիլի արդիւնաբերութիւնը:

Երկրագնդի վրայ արդիւնաբերւող սուրճի կէսից աւելին ստացւում է Բրազիլիայից: Ամազոնի ափերին տեղատեղ կան մուլատների և միտիսների բնակավայրեր: Նրանք զբաղւում են զիմաւորապէս կառլումի (այսինքն ոեղինի) արտադրութեամբ: Երկրագնդի վրայ արտադրւող ոեղինի մեծ մասը ձեռք է բերւում Ամազոնի սելւաններից:

Պետական կազմին նայելով Բրազիլիան, ինչպէս նաև Ամերիկայի մնացած բոլոր երկիրները, հասարակապետութիւնն է: Նրա մայրաքաղաքն է Ռիօ-դէ-Ժանէյրօ, որ միևնույն ժամանակ նշանաւոր նաւահանգիստ է: Բրազիլիայի ամենանշանաւոր նաւահանգիստը, որտեղից շատ սուրճ է արտահանւում, կոչւում է Սանտոս:

ԼԱՊԼԱՏԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ—ԱՐԳԵՆՏԻՆԱ, ՈՒՐՈՒԳՈՒԱՅՅԻ ԵՒ ՊԱՐԱԳՈՒԱՅՅԻ:—Լապլատեան երկիրներն աւելի չափաւոր կլիմայ ունեն, քան Բրազիլիան: Արեալաքանչական անտառներին փոխարինում են սկզբում սաւաններ, իսկ հարաւային մասում սաւաններն աստիճանաբար փոխում են բարեխառն գոտու տափաստանների—պամլասների: Այդ տափաստանները ծածկւած են ցածր խոտով. Նրանք շատ արգաւանդ են և յարմար երկրագործութեան և անամսապահութեան համար:

Աւելի հարաւում պամլասները փոխում են Պատագոնիայի չոր և անպտուղ դաշտերի, որոնք խոտաւէտ չեն, ծածկւած են թփերով: Ոյդ դաշտերը յարմար չեն նոյն իսկ անամսապահութեան համար:

Լապլատեան երկիրների, յատկապէս պամլասների առողջարար կլիման և պտղաբեր հողը գրաւել են շատ զաղթականների Եւրոպայից—զիմաւորապէս իսպանացիներ և իտալացիներ: Ներկայումս այդ երկիրների ազգաբնակութեան զիմաւոր տարրը կազմում են զաղթականները և մետիսները: Զտարիւն, կիսավայրենի հնդկացիները, որոնք որսորդութեամբ և անամսապահութեամբ են պարապում, ապրում են միայն

հիւսիսում ընկնող սաւաններում, իսկ հսկաւում՝ Պատագոնիայում:

Գաղթականների և մետիսների գլխաւոր զբաղմունքն է անամսապահութիւնը և երկրագործութիւնը, որ ամենից լաւ ծաղկած են պամլասներում: Այստեղ, ուր գեռ ոչ շատ առաջափառում էին վայրենի որսորդ-հնդկացիներ, այժմ արածացնում են ահագին հօտերով ոչխարներ, եղջիւրաւոր խոշոր կենդանիներ և ծիեր: Այստեղ կան մշակւած ընդարձակ տարածութիւններ, որոնք տալիս են ցորենի ու եղիպատճորենի առաջատար հունձ:



Նկ. 85. Պատագոնիայի հնդկացիներ՝ որսի զնալիս:

Ամեն աեղ երկաթուղային գծեր են անցկացրած և գիւղեր ցցած, որոնք թաղւած են այգիների կանաչի մէջ: Կորպիլիերների ստորոտներում, սարերից վար հոսող գետերի հովիտներում, մշակում են խաղողի ընդարձակ այգիներ և շաքարեղեգի անկարաններ:

Պետական կազմին նայելով Լապլատեան երկիրնե-

Ար բաժանւում են երեք հասարակապետոթիւնների—ԱՐԴԵՆ-ՏԻՆԱ, ՈՒՐՈՒԳՈՒԱՅ և ՊԱՐԱԳՈՒԱՅ:

Արգենտինայի մայրաքաղաքն է՝ Բուենոս-Այրես (մէկ միլ. քնակիչ): Ուրուգուայի մայրաքաղաքն է՝ Մոնտեվիդէօ: Այս երկու քաղաքներն էլ գտնւում են Լապլատի գետաբերսնում և մեծ նաւահանգիստներ են: Այդ քաղաքներից Եւրոպա են արտահանում շատ մեծ քանակութեամբ ցորեն, բուրդ, միս (սառցրած և աղած), ճարպ, մորթի և այլն:

ԿՈՐԴԻԼԻԵՐԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ: —Կորդիլիերեան երկիրները տարածւում են Պանամայի պարանողից մինչև Հորդն հրտանգանը և բոնում են Հար. Ամերիկայի արևմտեան մասը, համարեա ամբողջ Կորդիլիերները կամ Անգերը: Մարդկային ընակութեան համար ամենայարժար տեղերն են բարձր հովիտները և բարձրաւանդակները, ուր կլիման առողջարար է, հողն էլ յարմար է երկրագործութեան համար. կան նաև բաւական լաւ արօտատեղեր անսամապահութեան համար:

Այդ հովիտներից և բարձրաւանդակներից վեր բարձրացող լեռնաշղթաների կատարները ծածկւած են ծիւնով, որոնց մէջ կան հանդած և գործող հրաբուխներ: Այդ լեռնագագաթներն ի հարկէ անյարմար են մարդկային ընակութեան համար:

Բնակութեան համար անյարմար են նմանապէս ծովափերը: Կորդիլիերները դէպի ովկիանոս են ձգւում այնպէս ուղղաձիգ կերպով, որ ծովափին թողնում են միայն նեղ շերտ, այն ևս ոչ ամեն տեղ: Ովկիանոսի ափին գտնւում է նոյնիսկ մի անապատ—Ատակամա, որտեղ ամբողջ տասնեակ վերստերի վրայ չէ կարելի տեսնել ոչ խոտ և ոչ էլ թուփ:

Այս բոլորի զլխաւոր պատճառն օդի չափազանց չոր վեներն է. այդ էլ առաջ է գալիս նրանից, որ այդ կողմերում ծովափի մօտով անցնում է ցուրտ հոսանք:

Չնայած այս բոլոր անյարմարութիւններին՝ Կորդիլիերեան երկիրներն են գաղթել բաւական թուզ ելքոպացիներ (զլխաւորապէս իսպանացիներ): Նրանց այնտեղ զրաւողը եղել են թանգարին մետաղները, որոնցով շատ հարուստ են Կորդիլիերները: Եւրոպացիները հպատակեցրին այնտեղ ապրող հընդ-

կացիներին, խառնւեցին սրանց հետ, և այժմ աղքաբնակութիւնը բաղկացած է զլխաւորապէս մետիսներից և մասսամբ միայն սպիտակներից, հսդկացիներից (հետաւոր լեռնում մասներում և Հրոյ երկրում), նեղբերից և մուլաներից (խոնածովափերին, հասարակածից հիւսիս):



Նկ. 86. Փշտակեան ծառերի անտառ Զիլիում:

Կորդիլիերեան երկիրներում ապրող մեափիների և սպիտակների զլխաւոր զբաղմունքներն են՝ երկրազործութիւնը և հանքագործութիւնը: Ամենաբարձր վայրերում նրանք ցանում են գարի, ցածր տեղերում՝ կարտոֆիլ (որի հայրենիքն այնտեղ է) և ցորեն: աւելի ցածրերում՝ եղիպացորեն: Ամենացածրի վագանը տեղերում, լեռնային գետակների ափերին, մըցածը և տաք տեղերում, լեռնային գետակների ափերին, մըցածը են շաքարեղեղ, բրինձ և բազմազան պտղատու ծաշակում են շաքարեղեղ, բրինձ և բազմազան պտղատու ծաշակում է զամարակածից հիւսիս ընկնող ծովափերին, բացի զրանքից: Հասարակածից հիւսիս ընկնող ծովափերին, պատճառում են յաճախ նաև կակաօի ընդարձակ տնկանից, պատճառում են յաճախ նաև կակաօի ընդարձակ տնկանից:

Կակաօի ծառն այնտեղի անտառներում աճում է նոյնիսկ վայրի

դրութեան մէջ, այս էլ այնչափ առատութեամբ, որ եթէ անտառի մը նացած բոլոր ծառերը կտրատեն, մի քանի տարւայ ընթացքում այնտեղ կգոյանայ կակաօի տնկարան:

Առաջներն այդ անտառներում պատահում էր մեծ քանակութեամբ նաև քինայի ծառ, բայց այժմ շատ փոքր քանակութեամբ է մշակւում^{**}):

Մեծ նշանակութիւն ունի Կորդիլիերեան երկիրներում նաև հանքազործութիւնը—արծաթի, ոսկու և մանաւանդ սելիտրայի^{**}) արդիւնագործութիւնը, որի ամենահարուստ հանքերը գտնւում են Կորդիլիերների ամենաչոր տեղերում, ամենից շատ՝ Ատակամայում: Սելիտրան այդտեղից արտահանւում է դէպի երկրագնդի բոլոր կողմերը:

Կառավարութեան նայելով՝ Կորդիլիերեան երկիրները բաժանւում են հինգ հասարակապետութիւնների—Կոլումբիա, Էկուադոր, Պերու, Բոլիւմա և Չիլի: Կորդիլիերեան երկիրների ամենանշանաւոր կենտրոնն է Չիլիի մայրաքաղաք Սանտ-Եազօն: Նա երկաթուղով միացած է իր նաւահանգիստ Վալպարայսօ-ի և Արգենտինայի մայրաքաղաք Բուէնոս-Այրեսի հետ:

Մնացած քաղաքներից նշանաւոր են.—Ռոգնոս՝ Կոլումբիայի մայրաքաղաքը: Գուիտօ՝ հկուադորի մայրաքաղաքը (Գուաեակիլ նաւահանգստով), Լիմա՝ Պերուի մայրաքաղաքը (Կալեա նաւահանգստով): Այս բոլոր քաղաքները գտնւում են Կորդիլիերների բարձրադիր վայրերում, որտեղ օդն աւելի առողջարար է, քան ծովագերին,

Ա Խ Ս Տ Ր Ա Լ Ի Ա

ԾԽՏՐԱԼԻԱ ՄԱՅՐ ՑԱՄԱՔԸ

ԴԻՐՔԸ, ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ:—Աւատրակիան հինգ աշխարհամասերի թւում ամենափոքրն է. նա 6 անգամ փոքր է Ասիայից: Բոլոր աշխարհամասերի մէջ միայն Աւստրալիան է, որ ամբողջապէս հարաւային կիսագնդում է գտնւում: Արևմուտքից արևելք Աւստրալիան տարածւում է 4,000 վերստ. իսկ հիւսիսից հարաւ, ամենալայն մասում՝ 3,000 վերստից մի փոքր աւելի:

Աւստրալիայի ամենահեռաւոր ծայրերն են. հիւսիսում՝ Եօրկ հրանդանը. հարաւում՝ Ուֆլոն, արևմուտքում՝ Ստիպ, իսկ արևելքում՝ Բայրոն հրանդանը:

Աւստրալիան շրջապատւած է ովկիանոսներով.—արևելքից՝ Մեծ կամ Խաղաղ, իսկ հորաւից և արևմուտքից՝ Հընդկական ովկիանոսով: Աւստրալիայի հիւսիս-արևմտեան կողմում ընկած է Մալայեան արշակելազը, որ կարծես մի կամուրջ լինի՝ ձգւած Աւստրալիայի և Ասիայի միջև: Մնացած աշխարհամասերից Աւստրալիան շատ հեռու է գտնւում:

Աւստրալիայի ափերը շատ բիչ են կտրուած, ուստի և շատ քիչ ծոցեր ու թերակղիներ կան այնտեղ. միակ նշանաւոր թերակղին է՝ Եօրկ, որ գտնւում է հիւսիսում: Հիւսիսում է գտնւում նաև Աւստրալիայի նշանաւոր երկու ծոցերից մէկը՝ Կարպենտարիա. միւսը՝ Աւստրալիական ծոցը գտնւում է հարաւում:

Աւստրալիայի շուրջը գտնւում են բարձրաթիւ կղզիներ,

*) Երկրագնդի վրայ ստացւող քինան համարեա ամբողջապէս ձեռք է բերւում հաւա կըզուց:

**) Սելիմուան մի անգոյն աղ է, որ գործ է ածւում դեղեր և պայթուցիկ նիւթեր (օբէնտիկ գուասղ) պատրաստելու համար:

սրոնք ցրւած են մեծ մասով Մեծ ովկիանոսի մէջ—մայր ցամաքից հեռու: Միայն երկու մեծ կղզիներ գտնւում են մայր ցամաքին մօտ. հիւսիսային կողմում՝ Նոր-Գուլինէան, որ մայր ցամաքից բաժանւում է Տորբէսի նեղուցով, և Տասմանիա կղզին, որ բաժանւում է մայր ցամաքից Բասսի նեղուցով:

ԱԼՍԾՐԱԼԻԱՅԻ ՀԵՑԱԶՕՑՈՒՄԸ:—Աւստրալիան գտնուել է եւրապացիների ձեռքով մեացած բոլոր աշխարհամասերից յետոյ: Առաջին անգամ Մագիլանը (1521թ.), աշխարհի շուրջը կատարած ճանապարհորդութեան միջոցին, հանդիպեց Աւստրալիային պատկանող Մարիանեան կղզիներին: Ապա եւրոպացի ծովագնացները գտան Նոր-Գուլինէան: Բայց երկար ժամանակ նրանք չէին իմանում՝ արդեօք նա մայր ցամաք է, թէ կղզի: Այս հարցը լուծեց 17-րդ դարի սկզբում խսպանացի Տորելսը, որ առաջին անգամ անցաւ այժմ իր անունով կոչող նեղուցը:

Բուն Աւստրալիական մայր ցամաքն էլ գտնւեց 17-րդ դարի սկզբում (Տորբէսից 1 տարի առաջ) հոլլանդացիների ձեռքով, որոնք և նոր մայր ցամաքը «Նոր Հոլլանդիա» կոչեցին: Հոլլանդացի Տասմանն անցաւ Աւստրալիայի շուրջը հարաւից և հանդիպեց ճանապարհին մի կղզու, որ նրա անունով Տասմանիա կոչւեց: Հոլլանդով այդ կղզին իր և հարաւային ծայրը մայր ցամաքի, Տասմանն աւելի առաջ անցաւ ծովով դէպի տրեկը ու գտաւ Նոր-Զելանդիան և ուրիշ շատ կղզիներ Մեծ ովկիանոսում:

Սակայն այս բոլոր պիտերը երկար ժամանակ եւրոպայում մնում էին անյայտ: 18-րդ դարի վերջում անգլիացի ծովագնաց Կունլո երկրդ անգամ գտաւ մայր ցամաքի արևելեան ափը: Վերջում նա երկու անգամ ևս ճանապարհորդեց Մեծ ովկիանոսով ու գտաւ Նոր-Կալիդոնիա և ուրիշ շատ կղզիներ: Այսուհետև անգլիացիները գտղթել սկսեցին գէտի Աւստրալիայի և ուսումնասիրեցին բոլոր ափերը: Միայն ներքին, անապատ տեղերը երկար ժամանակ մնում էին անյայտ: նրանք ուսումնասիրեցին 19-րդ դարում:

Աւստրալիայի կղզիներից Նոր-Գուլինէան ամենից դժւար հետազոտեց: այդ տասպարհուում շատ է աշխատել ուսւու ճանապարհորդ Միկուտ-Մակլայը, երկար ժամանակ ապրելով վայրենի պատուանիրի մէջ:

ՍԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ, ԿԼԻՄԱՆ, ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼՃԵՐԸ:— Մեծ ովկիանոսի ափերի երկայնութեամբ Աւստրալիայում ընկած են լեռնաշղթաներ: Դրանք բարձր չեն, լեռնապագաթներից և ոչ մէկը ծածկւած չէ մշտական ձիւնով: Համեմա-

տաբար բարձր են մայր ցամաքի հարաւային կողմում ընկնող լեռները: դրանք են՝ Կապոյտ լեռները և Աւստրալիական Ալպերը*): Վերջիններիս գագաթը՝ Տունակնդը՝ ընդամենը մօտ 2 վերստ բարձրութիւն ունի:

Աւստրալիայի արևմտեան մասը ներկայացնում է բարձրաւանդակ: այդտեղ քիչ վայրերում միայն բարձրանում են ցածրիկ լեռներ: Այդ բարձրաւանդակի և Աւստրալիական Ալպերի միջի տարածութիւնը կաթսայանմտն զուստրութիւն է, որի ամենացածր մասում գտնում է Էյր լիճը: սրա մակերեսոյթը օսամէն ցածր է ովկիանոսի մակերեսոյթից:

Աւստրալիայի կիման շող է: Մայր ցամաքի համարեա կէսը գտնում է արեագարձային գօտում, իսկ մնացած մասը —բարեխառն գօտում: Եւ ոլովինեան Աւստրալիան գտնում է հարաւային կիսագնդում (իսկ մեր երկիրը՝ հիւսիսային կիսագնդում), ուստի տարւայ եղանակներն այստեղ մերինին հակառակ ժամանակ են ընկնում: Ամենատաք ամիսներն են Աւստրալիայում՝ դեկտեմբեր, յունաւար և փետրւար: ամենացուրտ ամիսները՝ յունիս, յուլիս և օգոստոս: Ամառ ժամանակ Աւստրալիայում շատ շող է լինում, մանաւանդմայր ցամաքի միջին մասում: այդտեղ համարեա այնպիսի շողեր են լինում, ինչպէս Սահարայում: Զմեռն Աւստրալիայում մեղմ է անցնում: Սամնամանիքն այստեղ շատ հազւագէպ բան է: Զիւն գալիս է միայն Կապոյտ լեռների և Աւստրալիական Ալպերի գագաթների վրայ:

Տասմանիա կղզու կիման մի փոքր աւելի ցուրտ է մայր ցամաքի կիմացից: բայց այստեղ էլ ամենացուրտ ամսին՝ (յուլիս) եղանակի տաքութեան միջին աստիճանն է 8:

Մթնոլորտային տեղութեամբ Աւստրալիայում ընդհանրապէս քիչ են թափւում: Լաւ ոռոգւում են նրա ափերը միայն, այն էլ ոչ բոլորը, այլ միայն այն ափերը, որոնք ողոգւում են

*) Աւստրալիական Ալպերի գագաթները ծածկւած են խոտով, բոլոր գագաթներն էլ կարելի է բարձրանալ ձիով: զբանից ևնց երեսում է, որ նրանք շատ ել նման չեն իսկական, այսինքն եւրոպական Ալպերին, որոնք ծածկւած են մշտական ձիւնով և սառցագալառերով:

տաք հոսանքներով։ Անձրեներ բերում են այն քամիները, որոնք ամառ ժամանակ փշում են ծովից, երբ մայր ցամաքն աւելի է տաքացած լինում, քան նրան շրջապատող ծովը։

Ամենից շատ անձրև բերում են արեւելեան քամիները։ Այդ պատճառով էլ Աւստրալիայի արեւելեան ծովափում ամառն այնպիսի առատ անձրեներ են գալիս, որ յաճախ ճեղեղներ են դոյսնում։ Բայց սարերից այն կողմը կիման չորային է, անձրեներ էլ քիչ են գալիս. և որչափ արեւմուտք ենք գնում, այնչափ էլ աւելի պտկաս անձրեներ են գալիս։

Կենտրոնական և արեւմտեան Աւստրալիայում ամբողջ տարին սարսափելի երաշտներ են լինում. թէպէտ երկնքի վրայ յաճախ ամպեր են բարձրանում, փոթորիկներ են լինում, բայց և այնպէս այնտեղ էլ անձրև շատ սակաւ է գալիս—ինչպէս Սահարայում կամ Արաբիայի անապատներում։

Աւստրալիայում զետեր



Նկ. 87. Մթնոլորտային տեղումների բաշխումն Ավստրալիայում։ Աւաբները գոյց են տալիս այն քամիները, որոնք ամենից շատ մթնոլորտ տեղումներ են բերում։

թէ կան. Եղածներն էլ սակաւաջուր են։ Պատճառն ի հարկէ այն է, որ Աւստրալիայի կիման չոր է։ Ամենանշանաւոր զետեն է Մուրրէց. Չոր ժամանակ նա ովկիանոս հազիւ է հասնում, այն էլ իբրև փոքրիկ, նեղ զետակ։ Մուրրէցը շատ վտակներ ունի, որոնցից մէկը՝ Դարլինգ՝ համարեա երկու անգամ աւելի երկոյն է, քան ինքը Մուրրէցը, բայց չոր ժամանակ փոխում է բազմաթիւ չոսող լճերի։

Աւելի սակաւաջուր են Աւստրալիայի կենտրոնի զետերը, որոնք «կրիկ» են կոչում։ Նրանց տաշտը տարւայ մեծ մասը մնում է ցամաք, միայն կարճ ժամանակով, անձրեների միջոցին, նրանցով ջուր է հոսում. այդ ջուրն էլ կորչում է կամ

աւազուտներում. և կամ աղի լճերում։ Ամենաերկայն «կրիկն» է կուպեր, որ թափում է էյր լիճը։

Էներ ևս քիչ կան Աւստրալիայում, եղած լճերը համարեա բոլորն էլ աղի են. դրանց մէջ ջուր է լինում որոշ ժամանակ, — երբ կրիկները հոսում են։ Սովորաբար այդ լճերի յատակը ծածկւած է լինում կամ տիղմով և կամ չոր աղի շերտով։

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ։ — Աւստրալիայի այն մասերում, ուր շատ անձրև է գալիս, աճում են անտառներ. իսկ որտեղ սակաւ անձրև է գալիս՝ այնտեղ տարածւում են տափաստաններ և անապատներ։



Նկ. 88. Բուս. տարած. Աւստրալիայում։

Տառները խիտ չեն, ոչ էլ խճճւած են լիանոներով. բազկատառները խիտ չեն, ոչ էլ խճճւած են գլխաւորապէս էվկալիպտներից։ Այդ ծառերի տեսակցած են գլխաւորապէս էվկալիպտներից. Այդ ծառերի տեսակցած են մի քանիսն աշազին բարձրութեան են համառում (մինչև 70 սաժ.)։ Բայց ըդհանրապէս՝ էվկալիպտների անտառներն աւելի բարձր չեն, քան մայրի և կաղնի ծառերի անտառները մեջնում։

Այդ անտառներում քիչ սաւակը է լինում, ոչ ովհեան էւկալիպտները նօսր են, նրանց տերեներն էլ խիտ չեն. տերեներ լինում են լիպակի ճառագայթները թափանցում են մինչև զետին, որ խոտով Արեգակի ճառագայթները լիպակի ճառագայթների կամ ծառաէ ծածկւած լինում։ Այդ անտառները նման են պուրակների կամ ծառաէ ծածկւած լինում։ Այդ անտառների որոնց միջով կառող են շարժել:


Գետակների ափերին,
էւկալիպտների անտառ-
ների մէջ, պատահում են
ծառանման ձարխոտերի
թփուտներ:

Մեծ ովկիանոսից ա-
ւելի ու աւելի հեռանա-
լով՝ էւկալիպտների ան-
տառները սակաւանում
են և վերջապէս փոխ-
ում են խոտով ծած-
կը ած տափաստանների:
Աւելի հեռու արևմուտ-
քում, կուպեր կրիկից
այն կողմը, Աւստրա-
լիայի ընդարձակտ արա-
ծութիւններ ծածկւած
են խոտով և թփ ըով:

Աւստրալիայի ամենա-
չոր տեղերում գտնուում
են քարքարոտ կամ ա-
ւազոտ անապատներ:

Մշակովի ըրյսեր Աւստրալիայում շատ քիչ կան, իսկ մինչեւ
եւրոպացիների այնտեղ գաղթեն ամենկին չկային:


Կենդանական աջնարհն Աւստրալիայում սորուվին այլ
է, քան միւս աշխարհամասերում: Սմբակաւոր կենդանիներ,
մինչև եւրոպացիների գաղթելը, այնտեղ ամենկին չկային:
Ամենկին չկային նաև կապիկներ: Դիշակերներից կար միայն
դին գօ շունը: Ընդհանրապէս՝ Աւստրալիայում չկային այն
կենդանիներից շատերը, որոնք կան ամեն տեղ՝ միւս աշխար-
համասերում: Բայց դրա փոխարէն Աւստրալիայում շատ են
տարոծւած պլարկաւոր կենդանիները: Այսպէս են կոչում
նրանք, որովհետեւ փորի տակ պարկ ունեն, որի մէջ իրենց
ձագերին են պահում: Ամենատարածւած պլարկաւոր կենդանին



Նկ. 89. էւկալիպտներ:

է կենդուղուն, որի մի քանի տասնեակ տեսակները կան:
Մնացած կենդանիներից նշա-
նաւոր են՝ եխիդնա և բադակտուց.
թռչունների նման՝ նրանք ձու են
ածում, սակայն ձուից դուրս ե-
կած ձագուկներին կաթով են կե-
րակրում:

Աւստրալիայի անտառները և
տափաստանները լի են բազմա-
զան թռչուններով. շատ կան մա-
նաւանդ թռչակներ, որոնք մի



Նկ. 90. կենդուղուն:

քանի հազարից բազկացած
երամներով են թռչում: Ա-
րիադարձային անտառներում
յաճախ պատահում է գեղե-
ցիկ ընարանաը, տափառ-
տաններում՝ էմու ջալամը:
Ընտանի կենդանիներ մինչև
եւրոպացիների գաղթելը չկա-
յին Աւստրալիայում: Եւրո-
պացիներն այստեղ բերին ի-
րենց բոլոր ընտանի կենդա-
նիներից, որոնցից ներկա-
յումս Աւստրալիայում շատ



Նկ. 91. բնարանա:

կան, — մանաւանդ ոչխար, եղջիւրաւոր խոշոր կենդանիներ և ձի:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ: — Աւստրալիան ունի ընդամենք 5 միլիոն ընակիչ:

Համեմատաքար իսկոտ բնակութիւն ունի միայն արեւելեան մասը, որ յարմար է երկրագործութեան և առանցքուծութեան համար: Այլտեղ է ապրում Աւստրալիայի ամրող ազգաբնակութեան՝ $\frac{1}{5}$ մասը. չոր տափաստաններն անմարդաբնակ են համարեա այնպէս, ինչպէս անտպատճերը:

Ազգաբնակութեան ամենամեծ մասը պատկանում է սպիտակ ցեղին և բաղկացած է եւրոպացի գաղթականներից՝ գրլշաւորապէս անպիացիներից: Դրանք տիրել են ամրող Աւստրալիային և ապրում են գլխաւորապէս նրա ամենաբերբի մասերում:

Իսկ Աւստրալիայի բնիկները կամ աւստրալիացիները — սեւ ցեղին պատկանող վայրենիներ — կամ բնաջինջ են արւել և կամ քշել են դէպի ամենատամայի վայրերը: Ներկայումս ու աւստրալիացիների թիւը հաշւում են 200 հազար:


ԱԽՏՏՐԱԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ: — Աւստրալիա մայր ցամաքի վրայ գտնւում են անպիական 5 գաղտներ. զբանք են՝ Վիկտորիա, Նոր Հարաւային Ռելի, Քլինտէնդ, Հարաւային Աւստրալիա (Հիւս. և Ալեքսանդրա երկր. հետք) և Արմամանան Աւստրալիա: Տասմանիայի հետ միասին՝ այդ գաղութները կազմում են «Աւստրալիական դաշնակցութիւնը»: Թէպէտ երկրի կտոռավարութեան գլուխն է անդիւական ընդհանուր նահանգապետը, բայց իրօք դաշնակցութիւնը համարեա անկախ է և կտոռավարում է իր երկրի ժողովրդական ներկայացուցիչների ժողովի (ընդհանուր պարլամենտի) կողմից հրատարակող օրէնքներով:

Դրա հետ միաժամանակ՝ ամեն մի գաղութ ունի — ինչպէս Հիւս. Ամեր. Մ. Նահանգներում — իր տառնձին կառավարութիւնը, իր օրէնքները և նահանգապետը, որ նշանակում է Անդիւայի թագաւորի կողմից:


Ամենից շատ բնակիչներ ունի ամենափոքր գաղութը

— Վիկտորիան, ապա՝ Նոր Հար. Ռելի և Քլինտէնդի: Այդ գաղութներում ամենից շատ գարգացած են՝ երկրագործութիւնը, անասնաբուծութիւնը և հանքագործութիւնը: Այստեղ շատ աճում են ցորեն և եղիպտացորեն, արածում են ահագին հօտերով՝ ոչխարներ, եղջիւրաւոր կենդանիներ և ձիեր:

Աւստրալիական շատ անասնաբոյներ (ոկւտատերներ) ունեն տասնեակ և նոյն իսկ հարիւր-հազարներով անասուններ: Այդպիսի անասնաբոյների ազարակները կարծէք ամբողջ գիւղեր լինեն: Բացի բնակութեան համար յատկացրած տներից այդտեղ կան նաև մեծ շէնքեր՝ բուրդ, կաշի և նման բաներ պահելու համար: Շատ ազարակների մօտ վորւած են արտէզեան ջրհոր ներ: Իբրև հովիւ ծառայում են սովորաբար կիսավայրենի աւստրալիացիները: Անասնապահութեանը և երկրագործութեանը մեծ վեաներ է հասցնում ձագարը, որ այդտեղ բերել են իրենք եւրոպացիները: Այժմ



Նկ. 92. Աւստ. և Անգլ. համեմատ. մեծութիւնը:



Նկ. 93. Ավտէզիան ջրհոր:

այնչափ շատ են բազմացել այդ կենդանիները, որ ոչնչացնում են արտերը և արօտառեղերը. շատ են մասսաները՝


Աւստրալիայի սարերը հարուստ են ոսկով, որի արտադրութեամբ աւստրալիական գաղութները մրցում են նոյնիսկ Միացեալ-Նահանգների հետ։ Բացի ոսկուց՝ Աւստրալիան հարուստ է նաև արծաթով և քարածուխով։

Գործարաններ Աւստրալիայում քիչ կան. գործարանացին արտադրութիւնների մեծ մասը եւրոպայից ու Ամերիկայից է բերում այդտեղ: Բայց դրա փոխարքէն՝ Աւստրալիայի տնտեսութիւնը մեծ է: Աշտաճանում են՝ ոսկի, բուրդ, մորթի, ցորեն, միս, իւղ, նաև ձի և այլ անասուններ:

Աւատրաբիայի գաղթաբնակները ձեսնարկող ոգի ունեն,
կըթւած ժողովուրդ են: Նրանք անց են կացրել Աւատրալիայի
արևելեան մասում բազմաթիւ երկաթուղային զծեր, չոր վայ-
րերում շինել են ջրամբարներ, արտէցեան ջրհորներ և ար-
ւեստական ճանապարհով ոռոգել են երկիրը: Իրենց կըթու-
թեամբ նրանք մի փոքր միայն յետ են մնում ամերիկացինե-
րից, —ունեն բազմաթիւ և բազմասեսակ դպրոցներ, ճրատա-
րակում են բազմաթիւ գրքեր, լրագիրներ և հանդէսներ:

Աւստրալիայի ամենամեծ քաղաքները և նշանաւոր նաև հանգիստներն են. — Մելբուրն՝ վիկտորիայում (500,000 բնակիչ), Սիդնէյ՝ Նոր Հար. Ավելասում (500,000 բնակիչ) և Պորտ-Ազելայիդայ՝ Հար. Աւստրալիայում (160,000 բնակիչ). Այդ երեք քաղաքներում, նաև Տասմանիայի Հոբարտ քաղաքում, կան համալսարաններ:

Աւատրալիայի
Բնիկները կամ սեւ
աւատրալիացիներն
ունեն սի, ալիքա-
ման մազեր. խիտ
մազով է ծածկւած
ոչ միայն նրանց
լուսը, այլև և ամ-
ողջ մարմինը: Նը
անց միքուքն էլ
սու խիտ է լինում.
աշու գոյնը մոյզ-
սականակառյն է,



Ակ. 94. Փողաց Մելքոնյան քաղաքութեա

Համարեաս սկ: Աւտորալիացիների ձեռները և ոտաները թոյլ են, նրանց
տեսողութիւնը և լսողութիւնը՝ շատ սուր: Իրենց մտաւոր զարգաց-
մամբ աւտորալիացիները շատ ցածր են նեղըերից: Նրանք երկրա-
գընդի ամենավայրենի ժողովուրդներից են: Կրակ ձեռքը բերելու համար
վերցնում են երկու կառոր չոր փայտ ու շփում իրար այնչափ,
մինչև որ կրակ դուրս գայ:



Նկ. 95. Աւատրալիսցիներ:—Թարմ աերևներով ժամկւած և իրապ կապած փայտերը նկրկայացնում են նրանց վրանից:—Թարով ցորեն են ծեծում, —Շփելով իրակ են ստանում:—Զէսքեր:—Սպանած կենդուրու:

Սև աւստրալիացիները մեծ մասով մինչև օրս էլ անց են կաց-
նում թափառաշրջիկ որսորդների կեանք՝ արեալարձային անտառնե-
րում կենցուրու և ուղիղ որս փնտրելով։ Յաճախ որս չգտնելով՝ նրանք
ուսում են սողուններ, օձեր և այլն. երբեմն ուսում են նոյնիսկ մար-
դու զիակ։ Ապրում են քարայրերում կամ ծառի ճիւղերից շինած
վրաններում։ Վայրենիների թիւն Աւստրալիայում հետզհետէ պակա-
սում է, — մասամբ այն պատճառով, որ նրանց աւելի ու աւելի են ճն-
շում սպիտակները. մասամբ էլ նրա համար, որ նրանց մէջ գոյութիւն
ունի մտնկասպանութեան սովորութիւնը. — թափառաշրջիկ կեանք վա-

բելով՝ նրանց համար դժւար է երեխաներին հետները տանել տեղից աեղ ուստի և յաճախ սպանում են նրանց:

Համարեա բոլոր սև աւստրալիագինները կոպածութ էն.

ԱԽՏՐԱԼԻԱՅԻ ԿՊ. ՁԵՐԸՐԸ

ԲՆՈՒԹԻՒՆԸ.—Աւոտրակիային են պատկանում բազմաթիւ կղզիներ. նրանք բոլորը միասին առաջ՝ կոչւում են Ովկիանիա:

Այդ կղզիներից քչերը միայն գտնվում են մայր ցամաքին մօտ. մեամանութիւնը ցրւած է մայր ցամաքից շատ հեռու։ Մեծ ովկիանոսի մէջ, ուստի և այդ կղզիների բնութիւնը շատ է տարբերում մայր ցամաքի բնութիւնից։ Կըդզիներն ընկած են խումբ-խումբ։ Նրանց մեծ մասը ձգւած է հիւսիս-արևմուտքից հարաւ-արևելք։ Շատերի վրայ գտնվում են հանգած և գործող հրաբուխներ։ Աւստրալիայի բոլոր կրդզիները բաժանվում են երեք խմբի։ 1) Մելանեզիա, որ բարկացած է ցամաքային կղզիներից և ընկնում է Աւստրալիայի հիւսիս-արևելեան կողմում։ այդ կղզիներն են—Նորվուխնէա, Բիսմարկի արշիպելագ, Սողոմոնի կղզիներ, Նորչերլիդեան, Նոր-Կալեդոնիա և Ֆիջի։—2) Նոր-Զելանդիա, որ բաղկացած է երկու մեծ կղզիներից 3) Պոլինեզիա։ այսպէս կոչւում են մնացած բազմաթիւ կղզիները։

Ամենամեծ կղզիներն են այդ բոլորի թւում՝ Նոր-Գուինէան (իր մեծութեամբ երկրորդ կղզին երկրագնդի վրայ), Նոր-Զելանդիան և Նոր-Կալիբրոնիան։ Մնացած կղզիները շատ փոքր են և տամնեակներով կամ հարիւրներով միասին կղզիների մի խումբ են կազմում։

Աւատրակիայի կղզիների մեծամասնութիւնը կորալլական ծագում ունի. օրինակ՝ Կարույրինեան, Մարշական և այլ կղզիներ:

Հրաբխային ծագում ունեն օր. Պոլիսնեղիա, ի հատկեալ կզզիները.
— Սանդուիշեան կամ Հաւայի, Բնկերութեան Սամօա. նաև Նոր-
Զելանդիայի հետո. միծ կրցին:

Նոր-Զելանդիայի հարաւային կղզին, նաև Նոր-Կալիֆոռնիան, Նոր-Գուինչան և Մելանզեղիայի շատ կղզիներ ցամաքային ծագում ունեն: Գույքինչան և Մելանզեղիայի շատ կղզիներ ցամաքային ծագում ունեն:

Օվկիանիայի կւի ման համարեա առես տղի պատօսէց
ձային է, բայց ոչ շոգ, որովհետև հսկայական ովկիանոսը զո-
վացնում է օղը. Օվկիանիայի պիխաւոր քամիներն են պատ-
սատները, որոնք ամբողջ տարին անընդհատ փչում են: Նրանք
շատ մեծ քանակութեամբ մթնոլորտային տեղումներ չեն բե-
րում. բայց բերածն էլ բաւականաչափ է:

Բուսական և կենդանական աշխարհում
Ովկիանիայի արևմուտքում բաւական հարուստ են, բայց քա-
նի արեելք են զնում, այնքան էլ նրանք աղքատանում են:
Նոր Գունէայի վրայ աճում են արևադարձային անտառներ,
այդտեղ ապրում են շատ կենդանիներ, մանաւանդ պարկաւորներ
և բազմազան թռչուններ: Նոր Զելանդիան ծածկւած է մեր-
ձարեադարձային մշատագլար անտառներով, բայց կենդանի-
ներ քիչ կան այստեղ: Ովկիանոսի մէջ ցրիւ ընկած կղզիների
վրայ վայրի աճող բոյսեր համարեա չկան, կենդանական աշ-
խարհն էլ չափազանց աղքատ է:

Մարտ Տեղ է ունեցել առաջին հարուստ է ովզաբարձր այդտեղ է կոկոսեան արմաւենու հայրենիքը, որ մինչև այժմ էլ տեղ տեղ աճում է վայրի գրութեան մէջ։

Հնտանի կենդանիներից, մինչև եւրոպացըսուր գոյն և
Ովկիանիայի բնակիչներին ծառայում էին սիմիայն հաւը,
շունը և խոզը, այն էլ ոչ բոլոր կղզիների վրայ։ Եւրոպացի-
ներն Ովկիանիա փոխադրեցին իրենց ընտանի բոլոր կենդա-
նիներից, առանձնապէս շատ կան ընտանի կենդանիներ նոր-
գեանուի արօտատեղերում։

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԱՅՈՒԹՆԵՐԸ:—Ավկանութայի պարբերութեակութիւնը բազկացած է երեք՝ սեւ, ղեղին և սպիտակ գեղերից: Սև ցեղին են պատկանում աւստրալիացիներին ցե-

Դակից պապուասները կամ մելանեզիացիները, Նրանք ապրում են Մելանեզիա և ուրիշ կղղիներում։ Դեղին ցեղին պատկանում են մալայցիներին ցեղակից սլովինեզիացիները, որոնք ապրում են Հնկերութեան, և ովկիանոսում ցըւած ուրիշ մանր կղղիներում։ Սպիտակ ցեղին պատկանում են Եւրոպայից գաղթածները։ Նրանք իրենց ձեռքն են զցել ամբողջ Ովկիանիան, բայց պազաբնակութեան խոշոր աշ�ը կազմում են նրանք միայն Նոր-Զելանդիայում։ Իրենց կենցաղավարութեամբ պատուասները և պոլինեզիացիները համարեա ոչնչով չեն տարրերուում իրարից։ Նրանց զլիաւոր դրադունքն է երկրագործութիւնը. մշակում են կոկոսի արմաւենի, հացի ծառ և զանազան արմատք։ Մեծ նշանակութիւն ունի նրանց համար դեռ ևս ձկնորսութիւնը։ Մեծ Ովկիանուը հարուստ է ձկնով, ծովային խեցեաիններով, կրիայով և այլն. այս բոլորից կղղիների բնակիչները շատ են որսում։ Նրանք շնորհալի ծովագնացներ են և իրենց նաւակներով յանախ հեռաւոր տեղեր են գնում։

Հաւայի կղղիների վրայ, ուր շատ չինացիներ և եապոնացիներ կան գաղթուծ, դաշտերը ծածկուած են բրնձի և շաքարեղեգի տնկարաններով։

Նոր-Զելանդիայում եւրոպացի գաղթականների զլիաւոր դրադունքները նոյնն են, ինչ որ մայր ցամաքի վրայ—անասնաբուծութիւն, երկրագործութիւն և հանքագործութիւն։ Նոր-Զելանդիայի արօտատեղերում արածում են շատ միլիոններով ոչխար և եղջիւբաւոր խոշոր կենդանիներ։ Դաշտերում շատ լաւ տառում են ցորեն և եղիպացորեն։ Սարերը հարուստ են ոսկով և քարածուխով։

Ովկիանիայի բոլոր գաղութների մէջ ամենանշանաւորը



Նկ. 96. Պապուաս։

Նոր-Զելանդիան է, 100 տարի առաջ այնտեղ ապրում էին մարդակերներ, իսկ այժմ նրանց տեղում ապրում են կրթւած և աշխատասէր մարդիկ (թւով մօտ 800 հազար), որոնք շատ բանում ամերիկացիներին են նման (ծագումով նրանք ևս, զլիաւորպէս, անզլիացիներ են)։ Ամբողջ Նոր-Զելանդիան ծածկուած է այժմ երկաթուղային ճանապարհների ցանցով։ Նրա ափերի երկայնութեամբ երթեեկում են բազմաթիւ շոգենաւոր է՝ Ռեէլինգտոն, որ գանուում է Նոր Զելանդիայի հիւս. կղզու վրայ, Թէպէտ Նոր Զելանդիան անզլիացիներին է պատկանում, բայց նա համարեա անկախ է, կառավարւում է իր սեփական պարլամենտով, որտեղ ժողովրդից ընտրւած ներկայացուցիչներն օրէնքներ են մշակում և հրատարակում իրենց երկրի համար։

Տեղացի բնակիչները, որ մաօրի են կոչւում, այժմ քիչ են թւով (մօտ 40 հազար)։ Նրանք մալայեան ցեղին են պատկանում և ընդունակ ժողովուրդ են։ Բոլորն էլ բողոքականքրիստոնեաներ են և ունեն նոյն իրաւունքները, ինչ եւրոպացի գաղթականները։ Նրանց կենցաղավարութիւնը համարեա նոյնն է, ինչ սպիտակներինը։

Նոր-Գուլինէա ընդուրծակ կղղին համարեա ոչ մի նշանակութիւն չունի եւրոպացիների համար։ Գաղութներ հաստատելու համար նա անպէտք է, որովհետեւ վատառողջ կիմայ ունի. առևտուրի համար էլ այդ կղղին կարեւոր նշանակութիւն չունի, որովհետեւ այդտեղ բնակւող պատուասները շատ աղքատ են։

Չայայիլով այս բանին կղղին բաժանւած է եւրոպական երեք տէրութիւնների մէջ.՝ արևմտահան մասը պատկանում է Հավանագիտին, հարաւարեկելեան մասը՝ Անգլիային, Վիլհելմ կայսեր երկիրը (հարկան Բրոմարկի-արշիպելացի հետ)։ Գերւանիային։

Նոր-Կալեգոնիան ունի աւելի զով և միանգամայն առողջարար կիմայ. բացի գրանից՝ նա հարուստ է մետաղահանքերով, մանաւտնդ նիկելով։ Այդ կղղին պատկանում է

Քրանսիացիներին և նրանց համար ծառայում է իբր արտ-
րավայր :

Մսացած կղզիներից աւելի նշանաւոր են՝ Հաւայի
կղզիները, որոնք պատկանում են Հիւս. Ամ. Միացեալ Նա-
հանգներին։ Այդ կղզիների վրայ արդիւնաբերում է շատ
շաքար։ Հոնոլուլու վկասոր նաւահանգիստը ծառայում է
իբր կայան՝ Հիւս. Ամերիկայից Սովա և Աւստրալիա կամ հա-
կառակ ուղղութեամբ երթեեկող նաւերի համար։

Ատլանտիան և Հնդկական ովկիանոսների հարաւային մա-
սերում ևս ցրւած են առանձնացած փոքրիկ կղզիներ։ Այդ
կղզիները համարեա բոլորն էլ հրաբխային ծագում ունեն,
անընակ են. միայն ձկնորսներ են գնում այդ կղզիները՝ կետ
ձուկ որսալու համար։ Աւելի ևս հեռու, հարաւային բնեռային
քջանակից այն կողմը, տարածւում է մի ընդարձակ ցամաք.
Դա Հարաւային Բևեռային մայր ցամաքն է. Այդ մայր ցամաքն
ուսումնասիրելը շատ գժւար է, որովհետև նրա ափե-
րըն ուղղաձիգ են, յաճախ նման են բարձր, ստոցէ ուղղա-
ճայեաց պատնէշների։ Այդ սաոցէ պատնէշները կազմում են
վերջաւորութիւնն այն հսկայական սառցակոյտերի, որոնցով
ծածկւած է այդ ամբողջ երկիրը, այնպէս, ինչպէս Գրենլան-
դիան։




ԲԱՎԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ա.ՍԻԱ. 3—72: Ընդհ. նկարագրութիւն 3—23: Փ. Սուխա և Հա-
սատան 24—27: Միջագետք 27—28: Արարիա 28—31: Ասորիք և Պա-
զեստին 31—34: Իրան 34—39: Խիւա և Բուխարա 39: Տիբետ 40—42:
Արևել. Թուրքեատան 42: Մոնղոլիա 42—44: Հնդկաստան 45—51:
Հնդկաչին 51—53: Մալայեան արշ. 53—55: Չինաստան 56—65: Եա-
պոնիա 65—72:

II. ԱֆրիկԱ. 73—103: Ընդհ. նկարագրութիւն 73—86: Եղիպտոս
86—90: Ատլասի երկիրներ 90—94: Հարէշստան 94—96: Սաւանների
և արևադարձ. անտառ. շրջան 96—99: Եւրոպ. գողութները նոյն շրջ.
99—100: Հար. Աֆրիկա 100—103:

III. ԱՄԵՐԻԿԱ. 104—142: Ընդհ. նկարագրութիւն 104—119:
Հիւս. Ամերիկա:—Գրենլանդիա և Հիւս. Ամեր. արշ. 120—121: Կանա-
դա և Ալեասկա 121—124: Մ.-Նահանգներ 124—132: Մեքոնիկա և
Վ. Հնդիա 132—136:—Հար. Ամերիկա:—Վենեց. և Գուինա 136: Բրա-
զիլիա 136—138: Լասլ. ա. երկ. 138—140: Կորդիլ. երկ. (Կոլումբիա,
Էկուադոր, Պերու, Բոլիվիա և Չիլի) 140—142:

IV. ԱԻՍՏՐԱԼԻԱ. 143—158: Աւստրալ. մայր ցամաքը 143—154:
Աւստրալ. կղզիները 154—158:





Դաստիարակության մեջ պահանջվում է առաջարկ գրականության

20485

ԱՐՏՈՒՐԻ ԱԿԵՐՎ ԾԱՀԱ

L'IMMIGRATION

ԱՃԻՄԻ ՀԿՐՈՒԹԵԱՆ ԽԱԿԴՐՈՒԹԵԱՆ

Գումանեալ, քարհղբություն եւ, բազմագիտ նկարածու

ՏԱՐԱԾԱԿՆԵՐ ԿԱՍՏԵԼՈՒՅ.: Մրրոր և շուրջը տարայ զաւըմաց
Համաձայն հայոց զարգացման ծրագրի: Հարուստ ազգագույքի համար է առ կազմ
2000 ՇԽԱՔՏԱՄԱՍԻՄԱՅԻՐ.: Ասիս, Աֆրիկա, Ամերիկա և Աստղալիքան:
Հինգիրորդ տարայ դասընթաց: Առօսուց այդպատճենն օգոստ և հունվար
ԵՐԵՎԱՆ. Գյուղերորդ տարայ դասընթաց: Երեսուց այսպէս: Դիմում և պարագաներ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԾԽԱԲՀԱՅԻ ՊԻՋԱՎՈՐԻ ՎԻՃԱՎԻԴԻ Ե.: Այլուրորդ տարայ զաւըմաց
պրակտիկ: Երեսուց այսպատճենն օգոստ և հունվար

Հայութագիտական Առաջնաբարեկայի պատմութեան հայութագիտական թեան մասնաւուն ծերեց գ. Դիմն է 20 լուր.

Նոյն կապերով, խօս. և հրամ. լուս շնոր (բայ կիբէի և Օս. ո.)

ՀԱՅԵՐԸ ԵՎ ԽԱՉԿԱՐԸ, ԱՌԵՎԱՆԻ ԵՒ ԳՈՒՄԱՑՊ

ՔՐԵԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ

Եր ՀԱՅԻ ՔՈՅ, ՃՐԿԻՐՆԵՐԻ

(ԵՐԵՎԱՆԻ ՏԵՂ, ՏԵՂԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՏՎԱԼԱԿԵՐ)

“*Die rechte Macht ist die Macht des Rechts*”

Մամիկոնյան է Կոմիտասի ջնշան հումք թշնամութեան

ՀՅՈՒԱՆԴՐԱԿԱՆ (Հայերն)

ՄԱՐԱՏԻ ԿՈՎՈՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Հայոց պատմութեան համար

Առաջին է մեզ ուշով ուրախ և հայութ է մասն ուրախ քայլ կազմը
առաջին է 1. Կատարեր, 2. երրորդ, 3. չորրեր, 4. Աղքարեա, 5. Հինգ և 6. Շինուած

Հայուսութեան Ապօք քարտեզը ցը Եւ վարչականին Ան-
գործ Արքերի պահուածք Թիֆլիսի Պարբեր պահուածք
ամենա հասցեն Թիֆլիս, Ներքին հան ռազմա-
ժողով Սեմինարիա, և. Անդրեան

91(075)

16-13